



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra



Save the Children
USA

Swiss Agency for Development
and Cooperation SDC



Մանկական դաճմվածքների ժողովածու

Երևան 2008

Երաշխավորված է ՀՀ կրթության և
գիտության նախարարության կրթության
ազգային ինստիտուտի կողմից



Բերնարդինե Սարգսյան



Մանկական դասնվածների ժողովածու



«Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյսն ինկ.»
Հայաստանյան մասնաճյուղ
Երևան 2008

ՀՏԳ-882 - 93 Սարգսյան
ԳՄԴ-84Ռ - 4
Ս 259

Թարգմանիչ՝ Նունե Թորոսյան

Սարգսյան Բերնարդինե
Ս 259 Մանկական պատմվածքների ժողովածու /Բերնարդինե Սարգսյան.-
Եր.: «Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշն ինկ.» Հայաստանյան մասնաճյուղ,
2008. 178 էջ

Պատմվածքները մշակվել են 3 երկրների (Չայաստան, Վրաստան, Ադրբեջան) հեղինակների կողմից՝ ռուսերեն գրված սցենարների հիման վրա: Դրանք մշակել և ավարտուն տեսքի է բերել Բ.Սարգսյանը: Պատմվածքները բխում են «Երեխաներին հանդուրժողականության ուսուցման ծրագրի» 12 թեմաներից:

Գիրքը նախատեսված է 5 -11 տարեկան երեխաների համար:

*Գիրքը տրվում է դպրոցներին անվճար:
Վաճառքի ենթակա չէ:*



Մեր բազի դասնորթունը

Ըստ **Արզու Սուբանի** համանուն սցենարի, Ադրբեջան
Թեմա՝ **Համագործակցություն**

Ամառային արձակուրդն սկսվել էր: Երեխաները բակ էին իջել ու Ծառի տակ հավաքված՝ չգիտեին՝ ինչ մտածեն, որ ժամանակը հետաքրքիր անցնի: Լուսինեն խորասուզված գիրք էր կարդում:

- Ի՞նչ ես կարդում,- նրա ուսի վրայով նայելով՝ հետաքրքրվեց Կոկոն:

- Հին աշխարհի առասպելները, - պատասխանեց Լուսինեն:

- Հա՛,- ասաց Կոկոն,- հին ժամանակներ...: Ո՞նց չէ, հիշում եմ: Հիշում եմ, որովհետև ես էլ եմ կարդացել: Գիտե՞ս՝ ինչ հետաքրքիր գիրք էր. գունավոր նկարներով...

- Իմացա,- տեղից վեր ցատկելով՝ ոգևորված բացականչեց Անին,- եկեք մեր բակի մասին գիրք գրենք:

- Ու՛խ, ապրես,- հավանություն տվեց Կոկոն,- մեր բակի պատմությունը կգրենք, թե ինչ հետաքրքիր բաներ են կատարվել: Թե չէ՝ մեկ էլ տեսար՝ տարիների կանցնեն, ու ոչ ոք չի հիշի, թե ինչ լավ մարդիկ էին ապրում, ինչ հնարամիտ թռչուններ, Քույուն...: Հենց ես էլ կգրեմ, էլ ի՞նչ ենք երկար-բարակ մտածում:

Որոշումը կայացրած համարելով՝ Կոկոն սկսեց պոչից մի հարմար փետուր ընտրել, որ պոկի, որպես գրիչ օգտագործի:

- Իզուր մի՛ չարչարվիր,- մեջ ընկավ Տիգրանը,- ավելի լավ է՝ թողնես՝ գիրքը ես գրեմ: Մեր բակում մի պատմություն կա՞, որ ես մեջը խառնված չլինեմ, ուրեմն՝ իմ հիշողություններն ամենաշատն են:

- Էդ էր պակաս,- վրդովվեց Անին,- առաջինն ո՞վ մտածեց գիրք գրելու մասին: Ով որ մտածել է, նա էլ գիրքը կգրի:

- Կարելի՞ է, մի քիչ էլ ես գրեմ,- կամացուկ խնդրեց Լուսինեն,- գունե կես էջ: Հա՞:

- Չէ՛,- կտրուկ պատասխանեց Կոկոն,- դեռ փոքր ես, ի՞նչ ես հիշում, որ ինչ էլ գրես: Կմեծանաս՝ կտեսնենք:

-Կարո՞ղ եմ մի բան էլ ես առաջարկել,- անսպասելիորեն միջամտեց Ծառը:- Ես մեր բակի ամենահին բնակիչն եմ: Գիտե՞ք՝ ինչե՛ր եմ հիշում...: Չեր ծնողներին էլ եմ հիշում, երբ դեռ ձեզ պես վազվզում էին իմ ստվերի տակ: Դրա համար էլ թողեք՝ ես գրեմ:

- Իսկ որ դուք գիշերները մուշ-մուշ քնած եք ու ոչինչ չեք տեսնու՛մ,-

առարկեց Քուչոն: - Ավելի ճիշտ կլինի, եթե համաձայնվեք ու գործն ինձ թողնեք:

Պարզվեց՝ բոլորն էլ ուզում են, որ գիրքը հենց իրենք գրեն, և ամեն մեկն էլ մի բան գիտի, որ մյուսները չգիտեն: Սկսեցին վիճել ու ոչ մի կերպ համաձայնության չէին գալիս:

- Չէ՛, վեճով գործն առաջ չի գնա,- վերջապես ասաց Ծառը: Նա իսկապես շատ իմաստուն էր: - Պիտի փորձենք մի ելք գտնել: Բայց ո՞նց:

- Ես գիտեմ,- առաջարկեց Գրիգորը,- եկեք վիճակ զգենք: Մենք քանի՞ հոգի ենք: Այդքան էլ թղթի թերթիկներ վերցնենք, մեկի վրա գրենք «գիրք», իսկ մյուսները մաքուր թողնենք:

- Հետո՞, - հետաքրքրվեցին ընկերները:

- Հետո թղթերը կծալենք ու կլցնենք գլխարկիս մեջ: Ամեն մեկը մի հատ կքաշի: Ով գրած թերթիկը քաշի, նա էլ գիրքը կգրի:

Գրիգորի առաջարկը բոլորին դուր եկավ, ու երեխաները գործի անցան:

Երբ ծավված թերթիկները գլխարկի մեջ էին, Ծառը հանդիսավոր ձայնով հայտարարեց.

- Բարեկամներ, սկսում ենք վիճակահանությունը:

Շուտով ամեն մեկը մի թերթիկ ձեռքին՝ հերթով սկսեցին բացել: Առաջինը Ծառը բացեց:

- Ափսո՛ս,- սուսափեց Ծառը,- իմը փուչ դուրս եկավ: Ուրեմն՝ գրքում հիշողություններս չեն լինի:

- Իմ թուղթն էլ է դատարկ,- հիասթափված՝ դատարկ թուղթը գրպանը դնելով՝ ասաց Լուսինեն:

Հաջորդը Տիգրանի հերթն էր, բայց նրա թուղթն էլ դատարկ դուրս եկավ:

- Ի՛նչ վատ ստացվեց,- դժգոհ բացականչեց նա, - հիմա ոչ ոք չի իմանա, թե ինչքան հետաքրքիր խաղեր եմ հորինել:

- Այ քեզ բա՛ն,- զարմացավ Անին, որն արդեն համարյա համոզված էր, թե իր բախտն է բերելու,- իմն էլ է փուչ:

- Տեսա՞ք: Որ ասում էի՛: Գիրքը ես եմ գրելու,- ինքնագոհ տեսքով հայտարարեց Կոկոն ու բացեց թուղթը: Նրա թուղթն էլ դատարկ դուրս եկավ:

- Ոչի՛նչ չեմ հասկանում: Լուսինե՛, ճիշտ ասա, երևի տառերը մո-

ռացել էիր ու ոչ մի թերթիկի վրա ոչինչ չես գրել,- թուղթը շուռումուռ տալով, խիստ ձայնով բացականչեց Կոկոն:

Բայց Քուչոն Լուսինեին օգնության հասավ:

-Ոչ մի բան էլ չի մոռացել, սխալվում ես, - առարկեց Քուչոն ու ձեռքի թուղթը Կոկոյին պարզեց: Թղթի վրա չաղլիկ տպատառերով հստակ գրված էր՝ ԳԻԲԶ:

- Գիրքը ես եմ գրելու,- հպարտ-հպարտ ասաց Քուչոն, ու աչքերը փայլեցին:

- Է՛հ, բախտդ բերեց,- ափսոսանքով հոգոց հանեց Կոկոն ու Քուչոյին խնդրեց, որ գոնե գրելիս իր պատմություններից էլ մի երկուսը հիշի:

- Չմոռանաս փաստերը ճիշտ հերթականությամբ թվարկել. ինչքան չլինի՝ պատմություն է,- հուշեց Ծառը:

- Ու անպայման նկարներ էլ թող լինեն: Նկարներով ավելի հետաքրքիր է, - խորհուրդ տվեց Անին:

Քուչոն շվարեց:

- Այդքանը մենակ ո՞նց անեն,- անհանգստացավ նա:

- Ինքդ չուզեցի՞ր, որ գիրքը դու գրես: Էլ ի՞նչ ես բողոքում,- զարմացավ Տիգրանը:

- Հա,- գլուխը կախեց Քուչոն,- ես կարծում էի, թե ոտանավորներ կգրեն մեր բակի մասին, բայց չգիտեի, որ հիշողություններ էլ եմ գրելու: Իսկ նկարել բոլորովին չեմ կարողանում:

- Ինձ լսեք,- խոսեց Ծառը,- լավ կլիներ՝ միասին գրեինք՝ համագործակցելով:

- «Հա-մա-գոր-ծակ-ցել» նշանակում է ընկերովի աշխատել,- բացատրեց Անին՝ երկար բառը վանկ-վանկ ասելով, որ Լուսինեն լավ հիշի,- Ծառը ասում է, որ առանձին-առանձին գործ անելն ավելի դժվար է, քան միասին:

- Ես Ծառի պատմածները գրի կառնեն,- առաջարկեց Գրիգորը,- իմ ձեռագիրը լավն է:

- Կարելի՞ է՝ ես էլ քեզ օգնեմ, - խնդրեց Լուսինեն,- ես արդեն շատ վարժ եմ գրում, ազնիվ խոսք:

- Ուրեմն՝ Ծառն ու Կոկոն կպատմեն, Քուչոն ոտանավորներ կհորինի, Լուսոն ու Գրիգորը կգրեն, Տիգրանը կնկարի, ես էլ վերջում կստուգեմ, որ հանկարծ սխալներ չլինեն,- ի մի բերեց Անին: - Ա՛յ թե

հրաշալի գիրք կատացվի: Վերնագիրն էլ կլինի «Մեր բակի պատմությունը. հեղինակներ՝ բոլոր բնակիչները»:


Երեխաներն իրենց որոշումից գոհ՝ ուրախ ծափ տվեցին, իսկ Քուչոն հայտարարեց.

- Ես արդեն նախաբան եմ հորինել: Կարդամ՝ լսեք.

*Մի գիրք գրենք միասին
Մեր ընկերության մասին,
Թող բոլորը իմանան
Ու մեզանով հիանան:*

- Ապրե՛ս,- Քուչոյին գովեց Ծառը: - Ու բոլորն, ովքեր մեր գիրքը կարդան, կհասկանան, թե ինչ ճիշտ բան է համագործակցելը,- հետո նայեց Լուսինեին ու, համենայն դեպս, բացատրեց,- այսինքն՝ գործը միասին անելը:

Օգնենք միմյանց



8

Ըստ **Անահիտ Կարազոյզյանի** համանուն սցենարի, Հայաստան
Թեմա՝ **Համագործակցություն**



արաթ օրվա վերջին դասն էր, և Տիգրանն արդեն մտովի բակում ֆուտբոլ էր խաղում:

- Տիգրան, գրատախտակի մոտ արի,- տղայի երագներն ընդհատեց ուսուցչուհու ձայնը: - Կարո՞ղ ես պատմել, թե Աֆրիկայում ապրող ինչ կենդանիներ գիտես:

- Կենդանիները, էլի...աֆրիկյան,- կմկմաց Տիգրանն ու մի հայացք գցեց ժամացույցին: Սլաքները կարծես անշարժացել էին: Ստիպված շարունակեց, - Այդ կենդանիները Աֆրիկայում են ապրում, հենց դրա համար էլ կոչվում են աֆրիկյան: Դա նրանց ազգանունը չէ: Նրանք շատ են սիրում այնտեղ ապրել:

Ուսուցչուհին, համբերությունը կորցնելով, մատյանը բացեց, ձեռքը տարավ գրիչին ու ակնոցի տակից խիստ նայեց տղային:

- Պարզ է,- ասաց նա,- էլի դասդ չես կարդացել:

- Գիտեմ, ճիշտ եմ ասում,- փորձեց արդարանալ Տիգրանը,- այսօր սինքն՝... ես կկարդայի, բայց ժամանակ չկար:

- Ո՞նց թե՛ ժամանակ չկար, - շհասկացավ ուսուցչուհին, - այդ ի՞նչ կարևոր գործեր ունեիր, որ դասիդ համար ժամանակ չկար:

- Մրցույթի էի պատրաստվում: Կողքի բակի հետ վաղը ֆուտբոլ ենք խաղալու, - ամենայն լրջությամբ պատասխանեց Տիգրանը: Ո՞վ չգիտի, որ դա իրենց բակի պատվի հարցն է:

- Պարզ է,- ասաց ուսուցչուհին՝ ինչ-որ բան գրելով, ապա թուղթը Տիգրանին պարզեց, - սա մայրիկիդ կտաս:

Չանգը հնչեց, և երեխանրն իրար հրմշտելով դուրս շտապեցին:

- Տեսնես ի՞նչ է գրել, - ուսուցչուհու գրությունը հիշելով՝ անհանգստացած հարցրեց Անին: - Բա որ մայրիկդ բարկանա ու բակ չթողնի՞:

- Չէ-հա, - առարկեց Տիգրանը, - հո անհասկացող չի՞:

Տիգրանը տուն հասավ թե չէ, պայուսակը նետեց աթոռին ու սկսեց շորերը փոխել:

- Չլինի՞ ուզում ես դուրս գնալ, - տեսնելով, որ տղան մարգահագուստն է հագնում, հարցրեց մայրիկը:

- Հա, մամ, մոռացա՞ր՝ վաղը մրցելու ենք: Պիտի մարզվեմ, - հետո

հիշեց ուսուցչուհու գրությունը ու գրպանից հանելով՝ մայրիկին տվեց:

- Սա էլ, ուսուցչուհին ասաց, որ քեզ տամ:

- Չլինի՞ չարություն ես արել, - գրությունը վերցնելով հարցրեց մայրիկը: Նա գիտեր, որ սովորաբար նման գրությունները ոչ մի լավ բան չեն խոստանում: Հետո կարդաց ու հոնքերը կիտեց: - Սա՞ ինչ բան է, էլի դասդ չէի՞ր սովորել:

- Մա՛մ, ախր..., - փորձեց արդարանալ Տիգրանը, բայց մայրիկը խիստ ձայնով ընդհատեց նրան.

- Էլ ոչ մի «ախր»: Մինչև դասերդ չսովորես՝ ոչ մի ֆուտբոլ:

Ինչքան էլ Տիգրանը փորձեց համոզել, որ հաջորդ օրվա խաղը պատվի հարց է ու շատ կարևոր, ինչքան էլ խոստացավ, որ դասերը հետո անպայման կսովորի, մայրիկն իր վճիռը չփոխեց. «Նախ՝ դասերը, հետո՝ խաղը»-, ասաց նա:

Իսկ այդ միջոցին մյուս երեխաները բակում հավաքված՝ զարմանում էին, թե Տիգրանն ուր մնաց: Իհարկե, նրանք էլ ժամանակն իզուր չէին կորցնում: Գրիգորն ու Քուչոն գնդակն էին փչում, Անին ու Լուսինեն պաստառներ էին պատրաստում՝ «Հաղթանակը մե՛րն է» ու նման կոչերով, իսկ Կոկոն խորհուրդ էր տալիս, թե մարդ ես, էլի, ի՞նչ իմանաս, համենայն դեպս մի պաստառ էլ պետք է պատրաստել՝ վրան գրված. «Ձեր բախտը բերեց, դրա համար պարտվեցի՞նք»:

- Տեսնում եմ՝ լուրջ գործերով եք զբաղված, - լուսամուտից նայելով՝ ասաց հայրիկը:

- Բա ո՞նց, - պարծեցավ Կոկոն, - վաղը ճակատագրական խաղն է՝ «Ռեալ մեր բակի» թիմը խաղում է «Մանչեստր կոդբի բակի» թիմի հետ: Մենք հաղթելու ենք:

- Ինչ-որ հավատս չի գալիս, - գնդակ փչելը վերջացնելով՝ քթի տակ ասաց Գրիգորը:

- Էդ ինչու՞, որ, - զարմացավ Կոկոն, - Տիգրանի պես խաղացող ունենք:

- Կասկածում եմ, - նորից ասաց Գրիգորը, - Աչքիս՝ Տիգրանին բակ չեն թողնում: Ասում են՝ նախ դասե՛րդ արա:

- Դե ասեք՝ արդեն տարվել ենք, - պոչը կախեց Քուչոն, - առանց Տիգրանի մենք դրանց հաղթողը չե՛նք:

- Իսկ եթե օգնե՞նք, - առաջարկեց Անին: - Օրինակ, ես հայոցը կբացատրեմ: Եթե ամեն մեկս մի դաս բացատրի՝ հույս կա, որ շուտ

սովորի-վերջացնի:

- Չգիտեմ, - առարկեց Գրիգորը: - Ես հազիվ իմ դասերը հասցնեմ:

- Ես էլ եմ զբաղված, - նրան միացավ Կոկոն, - որ իմանաք՝ ինչքան կարևոր գործեր ունե՛մ:

- Հիմա ամենակարևոր գործը Տիգրանին օգնելն է, - խիստ ձայնով ընդհատեց Անին, - եթե, իհարկե, ուզում եք հաղթելու հույս ունենալ: Պատկերացնում ե՞ք, մարդիկ հարցնեն. «Ո՞նց պատահեց, որ պարտ-վեցիք», մենք էլ ասենք. «Մեր ընկերոջը չօգնեցինք, դրա համար»: Բա ամոթ չի՞:

- Ամոթ է, - գլուխը քորելով համաձայնվեց Գրիգորը, - լավ, ես մա-թենը կբացատրեմ:

- Ես էլ աշխարհագրությունը, - մեջ ընկավ Կոկոն: - Ես աշխարհ տեսած թռչուն եմ, երկիր չկա, որ եղած չլինեմ: Էնպես օգնե՛մ...

Եվ երեխաները խմբով ուղղվեցին Տիգրանենց տուն: Դուռը մայրի-կը բացեց:

- Բարև, երեխաներ, - ժպտալով ողջունեց նա: - Գիտե՞ք, երևի Տիգրանն այսօր բակ չգա: Նախ պիտի դասերն անի:

- Գիտենք, գիտենք, - միաձայն բացականչեցին ընկերները, - դրա համար էլ եկել ենք: Կարելի՞ է՝ Տիգրանին օգնենք, որ շուտ վերջաց-նի:

- Ա՛յ, ապրեք, - ուրախացած ասաց մայրիկը, - ա՛յ ընկերություն եմ ասել: Բայց, տեսեք, հա՛, հանկարծ վարժությունները Տիգրանի փո-խարեն դուք չկատարեք:

- Ի՞նչ եք ասում, հո փո՞քր չենք: Հասկանում ենք, - մայրիկին հանգստացրեց Գրիգորը: - Մենք ուղղակի կբացատրենք, որ հեշտ հասկանա:

Տիգրանի սենյակով ասես փոթորիկ էր անցել. չորս կողմը գրքեր ու տետրեր թափթփած, ինքն էլ կենտրոնում շվարած նստել էր ու չգի-տեր՝ որտեղից սկսի. հե՛շտ է մի ամիս դաս չսովորելն ու հետո մի օրում ամեն ինչ հասցնելը:

- Եկա՞ք, - ընկերներին տեսնելով՝ անտրամադիր հարցրեց նա ու գլուխը բռնեց, - մինչև դասերս չանեմ, ինձ բակ չեմ թողնի:

- Գիտենք, - հանգստացրին ընկերները, - դրա համար էլ եկել ենք, որ օգնենք:

Նախ պլան կազմեցին, թե ոնց են աշխատելու, հետո հերթով

սկսեցին Տիգրանին բացատրել:

- Այ քեզ բա՛ն, - որոշ ժամանակ անց՝ զարմացած գլուխը թափահարեց Տիգրանը, - հավատս չի գալիս, բայց ոնց որ՝ վերջացրինք:

- Դու գլուխդ առանձնապես թափ մի՛ տուր, - անհանգստացած խորհուրդ տվեց Քուչոն, - որ սովորածդ միջից չթափվի:

Բոլորը ծիծաղեցին: Դուռը բացվեց ու մայրիկը ներս եկավ:

- Հը՞, - հարցրեց նա, - ի՞նչ վիճակում եք: Ես էլ ձեզ կարկանդակներ եմ բերել, որ ուժ հավաքեք:

- Արդեն վերջացրել ենք, - հպարտ-հպարտ ասաց Տիգրանն ու տետրերը ցույց տվեց մայրիկին: Կարելի է՞ կարկանդակները հետներս բակ տանենք՝ համ խաղանք, համ ուտենք:

- Չեմ առարկում, - ժպտաց մայրիկը, - գնացեք: Վաղը կարևոր օր է, ու հիմա գիտեմ՝ ձեր թիմի նման համերաշխ թիմը անպայման կհաղթի:



Ինչուեւ Կոկոն թիմի անդամ դարձավ

Ըստ **Արզու Սուքանի** համանուն սցենարի, Արթուրյան
Թեմա՝ **Համագործակցություն**

Գ

արնանային վաղ առավոտ էր, ու շուրջբոլորը դեռ քնած էին: Միայն Ծառն էր տերևների թեթև շրշյունով անդորրը խախտում:

Քուչոն էլ էր բնում մուշ-մուշ քնած ու երազ էր տեսնում. իրեն երկու հյուքալի ոսկոր էին հյուքասիրել ու ինքը ոչ մի կերպ չէր կարողանում որոշել, թե նախ որն ուտի՝ ա՞ջը, թե՞ ձախը...: «Աջը, ձախը...ա՛ջ-ձախ...», - կարծես մեկն ասում էր ականջի տակ: Այդ ձայնից էլ արթնացավ: Մի աչքը բացեց, վեր նայեց. պարզվում է՝ Կոկոն մարզանք էր անում ու ձայնը գլուխն էր զցել. «...Ա՛ջ-ձախ, մեկ-երկու..., վե՛ր-վա՛ր...: Վե՛ր կաց, ա՛յ ծուլիկ»: (Այս վերջին խոսքերը Քուչոյին էին ուղղված:) «Օրինակ վերցրու. արդեն վեր եմ կացել, ատամներս լվացել եմ, լողացել, իսկ դու դեռ խոնկացնում ես»:

Քուչոն հորանջեց, ճնկոտեց ու զարմացած ասաց.

- Չէ-չէ-մի՛ ժանիքներդ: Բա թռչունները ատամ են ունենու՞մ, որ մեկ էլ մաքրեն:

Այդ պահին, ուրախ ծիծաղելով, երեխաները բակ իջան, որ դպրոց գնան: Տիգրանը հանդիսավոր ինչ-որ բան էր տանում. ինքնաթիռի մոդել էր:

- Ուխ, սավառնակ եմ ասել, է՛, - հիացավ Կոկոն:

- Սավառնակը դու ես, - վիրավորվեց Տիգրանը, - Չես տեսնու՞մ՝ գերձայնային ինքնաթիռ է: Գիտե՞ս, ինչ արագ է թռչում:

- Բա՛ րձր-բարձր, - հպարտությամբ ավելացրեց Լուսինեն:

Քուչոն մոտեցավ ու, համենայն դեպս զգուշանալով, չորս կողմից մի լավ հոտոտեց, համոզվեց, որ վտանգավոր չի ու հավանություն տվեց.

- Ըհը, շատ սիրուն է: Ո՞վ է նվիրել:

- Ոչ ոք, - բացատրեց Տիգրանը, - ինքներս ենք սարքել: Անին նկարել է, Գրիգորը կտրատել ու ստանձով կպցրել, Լուսինեն էլ գույնզգույն ներկել է: Իմ դեկավարությամբ:

- Քամու դեմ ի՞նչ արագություն կբացի: Իսկ պահեստային անիվներ ունի՞, - բանիմաց տեսքով սկսեց հարցուփորձ անել Կոկոն:

- Բա ո՞նց, - պատասխանեց Գրիգորը, - համարյա իսկական է:

- Դպրոցից գանք՝ փորձարկելու ենք, - ասաց Անին:

- Ու՛խ, - ուրախացավ Կոկոն, - ինչ հավես կլինի: Բախտներդ

բերեց՝ ազատ եմ ու ձեզ կօգնեմ: Գիտեք, չէ՞, որ թռչելու մեծ փորձ ունեմ: Դու էլ իմ օգնականը կլինես, - ասաց Քուչոյին:

- Ի՞նչ պիտի անեմ, - անհանգստացավ Քուչոն:

- Մի դժվար բան չի, - հանգստացրեց Կոկոն, - ես կասեմ՝ դու կանես:

- Կոկո ջան, կներես, - Կոկոյին ընդհատեց Տիգրանը, - բայց դու մեր թիմի անդամ չես: Մյուս անգամ:

- Ո՞նց թե, - վրդովվեց Կոկոն, - բայց էլ ո՞վ է օդաչու լինելու: Առանց ինձ գլուխ չեք հանի:

- Ի՞նչ կլինի, մեզ էլ խաղացրեք, - խնդրեց Քուչոն, - համ էլ, քանի դպրոցում եք, պահակություն կանենք, որ օդանավին բան չպատահի:

- Ասենք, ճիշտ ես ասում՝ քանի դպրոցում ենք, մեկը պիտի տիրություն անի: Լավ, - համաձայնեց Տիգրանը, - արի՛ դու մեր պահակը եղիր: Իսկ որ դպրոցից գանք, կփորձարկենք ու հետո մրցույթում կհաղթենք ու մրցանակ կստանանք:

- Բա ե՞ս, - հազիվ լացը զսպելով ասաց Կոկոն: - Ի՞նչ կլինի՝ ինձ էլ ընդունեք:

- Էլ տեղ չունենք, - առարկեց Տիգրանը, - հո մեզանից մեկնումեկին չե՞նք հանի, որ տեղը քեզ վերցնենք: Բոլորը առավոտից չարչարվել են:

- Ես էլ եմ առավոտից չարչարվել, - ոչ մի կերպ կատարվածի հետ չէր հաշտվում Կոկոն:

- Լավ, գնացինք, թե չէ՝ կուշանանք, - Կոկոյի բողոքին ուշադրություն չդարձնելով՝ Լուսինեի թևից քաշեց Անին:

Երեխաները խնամքով ինքնաթիռը նստարանին դրեցին, Քուչոյին պատվիրեցին, որ աչքը չկտրի ու շրջվեցին, որ գնան:

- Ո՞նց եք էսպես բաց օդում թողնում-գնում, - նրանց հետևից անհանգստացած կանչեց Կոկոն, բայց տղաներն ուշադրություն չդարձրին:

- Գնացինք, - Գրիգորին ասաց Տիգրանը, - ոչ մի բան էլ չի լինի: Կոկոն է, էլի, նեղացել է, որ մեր թիմ չընդունեցինք, վրեժ է լուծում:

- Շատ պետքս եք, - դառնացավ Կոկոն: - Չեք ուզում՝ հեչ էլ: Ոչ էլ կօգնեմ:

Լուսինեն, որ դեռ շատ չէր հեռացել, լսեց Կոկոյի խոսքերն ու շրջվեց:

- Ինչու՞ եք Կոկոյին նեղացնում: Երևի ուզում է օգնել, չէ՞, - նախատեց տղաներին: - Կոկո՛ ջան, որ բաց օդում մնա ի՞նչ կպատահի, որ:

- Քեզ կասեմ, - վճռեց Կոկոն, - դու սրանց նման չես: Անձրև է գալու, իսկ ձեր ինքնաթիռը թռթից է՝ կորչվի:

- Վայ-վայ-վայ, - հեզնեց Տիգրանը, - հիմա էլ գուշակություններ է անում: Շուտով բախտ էլ կբացի:

- Դու՞ք գիտեք, - ուտերը թոթվեց Կոկոն, - ես իմ պարտքը կատարեցի:

Երեխաներն սկսեցին վիճել. մեկն ասում էր՝ Կոկոն ճիշտ է ասում, մյուսը՝ հնարում է: Մեկ էլ հեռվից լսվեց դպրոցի զանգն, ու նրանք վազելով հեռացան: Երբ Կոկոն ու Քուշոն բակում մենակ մնացին, Քուշոն հարցրեց.

- Ո՞նց իմացար, որ անձրև է գալու: Երկնքում ամպի նշույլ չկա:

- Դե, ո՞նց բացատրեմ, - ասաց Կոկոն: Երևում էր, որ շատ էր վշտացած: - Թռչունները մի հաստատ նշան գիտեն՝ հենց որ մժեղներն սկսում են գետնին մոտ թռչել, ուրեմն անձրև է գալու: Որ ուշադիր նայես՝ կտեսնես: Տես՝ ինչ ցածր են թռչում:

- Հա, էլի, - Քուշոն թաթով ականջը քորեց, - իսկապես: Բա ի՞նչ անենք: Չպահե՞նք ինքնաթիռը: Հո չե՞նք թողնի՝ փչանա:

- Քեզ են ասել, դու էլ պահիր, - նեղացած պատասխանեց Կոկոն ու թռավ՝ թառեց Ծառի ամենաբարձր ճյուղին:

Քիչ անց, իսկապես, երկինքը մթնեց, սև-սև ամպեր հավաքվեցին. ուր որ է՝ անձրև էր գալու: Երեխաները դասարանի լուսամուտից դուրս նայեցին ու վախեցան:

- Տեսա՞ք, որ Կոկոն ճիշտ էր ասում: Բա հիմա ի՞նչ ենք անելու, - անհանգստացավ Անին, բայց պատասխան չստացավ, որովհետև զանգը տվեց, և քնագիտության ուսուցչուհին դասարան մտավ:

- Իսկ թռչունները կարո՞ղ են իմանալ՝ անձրև գալու է, թե ոչ, - տեղից վեր թռչելով հարցրեց Գրիգորը:

- Իհարկե, - պատասխանեց ուսուցչուհին: - Չեզ մի հետաքրքիր բան ասեմ. անձրևից առաջ մժեղներն սկսում են շատ ցածր թռչել: Թռչունները միջատներով ու մժեղներով են սնվում, չէ՞: Ուրեմն՝ որսալու համար նրանք էլ են ստիպված ցածր թռչում, իսկ մենք էլ տեսնում ենք ու ասում. «Թռչուններն ինչ ցածր են թռչում: Ոնց որ թե անձրև է գալու»:

- Ուրեմն՝ ճիշտ էր ասում, - ուսի վրայով Տիգրանին շշուկով ասաց Գրիգորը:

- Մեզ տեղն է: Պիտի Կոկոյին լսեինք:

- Դու էիր, էլի, - մեղքն ընկերոջ վրա գցեց Անին, - որ Կոկոյին մեր թիմ ընդունած լինեինք...: Հիմա գնա ու թրջված ինքնաթիռով մրցույթի մասնակցիր:

Երբ դպրոցից բակ հասան, տեսան, որ Քուչոյի ու Կոկոյի հետքն էլ չի երևում, իսկ մատարանին ոչ մի ինքնաթիռ էլ չկար:

- Տեսնես ո՞ր են կորել, - անհանգստացավ Գրիգորը, ու սիրտը վատ բան վկայեց:

Երեխաները մոլորված աջ ու ձախ նայեցին, մեկ էլ վերևից ինչ-որ տարօրինակ դողոց եկավ. գլխավերևում իրենց ինքնաթիռը, միանգամայն սարքին վիճակում, պտույտներ էր գործում ու հանդարտ վայրէջք կատարեց հենց Լուսինեի ոտքերի մոտ: Դռնակը բացվեց, և հայտնվեցին Կոկոն ու Քուչոն: Կոկոն հանդիսավոր հայտարարեց.

- Անձնակազմը զեկուցում է. ինքնաթիռը ժամանեց ըստ չվացուցակի: Չեկուցող՝ գլխավոր հրամանատար, առաջին կարգի օդաչու Սրաթռիչ Կոկո:

Երեխաների ուրախությանը չափ ու սահման չկար: Նրանք շրջապատեցին «օդաչուներին» ու հերթով գրկախառնվեցին:

- Բա ո՞նց կարողացաք պաշտպանել, որ անձրևից չփչանա, - ինքնաթիռը շոյելով հարցրեց Գրիգորը:

- Միասին վերցրինք ու տարանք ձեղնահարկ, - բացատրեց Քուչոն: - Որ Կոկոն չլիներ, չգիտեմ՝ ինչ էի անելու:

Երեխաներն ամոթից գլուխները կախեցին, որ Կոկոյի հետ այդքան վատ էին վարվել:

- Ի՞նչ կլինի՝ մեզ ներես, - ասաց Տիգրանը, - առանց քեզ կորած էինք: Ու ճիշտ էիր ասում՝ առանց քեզ մեր թիմը թիմ չի:

- Չէ, ինչու՞: Դուք էլ եք լավ թիմ, բայց միասին է՛լ ավելի լավը կդառնանք, - ասաց Կոկոն, որի սիրտը շահել էին երեխաների բառերը: - Ինձ նման փորձված օդաչու ունեցող թիմը մրցույթում անպայման կհաղթի: Ա՛յ, կտեսնեք:

Ծառը, որ մինչ այդ ձայն չէր հանել, խոսեց.

- Իհարկե կհաղթեք: Եթե իրար օգնել գիտեք, հաղթելն ի՞նչ է, որ չհաղթեք:

Քույրդի ծննդյան օրը



18

Ըստ **Իրնա Զուրիհիձեի** համանուն սցենարի, Վրասան
Թեմա՝ **Արդյունավետ հաղորդակցում**

Այդ օրն սկսվեց նրանից, որ Անին օրագրի մեջ գրեց. «Սովորական օր է, մյուս բոլոր օրերի նման»: Անին չգիտեր՝ էլ ինչ գրեր օրագրում: Պատուհանից դուրս նայեց:

Իսկապես, դրսում սովորական հաճելի եղանակ էր, շուրջն ամեն ինչ խաղաղ էր՝ ոչ մի արտառոց բան տեղի չէր ունենում: Պատուհանի մոտով Կոկոն թռավ-անցավ ու Անին մի նախադասություն էլ ավելացրեց. «Երկնքում սովորականի պես թռչուններ են ճախրում...»: Այդ պահին Կոկոն բաց պատուհանից ներս ընկավ ու թրմփաց օրագրի բաց էջին: «...և մեկ-մեկ էլ թրմփոցով ներս են ընկնում», - նախադասությունն ավարտեց Անին:

- Ողջու՛յն, - բարևեց Կոկոն:
- Ողջու՛յն, - պատասխանեց Անին:

Կոկոն թևերը կրծքին խաչեց, ոտքը ոտքին զցեց ու տրամադրվեց գրույցի:

- Ի՞նչ կա, ի՞նչ չկա:
- Վա՛յ, մամա ջան, - տեղից վեր թռավ Անին, - ո՞նց էի մոռացել...
- Ի՞նչը, - անհանգստացավ Կոկոն, - հո բան չի՞ պատահել:
- Ո՞նց չի պատահել: Այսօր ամսի քանի՞սն է: Քիչ էր մնում՝ Քուչոյի ծննդյան օրը մոռանալիք:

Կոկոն ուրախացավ.

- Գնամ բոլորին կանչեմ, Քուչոյի համար մի այնպիսի տոն սարքենք, որ մինչև կյանքի վերջը հիշի:

- Կհասցնե՞նք, - անհանգստացավ Անին, - այնքան էլ շատ ժամանակ չունենք:

Կոկոն արդեն կազմակերպչի դերը ստանձնել էր ու աղջկան հանգստացրեց.

- Էդ գործն ինձ թող: Դու հետևիր, որ բոլորը ներս գան ու ոչ ոք դուրս չգնա: Բացի Քուչոյից: Դրան պիտի հեռու պահենք, որ ժամանակից շուտ չուրախանա:

- Ո՞նց՝ ժամանակից շուտ, - չհասկացավ Անին:

- Հենց էդպես: Մենք պիտի Քուչոյի համար անակնկալ պատրաստենք: Իսկ եթե նախօրոք իմանա, էլ ի՞նչ անակնկալ, - այս խոսքերով

ցատկեց լուսամուտագոգին: - Ես թռա՛, - ու անհետացավ:

Քիչ անց ընկերները, Անիի սենյակում հավաքված, արդեն ծննդյան հանդեսի պլան էին կազմում:

- Առաջինը, - տետրի մեջ գրեց Գրիգորը, - պետք է ծննդյան տոթը պատրաստենք: Լավ կլինի՝ մրգերով ու մոմերով զարդարենք: Երկրորդը՝ պետք է սիրուն պաստառ պատրաստենք, վրան գրենք «Միրելի Քուչո՛, ինչ լավ ես արել, որ ծնվել ես այս օրը», կամ դրա նման մի բան: Երրորդը՝ բակը պետք է փուչիկներով ու ծաղիկներով զարդարենք, որ տոնական տեսք ունենա: Դրանից Քուչոյի տրամադրությունն է՛լ ավելի կբարձրանա: Չորրորդը և ամենակարևորը՝ պիտի ամեն ինչ Քուչոյից գաղտնի անենք, որ ժամանակից շուտ չուրախանա:

Այս վերջին՝ չորրորդ կետի իրականացումն այնքան էլ հեշտ բան չէր: Ախր, Քուչոն բակում էր, ո՞նց անեին, որ նրանից թաքուն զարդարեին բակը:

Սկզբում մտածեցին, թե գուցե Քուչոյին նկուղում կողպեն, բայց Անին առարկեց. բա որ նեղանա՞: Հետո Տիգրանն առաջարկեց, որ Քուչոյին համոզեն՝ ուղարկեն զբոսանքի, ու քանի նա զբոսնում է՝ բակը զարդարեն: Այս մտքին բոլորը հավանություն տվեցին, ու Կոկոն հանձն առավ գործը գլուխ բերել: Այս հարցում կարևորը նրբանկատ լինելն է, բացատրեց նա, դրա համար էլ իր վրա է վերցնում: Թե չէ՝ որ մեկը գնա ու ուղիղ երեսին ասի՝ «Քուչո՛, գնա մի քիչ զբոսնի՛ր», բան դուրս չի գա, չէ՛:

Այս ընթացքում Քուչոն իր բնում նստած՝ անհամբեր սպասում էր ընկերների շնորհավորանքներին: Տրամադրությունը բարձր էր. պատկերացնում էր, թե ընկերները հերթով ոնց են մոտենալու, լավ-լավ մաղթանքներ ասելու ու համով-համով նվերներ տալու: Ինքն էլ չնկատեց, որ այսպես երագելով բավական ժամանակ անցավ: Ինքը դեռ սպասում էր ու սպասում, իսկ ընկերներից ոչ ոք, չգիտես ինչու, դեռ իրեն չէր շնորհավորել:

«Տեսնես՝ ու՞ր կորան», - անհանգստացավ նա ու որոշեց պարզել, թե բանն ինչ է: Բնից դուրս եկավ, թե չէ՝ դեմառդեմ Կոկոյին հանդիպեց ու այն է՝ ուզում էր մտածել, որ առաջին հյուրը եկավ, երբ Կոկո-

յի խոսքերը գլխին սառը ջուր լցրին: Չէ, Կոկոն շատ քաղաքավարի էր ու նույնիսկ ժպտաց Քուչոյին, բայց ասածը՝ «Քուչո ջան, ի՞նչ ես կարծում՝ լավ չէ՞ր լինի, որ մի ուրիշ տեղ գնայիր», առնվազն անհասկանալի էր: Ինչու՞ պիտի ծննդյան օրով ինչ-որ տեղ գնար: «Երևի գժվել է», - մտածեց Քուչոն, բայց բարձրաձայն ասաց.

- Ինչու՞: Հո չե՞ս մոռացել, որ այսօր...

Բայց Կոկոն չթողեց, որ ավարտի ու վրա տվեց.

- Դրսում այնքան անելու բան կա: Օրինակ՝ աղիբուղի կառնես, կուտես, հազար ու մի ուրիշ բաներ: Ի՞նչ ես տեղումդ թքվել:

- Գժվել ե՞ս, Կոկո, - արդեն զարմանքը զսպել չկարողացավ Քուչոն, - նախ, աղիբուղին իմ սիրած ուտելիքը չէ, գոնե շատ րմա ասեիր: Համ էլ, մոռացե՞լ ես, այսօր...

Բայց Կոկոն նորից ընդհատեց նրան.

- Հա, շատ լավ օր է: Դրա համար էլ ասում եմ՝ գնա կարուսել նստիր, մի բանով զբաղվիր: Հետո կգաս, կպատմես, թե ինչ ես արել:

- Կատա՞կ ես անում, - սպշահար հարցրեց Քուչոն:

- Ըհը՛, այսինքն՝ ի՞նչ կատակ: Լուրջ եմ ասում: Մեզ պետք է, որ բակը ազատես:

Այս վերջին խոսքերից Քուչոյի համբերության բաժակը լցվեց: Վիրավորանքից ու վրդովմունքից դողալով՝ ասաց.

- Ինձ իմ հարազատ բակից վռնդում ես, հա՞: Այն էլ այսօր, այս... Է՛հ, - խոսքը կիսատ թողնելով՝ թաթը հուսահատ թափահարեց Քուչոն ու լացը հագիվ զսպելով՝ ասաց, - հետո էլ կասես՝ ընկեր ես...

- Չէ՛-չէ՛-չէ՛, - փորձեց իրավիճակը շտկել Կոկոն, - ինձ ճիշտ չհասկացար...

Բայց Քուչոն էլ նրան չէր լսում. նա նկատել էր, որ Լուսինեն բակ է իջել ու շտապեց նրա մոտ: Լուսինեն նստարանին նստած՝ ծաղկեպսակ էր հյուսում: Այնպես ջանասիրաբար էր հյուսում, որ Քուչոյի ծիծաղը եկավ: Մոտեցավ աղջկան ու հարցրեց.

- Բարև, ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Լուսինեն ծաղկեպսակը մեջքի հետևը թաքցրեց ու վախեցած ասաց.

- Ոչ մի բան էլ չկա: Ի՞նչ պիտի լիներ, - նա վախենում էր, որ եթե Քուչոյի հետ գրուցի, հակարժ բերնից մի բան կթոցնի, ու հետո ընկերներն իրեն բերանբաց կասեն:

Բայց Քուչոն այս պատասխանն այլ կերպ ընդունեց. նրան թվաց, թե Լուսինեն խուսափում է իր հետ խոսելուց, ու շատ տխրեց:

- Կարծեմ ծաղկեպսա՞կ էիր հյուսում, - տխուր հարցրեց աղջկան:
- Աչքիդ է երևացել, - Լուսինեն գլուխը տարուբերեց ու շրթունքները սեղմեց:

- Լավ, - է՛լ ավելի տխրեց Քուչոն ու գլխիկոր հեռացավ:

Եվ ում մոտենում էր Քուչոն, բոլորից նույն անհասկանալի վերաբերմունքն էր ստանում. բոլորը նրան տեսնելիս՝ շնորհավորանքների փոխարեն հայացքները փախցնում էին ու խուսափողական պատասխաններ տալիս՝ ասես փորձում էին բռայե առաջ իրենից ազատվել:

Քուչոյի տրամադրությունը վերջնականապես փչացավ. այլևս ոչ մի հույս: Բավական չէր, որ ընկերներից ոչ ոք չհիշեց իր ծննդյան օրը, դեռ մի բան էլ սովորականից ավելի կոպիտ էին հետը՝ ոչ խաղալ էին ուզում, ոչ նույնիսկ՝ գրուցել:

Որպես կազմակերպիչ ու աշխատանքների պատասխանատու, Կոկոն հերթով մոտենում էր տոնական սեղանի ուտեստներին, կտուցը մեջը խոթում, համտեսում ու գոհունակությամբ գլուխը տմբտմբացնում.

- Ա՛յ, տոնական սեղան եմ ասել: Պատկերացնում եմ, թե Քուչոն ոնց կուրախանա:

Կոկոն մի վերջին անգամ զննեց սեղանը:

- Շքեղ սեղան ստացվեց: Ափսոս, որ իմ ծննդյան օրն էլ չի:
- Բայց ժամանակը չէ՞, որ Քուչոն գա , - հարցրեց Գրիգորը:

- Ժամանակն է, - պատասխանեց Կոկոն ու բերանը մի հատ սալոր գցեց, - բայց ո՞նց գա, եթե գնացել է:

Երեխաները զարմանքից պապանձվեցին:

- Ի՞նչ ես ասում, ո՞նց թե՛ գնացել է: Ու՞ր:

- Ի՞նչ իմանամ: Ես ասացի՝ գնա, նա էլ գնաց: Մի բան էլ ինձանից նեղացավ: Չգիտեմ՝ ինչու:

- Բա ասում էիր՝ պիտի նրբանկատ ասել, ես ձևը գիտե՛մ...

- Ես նրբանկատ ասելու ձևը գիտեմ: Ի՞նչ իմանայի, որ Քուչոն նրբանկատ լսելու ձևը չգիտի: Հենց ասացի՝ գնա զբոսնիր, նեղացավ ու պըրժ. էլ չուզեց խոսք հասկանալ: Ի՞նչ անեմ, որ իմ նրբանկատ խոսքերից շատ աննրբանկատ ձևով նեղացավ:

- Լավ չեղավ, - հուզվեցին երեխաները, բայց Կոկոն նրանց խոսքերն այլ կերպ հասկացավ:

- Գիտե՞ք ինչ, - ասաց Անին, - որ լավ մտածենք, կհասկանանք, թե բոլորս ինչքան մեղավոր ենք: Փոխանակ նախ շնորհավորեինք, հետո մեկնումեկս առաջարկեր հետը զբոսանքի գնալ կամ մի նման բան: Թե չէ, ստացվեց, որ նրա ծննդյան օրը բոլորս մոռացել ենք: Քուչոյի փոխարեն ձեզ պատկերացրեք. դու՞ք ինչ կմտածեիք:

Ընկերները հասկացան, որ Անին ճիշտ է ասում, և դրանից տրամադրություններն ավելի ընկավ: Հենց այդ միջոցին, որտեղից-որտեղ, Քուչոն հայտնվեց: Մենակ, տխուր, մի մութ անկյունում թաքնված՝ նա ժամանակ էր ունեցել մտածելու ու հասկացել էր, որ ընկերներն իր հետ այդպես չէին վարվի. երևի սխալվել էր: Կարո՞ղ է՝ որոշել էին անակնկալ պատրաստել: «Հա՛, էլի, - գլխի էր ընկել նա, - իսկ ես՝ հիմարս, կարծեցի, թե էլ ինձ չեն սիրում»: Ու վազել էր, որ համոզվի:

- Վա՛յ, Քուչո՛ ջան, ինչ լավ արեցիր, որ եկար, - նրան ուրախ-ուրախ ողջունեցին ընկերներն ու նստեցրին սեղանի շուրջ՝ պատվավոր տեղում, - ծնունդդ շնորհավո՛ր:

Բայց եթե ոչինչ էլ չասեին, Քուչոն կհասկանար. ընկերների աչքերն այնքան ուրախ էին փայլում...

Ո՛ր է մեղապուր



24

Ըստ **Արթուր Վարդանյանի** համանուն սցենարի, Հայաստան
Թեմա՝ **Արդյունավետ հաղորդակցում**

Վաղ առավոտ էր: Քուչոն արթնացավ, բնից դուրս եկավ, ճնկոտեց ու օդը հոտոտելով շուրջը նայեց:

- Ի՞նչ հրաշալի օր է՝ խաղաղ, արևոտ, երկինքը՝ կապույտ, ծիտիկները ծլվլում են, ծաղիկները...: Վա՞յ, ծաղիկները ու՞ր են կորել: Օգնեցե՛ք, բռնեք գողին, մեր ծաղիկները տարել են...

Քուչոն սկսեց անհանգիստ դեսուդեն վազվզել ու գետինը հոտոտել. մեկ էլ տեսար՝ չարագործի հետքը բռնեց:

- Տեսնես՝ ո՞վ արած կլինի, - Քուչոն հուզմունքից սկսեց ինքն իր հետ խոսել, - ո՞ր մի անգգամը: Կա-չկա՝ գիշերը մեր բակ անձանոթ է սողոսկել: Մերոնք չէին անի:

Այսպես հոտոտելով հասավ Ծառի փչակին, ուր իր բնի նորոգման պատճառով ժամանակավորապես ապաստան գտած՝ Կոկոն մուշ-մուշ քնած էր: Հետևի թաթերին կանգնելով՝ մռութը փչակից ներս խոթեց ու վրա տվեց.

- Կոկո՛, ա՛յ Կոկո, ի՞նչ ես դավին անտեղյակ քնել: Լսո՞ւմ ես՝ ինչ-որ մեկը գիշերով եկել՝ ծաղկանոցի ծաղիկները գողացել է: Կարո՞ղ է նկատած լինես:

Ի պատասխան, փչակի խորքից ինչ-որ անհասկանալի գոմոց եկավ՝ «Հը-հա՛-ռըը՛մ», ու Կոկոն, առանց աչքերը բացելու, մյուս կողքի շրջվեց:

Քուչոյին այս գոմոցը «հա» թվաց:

- Հա՞, ճի՛շտ ես ասում, - ուրախացավ նա, - ո՞վ էր, ասա: Որ բռնենք, արածի համար պատասխան կտա:

Կոկոն քնի մեջ էլի շուռուճուռ եկավ ու գլուխը թափահարեց: Այս շարժումից Քուչոն շվարեց. նրան թվաց, թե Կոկոն գիտի, բայց չի ուզում ասել:

- Տեսնես՝ ինչու՞ է չարագործին պաշտպանում: Վայ թե իր ծանոթներից մեկն է, դրա համար: Հա, էլի, թե չէ՝ կասեր: Չէ՛, երեխեքը պիտի սրա մասին իմանան: Դրան տեսեք: Գիտեի, որ վերջը դա էր լինելու: Թաղի բոլոր գող կաչաղակների հետ նստում- վեր է կենում: Սրանից հետո պիտի ավելի աչալուրջ լինենք. ո՞վ իմանա, մի օր էլ կսկսեն ոսկորներս գողանալ, - այսպիսի հռեռեսական մտորումներով Քուչոն

վազեց տան կողմը:

Լուսինեն ու մայրիկը ծաղկանոցով էին զբաղված, իսկ Քուչոն, երեխաներին շուրջը հավաքած, պատմում էր իր վերջին բացահայտումների մասին:

- Բա՞, - վերջում պատմածն ի մի բերելով ասաց նա, - ո՞վ կմտածեր, որ Կոկոն ընդունակ է չարագործներին պաշտպանելու:

- Ո՞նց թե, - զարմացավ Գրիգորը, - այդ ինչե՞ր ես ասում:

- Հիմա բացատրեմ՝ ինքներդ համոզվեք, - ու Քուչոն սկսեց մանրամասն նկարագրել իր ու Կոկոյի հանդիպումը:

- Բայց ո՞նց իմացար, որ Կոկոն գիտի, թե ով է արել, - հարցրեց Անին՝ լավ չհասկանալով Քուչոյի մտքերի ընթացքը:

- Ասում եմ, էլի՝ հենց ինքն էլ ասաց:

- Լավ կլիներ՝ միասին գնալինք ու Կոկոյին հարցնե՞ինք, - առաջարկեց Տիգրանը, - հանկարծ չպարզվի, թե զրպարտում ենք:

Երեխաները խմբով ուղղվեցին դեպի փչակը:

- Կոկո՛, ա՛յ Կոկո, - ձայն տվեցին, բայց փչակից պատասխան չեղավ:

- Տեսա՞ք, - վրդովվեց Քուչոն, - համոզվեցի՞րք: Չի էլ բարեհաճում պատասխանել: Չն է անում, թե չի լսում:

- Միգուցե ներսում չի, - ենթադրեց Գրիգորը, որը չէր սիրում հապճեպ եզրակացություններ անել:

- Եթե ներսում էլ չի, ուրեմն գնացել է իր գող ընկերներին զգուշացնի, - չէր հանդարտվում Քուչոն:

- Ես մի բան եմ մտածել, - առաջարկեց Տիգրանը, - հանցագործները սովորաբար հանցանքի վայր են վերադառնում: Եկեք հերթապահություն սահմանենք ու պարզենք, թե ով է գիշերները գալիս, մեր ծաղկանոցն ավերում:

- Ապրե՛ս, լավ միտք է, - հավանություն տվեց Անին, - հիմա գնանք տուն, հանգստանանք, որ գիշերը կարողանանք հերթապահել:

Ու երեխաները ցրվեցին:

Գիշեր էր: Բակում ոչ ոք չկար: Մեկ էլ դուռը ճռռաց ու մի ստվեր հայտնվեց շեմքին. Գրիգորն էր: Նա չորս կողմը նայեց, ոչ ոքի չտեսավ ու մտածեց. «Տեսնես՝ ու՞ր մնացին: Բա ասում էին՝ հերթապահե՛նք: Հիմա ես ո՞նց եմ մենակ գլուխ հանելու»:

Մի փոքր բակում շրջեց, նստարանին նստեց, Ծառի տակ ոտքը

կախ գցեց, հետո տեսավ, որ ցրտոտ է: Որոշեց, որ գնա՝ մի բան հագնի: Նոր էր հեռացել, երբ հիմա էլ Տիգրանը եկավ:

- Գիտեի, չէ՞, որ դրանց վրա հույս դնել չի լինի: Ու՞ր են կորել: Դե արի, Տիգրան, ու մենակ հերթապահիր: Բա որ մենակ չարագործների հախից չգա՞մ, - փնթփնթաց քթի տակ, հետո ինքն էլ բակում մի քիչ շրջեց ու շուտով գզաց, որ մրսում է:

- Գնամ վերարկու հագնեմ, - իր հերթին որոշեց Տիգրանն ու քայլեց տուն:

Տիգրանը հեռացավ, թե չէ՝ Անին եկավ: Բակում շատ մութ էր ու մի փոքր վախենալու: Նա էլ, տեսնելով, որ մենակ է, դժգոհեց ընկերների անպարտաճանաչությունից, մթից ու վախից սարսուռաց և նույնպես տուն գնաց:

Առավոտյան առաջինը բակ վազեց Գրիգորը և քիչ էր մնում՝ բակի մեջտեղում քնած Քուչոյին դիպչեր:

- Ի՞նչ ես մարդկանց ոտքերի տակ փովել, - մի կերպ հավասարակշռությունը պահելով՝ Քուչոյին կշտամբեց նա:

Քուչոն հորանջեց, մի աչքը կիսաբաց արեց ու ասաց.

- Փոխանակ շնորհակալ լինեք, որ մեն-մենակ ամբողջ գիշեր հերթապահություն եմ արել...

- Ինչէ՞ր ես հնարում, - զարմացավ Գրիգորը: - Ես եկել էի, բայց ձեզանից ոչ որ չկար: Ստիպված մենակ եմ հերթապահել:

- Ես էլ էի եկել, ու ես էլ էի մենակ, - Գրիգորին լսելով՝ առարկեց Անին, որ հենց նոր բակ էր իջել ու մոտեցել ընկերներին, - ճիշտ է՝ մի քիչ վախենալու էր ու երկար չմնացի:

- Ես էլ, - նրան միացավ Տիգրանը ու զարմացած հարցրեց, - ո՞նց է, որ չենք հանդիպել:

- Դե հա, էլի, - գլխի ընկավ Անին, - երևի տարբեր ժամանակ ենք եկել: Մոռացել էինք ժամի մասին պայմանավորվել:

- Դրա համար էլ խառնաշփոթ ստացվեց, - համաձայնեց Գրիգորը, - որոշելը՝ որոշել էինք, բայց կարգին չէինք պայմանավորվել:

- Բա հիմա ի՞նչ անենք: Չարագործին թողնենք, որ անպատիժ մնա, - մտահոգվեց Տիգրանը:

- Չէ, ինձ որ լսեք՝ Կոկոյին մի լավ թափ կտաք, մինչև խոստովանի, - առաջարկեց Քուչոն:

- Թե չէ՝ վաղն ով չալարի՝ կգա մեր ծաղկանոցն ավերելու, - եզրա-

փակեց Գրիգորը:

Այս պահին որտեղից-որտեղ հայտնվեց Կոկոն ու թռավ հավաքված երեխաների մոտ:

- Գիտե՞ս, Կոկո, քեզանից չէինք սպասում: Ու՞ր ես քո կասկածելի ընկերներին թողնում, որ մեր բակ գան - գնան:

- Հա, ու դեռ մեր ծաղկանոցը փորփրեն, ծաղիկները գողանան, - ավելացրեց Անին:

Կոկոն մտածեց, թե երազ է տեսնում. իր ընկերներն ի՞նչ կապ ունեին:

- Ընկերներիս ինչո՞ւ եք զրպարտում, - վրդովվեց նա, - իմ բոլոր ընկերները շատ դաստիարակված, եթե կուզեք՝ բարեկիրթ թռչուններ են: Նրանք եթե նոր ծաղիկներ չցանեն, հները հաստատ չեն վնասի:

- Բա ի՞նչ էիր ասում՝ գիտեմ, թե ով է ծաղկանոցն ավերել, բայց չեմ ասի, - վրդովվեց Քուչոն:

- Ո՞նց, ե՞րբ, - ոչինչ չհասկանալով՝ Կոկոն ապշած երեխաներին նայեց:

- Երբ որ փչակում քնած էիր, - շարունակեց իրենը պնդել Քուչոն, - ես քեզ հարցրի՝ չե՞ս տեսել՝ ծաղկանոցն ով է ավերել, դու էլ գլխով արեցիր:

- Ես գլխով չեմ արել, - հուզմունքից Կոկոյի ձայնը դողաց:

- Հենց էլ արել ես:

- Չե՛մ արել:

- Աչքովս եմ տեսել:

- Ո՞նց ես տեսել: Ոչինչ էլ չես տեսել, - իրենն էր պնդում Կոկոն, - ու ոչ էլ կարող էիր տեսնել:

- Ինչո՞ւ, որ, - չհասկացավ Գրիգորը:

- Ինչո՞ւ: Ասեմ՝ ինչու: Որովհետև քնած էի: Ե՞րբ եք տեսել՝ քնածը բան ասի:

- Հաաա՛, - վերջապես հասկացավ Անին, - Քուչո՛, նորից խառնել ես: Խեղճ Կոկոն, երևի, խռմփում էր, դու էլ կարծել ես, թե խոսում է:

- Էլի իրար լավ չլսելու պատճառով իրար չեք հասկացել, - Անիին միացավ Տիգրանը:

Իսկապես, երեխաները ու Քուչոն մի անգամ ևս համոզվեցին, որ երբ մտածում ես, թե ի՞նչ հասկանալու բան կա, պարզից էլ պարզ է, ու դիմացինիդ ուշադիր չես լսում, ու վերջում խառնաշփոթ է ստացվում:

- Ուրեմն, չարագործներին չենք բռնի, - հոգոց հանեց Քուչոն:

- Ի՞նչ չարագործների մասին եք խոսում, - անհանգստացած երեխաներին մոտեցավ մայրիկը, որ տուն էր վերադառնում ու պատահամամբ լսել էր Քուչոյի ասածը:

- Մեր ծաղկանոցը ավերել են, մենք էլ ուզում ենք պարզել, թե ով է արել:

- Ո՞նց թե՛ ծաղկանոցն ավերել են, - վախեցավ մայրիկը, մոտեցավ ծաղկանոցին ու թեթևացած շունչ քաշեց, - չէ, ոչ մի բան էլ չի փչացել, փառք ասածո: Ոնց վախեցրի՞ք:

- Ո՞նց՝ ոչ մի բան չի փչացել, - չհասկացավ Տիգրանը, - տեսեք՝ լրիվ փորփրել են:

- Հա, - հանգիստ պատասխանեց մայրիկը, - ես ու Լուսինեն ենք փորել՝ հողը փխրեցրել ենք, որ նոր ցանած սերմերը լավ աճեն: Ա՛յ, շուտով կտեսնեք, թե ինչ չքնաղ ծաղկանոց ենք ունենալու:

- Պարզվում է՝ ոչ մի չարագործ էլ չկա՞ր, - հիասթափվեց Տիգրանը:

- Պարզվում է՝ ոչ, - ժպտաց մայրիկը:

- Բայց ծաղկանոցը առաջվանից սիրուն կլինի,- Տիգրանին սփոփեց Գրիգորը:

- Նորից խառնաշփոթ ստացվեց, - եզրակացրեց Անին:

- Գլուխներս մի բան էինք մտցրել ու չփորձեցինք էլ ստուգել՝ ճիշտ է՞, թե չէ, - համաձայնեց Տիգրանը:


- Ըհր, - դառնացած արձագանքեց Կոկոն, - ու ինչպես միշտ, ես դարձա քավության նոխազ:

- Դե լավ է, որ ամեն ինչ պարզեցիք, - ասաց մայրիկը, - միայն աշխատեք էլ չմոռանալ. մի բան մինչև վերջ պարզելուց առաջ հապճեպ եզրակացություններ չպիտի անեք:

- Չէ, չենք մոռանա, - հավատացրեց Անին, - ավելի լավ է մի երկու հարց ավել տանք, քան անտեղի իրար նեղացնենք: Տեսեք՝ մի օրվա մեջ քանի անգամ նույն սխալն արեցինք. Կոկոյին մեղադրեցինք, հերթապահությունը ձախողեցինք:

- Ինչ լավ է, որ ամեն ինչ պարզվեց: Դե՛, հիմա էլ եկեք ծաղկանոցով զբաղվենք, - ժպտալով ասաց մայրիկը: - Շուտ տուն վազեք ու միմի դույլ ջուր բերեք: Տեսեք՝ հողը չորացել է, սերմերը ծարաված կլինեն:

Խուզարկուները



30

Ըստ **Իռադա Սայյաշի** համանուն սցենարի, Արրբեջան
Թեմա՝ Արդյունավետ հաղորդակցում

Բ

նում պատկած՝ Կոկոն երագների գիրկն էր ընկել: Պատկերացնում էր, որ օրերից մի օր իր անգուգական դիմանկարը կստեղծի, որը նոր խոսք կլինի համաշխարհային գեղանկարչության պատմության մեջ:

- Ճիշտ ես ասում, գաղափարը լավն է, բայց նոր չի, - լավեց ցածից:

- Կոկոն անակնկալի եկած՝ տեղից վեր թռավ. այդ ո՞ր հանդուգն էր իր թաքուն մտքերը սողոսկել ու դեռ համարձակվում էր կարծիք հայտնել: Բնից գլուխը ցած կախեց, որ մի երկու քաղցր խոսք ասի, բայց պարզվեց, որ երեխաներն էին՝ հավաքված ինչ-որ բան էին քննարկում:

- ...Խուզարկու-խուզարկու տատիկս էլ է խաղացել, - ասում էր Գրիգորը:

- Հետո՞ ինչ, - առարկեց Լուսինեն, - իմ տատիկը մինչև հիմա էլ խաղում է. առավոտից կորած ակնոցն է փնտրում, հետո էլ, հենց գտնում է՝ սկսում է թերթը փնտրել: Մի անգամ երեք օր ակնոցը փնտրում էր, հետո հասկացավ, որ աչքերից չի էլ հանել, ու շատ ուրախացավ: Ուրեմն, ի՞նչ՝ մենք չխաղա՞նք:

- Իմ հայրիկն էլ էր հայտնի խուզարկու, - ոգևորված պարծեցավ Քուչոն, - մենք տոհմական խուզարկուներ ենք: Շերլոկ Հոլմսի մասին լսե՞լ եք: Նրա ջութակը հայրիկիցս եմ ժառանգել: Հենց տխրում եմ՝ նվագում եմ:

«Այ քեզ բա՛ն, - մտածեց Կոկոն: - Չեմ իմացել, որ Քուչոն ջութակ նվագել գիտի»:

- Ո՞վ ասաց՝ չխաղանք, - Քուչոյին ընդհատելով՝ Լուսինեին պատասխանեց Գրիգորը: - Ես ուզում էի ասել, որ խաղի կանոնները լավ գիտեմ ու կարող եմ բացատրել: Նախ պիտի ինչ-որ հանցագործություն լինի: Հետո պիտի վկաներ գտնենք, հանցանշաններ հավաքենք ու հանցագործին բացահայտենք:

- Շուտ եմ ասել՝ ես խուզարկու եմ, - վրա տվեց Քուչոն, որը մի փոքր անհանգստացել էր. բա որ ասեին՝ դու հանցանշա՞ն ես:

- Իհարկե, - հանգստացրեց Գրիգորը, - ես էլ, դու էլ խուզարկու ենք լինելու:

- Բա ե՞ս, - հարցրեց Անին:

- Դու էլ: Բոլորս էլ խուզարկու ենք լինելու, բացի Տիգրանից, - պատասխանեց Գրիգորը:

Կոկոն ականջները սրեց. չլինի՞, որոշել են Տիգրանին չխաղացնել: «Հա, էլի: Ինչպիսի՞ անարդարություն», - մտածեց Կոկոն ու այլևս չսպասեց, որ մինչև վերջ լսի, գաղտագողի գնաց Տիգրանենց տուն՝ զգուշացնելու ընկերների դավաճանության մասին:

Տեղ հասնելով, Կոկոն սկսեց ընկերներից բամբասել:

Սկզբում Տիգրանն ականջներին չհավատաց:

- Չի՛ կարող պատահել, - ասաց նա: - Որտեղի՞ց հնարեցիր: Կարող է՛ սխալ ես հասկացել, - հույսը չէր կորցնում Տիգրանը, բայց Կոկոն գլուխը թափահարեց:

- Չէ՛: Ականջներովս լսեցի: Գրիգորի խոսքերն են. «Բոլորը խուզարկու կլինեն, բացի Տիգրանից»:

- Պահ, հեչ պետքս էլ չի, - վիրավորված գլուխը կախեց Տիգրանը: - Իրենք էլ, իրենց խաղն էլ..., - ու աչքերն արցունք լցվեց:

Այդ պահին բակից երեխաների ձայնը լսվեց, որ Տիգրանին դուրս էին կանչում՝ Տի՛գրա՛ն, Տի՛գրա՛ն...

- Չպատասխանե՛ս, - խորհուրդ տվեց Կոկոն:

Տիգրանը չզհտեր՝ ինչ աներ. մի կողմից շատ էր նեղացել, մյուս կողմից էլ խաղալ էր ուզում: Բա որ Կոկոն ճիշտ հասկացած չլինե՞ր: Թե չէ՛ ինչու՞ պիտի իրեն բակ կանչեին: Հետո չդիմացավ՝ վազեց պատուհանի մոտ, դուրս նայեց ու վիրավորված ձայնով ասաց.

- Գնացե՛ք, ես ձեզ հետ չե՛մ խոսում:

Երեխաները շվարած իրար նայեցին. էս Տիգրանին ի՞նչ ճանճ էր կծել: Գրիգորը գլուխը քորելով մի քիչ մտածեց ու եզրակացրեց.

- Ըհը, տեսա՞ք: Սա էլ ձեզ հանցագործություն, որ պիտի բացահայտենք:

- Ի՞նչ հանցագործություն, - չհասկացավ Լուսինեն:

- Պարզ չի՞: Ինչ-որ մեկը մեր խոսակցությունը կիսատ-պռատ Տիգրանին պատմել է ու թյուրիմացության մեջ գցել:

- Լավ բան չեղավ, - մտահոգված ասաց Քուչոն: - Հիմա Տիգրանը մեր մասին սխալ բաներ կմտածի: Դե արի՛ բացատրիր: Չէ՛, ստիպված պիտի չարագործին բացահայտենք, որ մեր բարի անունը վերականգնենք:

- Ուրեմն, ինձ լսեք, - վճռական ձայնով ասաց Գրիգորը, - ձեզ տա-
սը բոպե ժամանակ եմ տալիս: Տասը բոպեից կազմ ու պատրաստ,
Ծառի տակ լինեք: Միասին կորոշենք՝ ինչ ենք անելու:

Տասը բոպեից հետախուզությունն սկսվեց: Քուչոն գետինը հոտո-
տելով դետուղեն էր վազվզում ու հուզմունքից շարունակ սեփական
պոչն էր բռնում, իսկ երեխաները, չորեքթաթ, խոշորացույցով զինված՝
սկսեցին տեղանքը գննել: Երկար փնտռուտից հետո Լուսինեն ձայն
սվեց ընկերներին.

- Տեսեք՝ ինչ եմ գտել: Փետուր է:

- Ըհը՛... , - փետուրը ձեռքն առնելով՝ մտազբաղ ասաց Գրիգորը: -
Իմ կարծիքով, գործն առաջ է գնում: Ապրե՛ս, - գովեց Լուսինեին, - շա-
բունակիր որոնումները:

Քիչ անց Քուչոն էլ բացականչեց.

- Հե՛յ, տեսեք՝ ինչ եմ գտել՝ հանցագործի ոտնահետքը...

Քուչոյի ցույց տված հետքերը տանում էին տան կողմը: Իսկ անից
հենց այդ պահին, բանից անտեղյակ, Կոկոն էր դուրս գալիս: Տեսնե-
լով, որ երեխաները գետնին հետքեր են գտել ու իսկույն հասկանալով՝
ինչն ինչոց է, նա թրմփոցով փռվեց գետնին՝ ձևացնելով, թե իր համար
հանգիստ քնած է ու սկսեց ականջ դնել: Իսկ Գրիգորը ոգևորված
ասում էր.

- Վերջապես հանցագործության պոչը բռնեցինք: Հետքերից պարզ
է. հանցագործը փոքր-մոքր է, բոյը, երևի, մի 70 սանտիմետր, կոշիկ չի
հագնում, ոտքերին երեք մատ ունի:

Քուչոն վախեցած իր թաթերին նայեց. ինքն էլ էր ոտաբոբիկ. հան-
կարծ իրեն չկասկածե՞ն: Հետո հաշվեց, որ մատները երեքից շատ են
ու հանգատացավ: Իսկ Գրիգորը շարունակում էր հավանական հան-
ցագործի նկարագիրը:

- ...Մարմինը կանաչ է, փետրավոր, կապույտ ականջօղեր ունի, չի
բացառվում, որ թռչուն է:

Քուչոն մի քայլ առաջ եկավ. թող բոլորը համոզվեն, որ ինքը ո՛չ կա-
նաչ է, ո՛չ ականջօղեր ունի, ո՛չ փետուրներ: Ա՛յդ էր պակաս:

Իսկ Կոկոն հետաքրքրությունից մի աչքը բացեց, որ տեսնի, թե
Գրիգորն ինչի՞ց իմացավ ականջօղերի մասին ու...դեմ-դիմաց տեսավ
Քուչոյի բրդոտ դունչը:

ԽՈՒՂԱՐԿՈՒՆԵՐԸ

Որոշ ժամանակ անց բոլորը հավաքվել էին Ծառի տակ, ու Գրիգորը պատմում էր, թե ինչպես կարողացավ բացահայտել հանցագործությունը.

- Որ տեսանք՝ Տիգրանը նեղացել է, իսկույն հասկացանք. հաստատ մի բան է պատահել:

- Բա դու չասացի՞ր՝ բոլորս էլ խուզարկու կլինենք, բացի Տիգրանից: Ականջովս լսեցի, - փորձում էր արդարանալ Կոկոն:

- Հա, - պատասխանեց Գրիգորը, - բայց որ մինչև վերջ լսեիր, կիմանայիր. Տիգրանի համար ավելի կարևոր գործ էի մտածել. որ մի հանցագործություն հորինի խաղի համար:

- Հասկացա, - ասաց Տիգրանը, - Քուչոյի օրն ընկա: Հիշո՞ւմ եք, որ առանց հաստատ իմանալու, որոշել էր, թե ծննդյան օրը մոռացել ենք ու հետը չենք խաղում: Ինձ տեղն է: Սրանից հետո չեմ մոռանա՝ ենթադրություններ անելու փոխարեն պիտի բոլորին մինչև վերջ լսես, հետո եզրակացնես:

- Ճիշտ է, - շտապեց իր վրայից մեղքը գցել Կոկոն, - փոխանակ գնաս ու ինքդ պարզես, սրա-նրա խոսքերից ընկերներիցդ խռովում ես:

Բոլորը ծիծաղեցին, իսկ Լուսինեն մտածեց, որ իսկապես շատ կարևոր է մարդկանց մինչև վերջ լսել կարողանալը: Նա վստահ էր, որ իր բոլոր ընկերներն էլ հենց նույն բանն էին մտածում և, իհարկե, չէր սխալվում:



Կոսրված ծաղկամանը

Ըստ **Բերնարդինե Սարգսյանի** համանուն սցենարի, Հայաստան

Թեմա՝ **Խնդիրների համաժողովում,
որոշումների կայացում**

Sիգրանը, գրասեղանի առաջ նստած, փորձում էր մաքենատիկայի տնայինից գլուխ հանել: Այդ պահին սենյակի դուռը բացվեց ու Գրիգորը ներս մտավ:

- Ի՞նչ կա, ի՞նչ չկա, - բարևեց ընկերոջը:

- Հեչ, ի՞նչ պիտի: Մաթեմի խնդիրն եմ լուծում:

- Գալիս ե՞ս՝ ֆուտբոլ խաղանք: Մաթեմը հետո միասին շուտ կլուծենք:

Տիգրանը կարոտով գնդակին նայեց, էլի ծանր հոգոց հանեց ու ասաց.

- Չէ՛: Մայրիկիս խոստացել եմ, որ դասերս վերջացնեմ՝ նոր:

Լռության մեջ ճանճի տոգոց լսվեց: Տիգրանը տետրը վերցրեց ու տեղից վեր թռավ:

- Մենակ դու էիր պակաս: Տը՛զզզ, հա, տը՛զզզ, - ու տետրը ոլորած՝ սենյակով մեկ ճանճի հետևից ընկավ:

Ճանճը տոգոցով վայրէջք կատարեց սեղանի ծաղկամանին:

- Դե, հիմա հախիցդ կգամ:

Այս խոսքերով տղան, ինչքան ուժ ուներ՝ տու՛ր թե կտաս՝ խփեց ծաղկամանին: Ծաղկամանը ճոճվեց, ընկավ, գլորվեց սեղանից ցած ու փշուր-փշուր եղավ: Տիգրանը սարսափից տեղում քարացավ:

- Հիմա ի՞նչ եմ անելու: Մայրիկիս ամենասիրած ծաղկամանը ջարդեցի: Պատկերացնում եմ, թե ոնց կտխրի, ոնց կբարկանա: Հիմա ի՞նչ եմ անելու:

Մի քանի րոպե տղաները լուռ աչքները հառել էին հատակի փշուրներին ու չէին կարողանում ուշքի գալ: Երկուսի գլուխներում էլ տարբեր մտքեր էին պտտվում, բայց որևէ խելքին մոտ լուծում չէին կարողանում մտածել:

- Իմացա՛, - վերջապես բացականչեց Գրիգորը, սեղանից թուրթ ու գրիչ վերցրեց ու սկսեց գրել: - Ըհը՛, չորս տարբերակ եմ մտածել, թե ինչ կարող ես անել: Տես՝ որն ես հավանում: Առաջին՝ մայրիկին ասում ես, որ ծաղկամանն ինքնիրեն ընկավ՝ դու կապ չունես:

- Ըհը՛, - ոգևորվեց Տիգրանը, - կասեմ՝ պատուհանը բացվեց, քամին փչեց, ծաղկամանն ընկավ, կոտրվեց:

Բայց հետո գլուխը կախեց ու հիասթափված նստեց տեղը:

- Չէ՛, մի տեսակ դուրս չի գալիս: Չեմ ուզում մայրիկին սուտ ասել: Մյո՞ւսը ինչ է: «Խանութից նոր ծաղկաման գնել՝ ճիշտ սրա նման»: Այ, սա ուրիշ: Բա ի՞նչ՝ գնամ խանութ, նույն ծաղկամանից բերեմ, դնեմ տեղը: Մայրիկը ոչ էլ կհմանա:

Այս խոսքերով Տիգրանը դարակից իջեցրեց իր կավե զանձատուփը, որի մեջ նոր հեծանիվի փող էր հավաքում, միջինը թափ տվեց սեղանին, հաշվեց, լցրեց գրպանն ու սենյակից դուրս թռավ: Հինգ րոպե չանցած՝ արդեն խանութում էր: «Ու՛խ, բախտս բերեց» -, մտածեց տղան. ցուցափեղկում ճիշտ և ճիշտ իրենց ծաղկամանից էր ցուցադրված: Հինգ րոպե էլ, ու ծաղկամանը ձեռքին, ուրախությունից շուրջը ոչինչ չնկատելով, նա արդեն տուն էր սլանում: Մեկ էլ՝ օ՛ սարսափ, ամբողջ թափով բախվեց իրեն դեմ-հանդիման թռչող Կոկոյին: Տիգրանը հետո չէր էլ հիշում, թե ինչը ոնց եղավ. նրա ականջներում միայն ջարդվող ապակու զնգոցն էր:

- Ի՛նչ խայտառակություն, - իրեն մեղավոր զգալու փոխարեն դեռ մի բան էլ Տիգրանին ամոթանք էր տալիս Կոկոն: - Մայրիկի ամենասիրելի ծաղկամանը բա կջարդե՞ն: Գոնե մի ուրիշ բան ջարդեիր:

- Էն էլ՝ երկու անգամ, - ասաց Տիգրանը՝ լացը հագիվ զսպելով:

- Լավ, սրտիդ մոտ մի՛ ընդունիր, - տղայի հուսահատությունից ազդված՝ փորձեց մխիթարել Կոկոն, - կգնանք՝ մի հաստ էլ կառնենք:

Բայց Տիգրանը գլուխը տխուր թափահարեց.

- Նորի համար փողս չի հերիքի:

- Մենք էլ հինը կառնենք, - իր կարծիքով սրամտեց Կոկոն, բայց տղայից պատասխան չստացավ: Երկուսով տխուր-տրտում վերադարձան տուն:

- Պիտի որոշում ընդունեմ, - ասաց Տիգրանն ու մտքերի մեջ ընկավ:

- Լսիր, ո՞նց էի մոռացել: Ախր, իմ տատիկը հայտնի որոշում ընդունող է: Գիտե՞ս, քանի գիրք է գրել ինքնուրույն որոշումներ ընդունելու մասին: Գնամ՝ բերեմ, - ասաց Կոկոն:

- Ինքնուրույն որոշումը ո՞րն է, - չհասկացավ Տիգրանը: - Հա՛, այսինքն՝ մենակ, առանց ուրիշների օգնությա՞ն: Բայց Կոկոն արդեն լուսամուտից դուրս էր թռել:

Կոկոն գնաց, հիմա էլ Գրիգորը եկավ:

- Հը՞, ի՞նչ արեցիր:

- Ի՞նչ պիտի: Ծաղկամանը ոնց առա, էնպես էլ նորից կոտրեցի: Յուցակդ ու՞ր է, էլ ի՞նչ էիր մտածել: «Տարբերակ երրորդ - փշուրները ավել ու մայրիկին ոչինչ չասել: Երևի չի նկատի»: Չէ, սա էլ չի ստացվի, ո՞նց չի նկատի, եթե իր սիրած ծաղկամանն է: Բանից դուրս է գալիս՝ որոշում ընդունելը հեշտ բան չի:

- Իսկ սա՞, - ցուցակի վերջին կետն ընթերցեց Գրիգորը, - «Սոսնձել՝ կպցնել»: Եթե լավ կպցնենք, ոչ մի բան էլ չի նկատվի:

- Ըհը, մինչև մայրիկիս ծաղիկներ մվիրեն, - դառը քսմիծաղ տվեց Տիգրանը: - Հենց որ մեջը ջուր լցնի, բոլոր ճեղքերից կհոսի դուրս: Չէ, խելքս բան չի կտրում:

Այսպես շվարած կանգնել էին, մեկ էլ Կոկոն, կտուցով մի հաստափոր գիրք մի կերպ բռնած, հագիվ իրեն լուսամուտից ներս գցեց:

- Օ՛ֆ, - գիրքը տղաների առաջ դնելով՝ շունչ քաշեց Կոկոն, - հագիվ գտա: Ըհը՛. «Ինչպես ինքնուրույն նորոգեմ թեյնիկը, երբ պապիկը տանը չէ»: Այ քեզ բա՛ն, էսքան չարչարվեցի ու սխալ հատորն եմ բերել:

- Սպասե՛ք, - հանկարծ տեղից վեր թռավ Տիգրանը: - Որոշեցի՛: Ամեն ինչ մայրիկին կպատմեմ ու վերջ:

- Գի՞ժ ես, - սարսափեց Կոկոն, - գիտե՞ս՝ քեզ ինչ կանի: Գոնե ասեիր՝ Քուչոն է կոտրել:

- Որ անմեղ տեղը Քուչոյին պատժի՞: Ու դու քեզ լա՞վ կզգաս:

- Չէ, - խոստովանեց Կոկոն, - լավ չեմ զգա:

- Բա ի՞նչ անենք, - հարցրեց Գրիգորը:

- Իսկ որ փորձենք խնդրին ուրիշ աչքով նայե՞լ, - առաջարկեց Տիգրանը:

- Ո՞ր, - չհասկացավ Կոկոն, - էս աչքո՞վ, - հարցրեց ու ձախ աչքը փակեց, աջը պլշեց, - թե՞ էս աչքով, - հիմա էլ աջը փակեց, ձախը պլշեց:

- Մայրիկիս աչքով, - բացատրեց Տիգրանը, - ասենք՝ դու մայրիկս լինեիր, ի՞նչ կանեիր:

- Ե՞ս: Հը՛մմ, - մտքերի մեջ ընկավ Կոկոն, - երևի քեզ անկյուն կկանգնեցնեի: Հետո, երևի կներեի:

- Ես էլ դա եմ ասում, - վճռական հայտարարեց Տիգրանը: - Ես արել եմ, ես էլ պիտի արածիս համար պատասխան տամ: Արդեն

որոշեցի՝ ամեն ինչ կպատմեմ, կասեմ, որ ես եմ ծաղկամանը կոտրել:
Խիղճս հանգիստ կլինի:

- Ի՞նչ իմանամ, երևի ճիշտ ես որոշել, - ուսերը թոթվեց Կոկոն:

Տիգրանը ժամացույցին նայեց:

- Ժամը վեցն է: Ուր որ է՝ մայրիկը կգա:

- Հա՞, արդեն ժամը վե՞ցն է, - իրար անցավ Կոկոն. մայրիկին հան-
դիպելու հեռանկարը նրան այնքան էլ չէր ոգևորում: - Ոնց էի մոռա-
ցել, ախր ես կարևոր գործեր ունեմ:

- Ես էլ գնացի: Վաղը կտեսնվենք, - Կոկոյին միացավ Գրիգորը, -
քեզ էլ՝ հաջողություն:

- Դե լավ, գնացեք, - հոգոց հանելով ասաց Տիգրանն ու պատրաստ-
վեց մայրիկին դիմավորելու: «Ինչ հետաքրքիր է, - մտածեց բազմոցին
տեղավորվելով, - հենց որ որոշեցի, մի տեսակ թեթևացա»:

Քիչ անց մայրիկը տուն մտավ: Տիգրանը մոտեցավ, մայրիկին
գրկեց.

- Բարև, մամ ջան:

- Բարև, - տղային համբուրելով ասաց մայրիկը: - Ի՞նչ կա, ի՞նչ
չկա:

- Քեզ երեք բան եմ ասելու: Երկուսը վատ, մեկը՝ լավ: Ո՞ր մեկից
սկսեմ:

- Չլինի՞ դպրոցում կռիվ ես արել, - անհանգստացավ մայրիկը:

- Չէ, է, մամ:

- Ուրեմն հաստատ էլի երկուս ես ստացել, - շարունակում էր
ենթադրություններ անել մայրիկը:

- Մամ, լսիր, ուղղակի...

- Բա էլ ի՞նչ վատ լուր մնաց, - զարմացած հարցրեց մայրիկը:

- Առաջին վատ լուրը՝ որ քո սիրած ծաղկամանը ջարդեցի: Լավ
լուրը՝ վազեցի՝ խանութից նորը առա, իսկ վերջին վատ լուրն էլ՝ որ
բերելուց դա էլ ջարդեցի, - մի շնչով վրա տվեց Տիգրանը, քանի մայրի-
կը չէր հասցրել էլի ինչ-որ ենթադրություններ անել:

- Վայ, ես էլ վախեցա, թե լուրջ բան է պատահել, - թեթևացած շունչ
քաշեց մայրիկը, - ծաղկամանն, իհարկե, ափսոս է, բայց, ի՞նչ արած՝
պատահում է:

- Ո՞նց, չե՞ս բարկանում, - ականջներին չհավատաց Տիգրանը:

Մայրիկը նայեց տղայի աչքերին ու լուրջ ձայնով հարցրեց.

- Հո դիտմամբ չե՞ս ջարդել:

- Չէ, մամ, պատահաբար ստացվեց:


- Դե, ուրեմն էլ ինչու՞ պիտի բարկանամ: Բայց խոստացիր, որ մյուս անգամ զգույշ կլինես:

- Ազնիվ խոսք, մամ ջան, սրանից հետո շատ զգույշ կլինեմ, - խոստացավ Տիգրանն ու նորից գրկեց մայրիկին:

Երեկոյան Կոկոն, Ծառի ճյուղին հարմարավետ թառած, երեխաներին շուրջը հավաքած, կոտրված ծաղկամանի պատմությունն էր պատմում.

- Գիտե՞ք՝ ինչ դժվար էր որոշում կայացնելը, թե Տիգրանն ինչպես վարվի: Բայց մենք ձևը գտանք. խնդիրն ի՞նչ էր. մայրիկի սիրելի ծաղկամանը կոտրվել էր: Նախ մտածեցինք, թե որն էր մեր նպատակը, - բացատրում էր Կոկոն: - Մենք ուզում էինք, որ մայրիկը չվշտանա ու մեզ վրա շատ չբարկանա: Դրա համար մի քանի լուծում մտածեցինք՝ թե ինչ անենք: Հետո ծանրութեթև արեցինք ու տեսանք, որ մեր լուծումները բանի պետք չեն, ու նոր լուծումներ մտածեցինք: Բոլորը հերթով փորձեցինք, մինչև ամենաճիշտ լուծումը գտանք: Բա՞, - հպարտ-հպարտ եզրափակեց Կոկոն, - ու սովորեցինք ինքնուրույն որոշում կայացնել:

Պարող



Ըստ **Նանա Կաղիազիլի** համանուն սցենարի, Վրասան

Թեմա՝ **Խնդիրների համաժողովում,
որոշումների կայացում**

Լուսինեն, Անին, Գրիգորը, Քուչոն և Կոկոն բախում պահմտոցի էին խաղում: Մեկ էլ հայտնվեց Տիգրանը՝ ձեռքին մագնիտոֆոն: Մոտեցավ Ծառին, մագնիտոֆոնը գետնին դրեց, շատ բարձր միացրեց ու սկսեց երաժշտության տակ գալարվել:

- Ձիլ է պարում, - հիացած ասաց Կոկոն:

- Ի՞նչ սարսափելի աղմուկ է: Ականջներս խլացան, - բացականչեց Անին ու, չդիմանալով, մոտեցավ մագնիտոֆոնին, որ ձայնն իջեցնի:

- Ի՞նչ ես անում, - վրդովվեց Տիգրանը, - չես տեսնու՞մ՝ պարել եմ սովորում: Մի՛ խանգարեք:

Ու կռացավ, որ ձայնը բարձրացնի:

- Բայց մենք էս աղմուկին չենք դիմանում, - ասաց Գրիգորը՝ ձայնը նորից իջեցնելով, - կամ ձայնն իջեցրու, կամ գնա ուրիշ տեղ պարիր: Գլուխներս ցավեց: Հո ականջներս բամբակ չե՞նք խոթելու:

- Շատ ճիշտ էլ մտածել եք: Որ բամբակ խոթեք՝ աղմուկը չեք լսի, - ուրախ ասաց Տիգրանն ու ձայնը բարձրացրեց:

- Ա՛յ Տիգրան, ախր խանգարում ես, չե՞: Էս աղմուկին ո՞նց ենք տնային անելու,- Անին փորձեց Տիգրանին հասկացնել, որ արածը խելոք բան չի՝ սխալ է:

- Մեկ է՝ պիտի պարեն, - համատեց Տիգրանն ու նորից ձայնը մինչև վերջ բարձրացրեց:

- Լավ է, չե՞, - վրդովվեց Կոկոն, - ինքը պիտի պարի: Իսկ որ ես էլ ուզում եմ մի քիչ քնեն՝ հե՞ջ:

- Ես մեղավո՞ր եմ, որ օրը ցերեկով քունդ տանում է: Քո քունն է տանում, ինքդ էլ մտածիր, թե ոնց քնես: Ի՞նձ ինչ:

Տիգրանը համառորեն ձայնը նորից բարձրացրեց, բայց Գրիգորը նույնքան համառորեն իջեցրեց:

- Լավ, սա՞ էր ձեր ուզածը, - ասաց Տիգրանն ու սկսեց լռության մեջ անհեթեթ շարժումներ անել, - առանց երաժշտության կպարեն: Հը՛, հավանեցի՞ք: Տանը պարում եմ՝ խանգարում եմ, բախում պարում եմ՝ խանգարում եմ: Դե արի ու պարել սովորիր, - փնթփնթաց տղան ու մագնիտոֆոնը թևի տակ դնելով՝ հեռացավ:

- Լավ չստացվեց, - լռություներ խախտեց Ծառը, - ձեր ընկերոջը նե-

դացրիք:

- Բա ի՞նչ անեինք, - առարկեց Կոկոն, - ես պարարվեստը հարգում եմ, բայց որ գլուխս ցավում է, ասեմ՝ չի ցավո՞ւմ:

- Չէ, ուզում էի ասել՝ գուցե մտածենք ու մի լուծո՞ւմ գտնենք, որ Տիգրանը կարողանա պարել, դուք էլ աղմուկից չնեղվեք, - բացատրեց Ծառը:

- Ես գտնելու մեծ վարպետ եմ, - պոչը թափահարելով պատրաստակամությամբ հայտնեց Քուչոն, - միայն հոտն առնեմ, հետքը բռնեմ՝ ինչ լուծում ուզեք՝ իսկույն կգտնեմ:

- Մայրիկս ասում է, որ ճիշտ լուծում գտնելը հաց ու պանիր ուտել չի՝ իսկույն չես գտնի, - ասաց Լուսինեն ու մտքերի մեջ ընկավ:

- Մանավանդ այնպիսի լուծում, որ բոլորը գոհ մնան, - ավելացրեց Գրիգորն ու ինքն էլ մտքերի մեջ ընկավ:

- Ինձ էլ դուք չեկավ, որ Տիգրանին նեղացրինք, - ասաց Անին, - երանի մի բան մտածեինք, որ ուրախանար:

- Ասա՛ գա պարի: Իսկույն կուրախանա, - հեզմեց Կոկոն:

Լուսինեն շատ խելամիտ աղջիկ էր: Նա հիշում էր, որ լուծումներ փնտրելուց առաջ նախ պետք է խնդիրը մի լավ պատկերացնել:

- Ուրեմն, պիտի մի ձև գտնենք, որ Տիգրանը պարի, բայց երաժշտությունը մեզ չխանգարի, - իրենց նպատակն ամփոփեց նա:

- Հեքիաթներ մի պատմիր: Ո՞նց կլինի, որ հա՛մ երաժշտությունը լինի, հա՛մ մենք ձայնը չլսենք: Թե՞ կախարդական փայտիկ ունես, - ասաց Քուչոն:

- Ոչ մի կախարդական փայտիկ էլ պետք չէ, - տեղից վեր թռավ Անին, - ես լուծումը գտա՛:

Երեխաները խմբվեցին նրա շուրջը. տեսնես ի՞նչ էր հնարել:

Հաջորդ առավոտ բոլորը, Տիգրանից բացի, հավաքվել էին Ծառի տակ:

- Հը՞, - հարցրեց Ծառը, - արեցի՞ք՝ ինչ որ որոշել էիք:

- Ըհը՛, - միաձայն պատասխանեցին երեխաները, - Պատրաստ է:

Ու անհամբեր սկսեցին Տիգրանին սպասել: Շուտով Տիգրանը հայտնվեց, բայց ո՛չ ցատկոտում էր, ո՛չ մազերն էին զգգզված, ո՛չ շալվարն էր պատռված, ո՛չ գնդակ կար ձեռքին: Առհասարակ նա բոլորովին նման չէր ինքն իրեն. տխուր, գլխահակ, ոտքերը հազիվ քարշ տալով քայլում էր ու նույնիսկ ընկերների կողմը չէր նայում:

- Տիգրան, կգա՞ս գնդակ խաղանք, - կանչեց Գրիգորը:
- Չէ՛, - առանց գլուխը բաճրացնելու, քթի տակ պատասխանեց Տիգրանը:
- Իսկ պահմտոցի՞, - հարցրեց Անին:
- Հավես չունեմ:
- Կուզե՞ս՝ ներկերս բերեմ՝ նկարենք, - առաջարկեց Լուսինեն:
- Ոչ մի բան էլ չեմ ուզում: Ինձ հանգիստ թողեք, - ասաց Տիգրանը:
- Ես պարել էի ուզում, բայց բոլորիդ խանգարում եմ:
- Չես խանգարի, չես խանգարի, - միաձայն բացականչեցին ընկերները, - մենք էլ ենք ուզում, որ դու լավ պարել սովորես:
- Բայց ի՞նչ անեմ: Առանց երաժշտության չի ստացվում: Ճարս ի՞նչ:
- Մենք քո ճարը գիտենք, շատ էլ լավ ճար է՝ էլեկտրասարքերի խանութում ենք գտել, - բազմանշանակալից ասացին ընկերներն ու եկան, շրջապատեցին Տիգրանին:
- Առ, - ասաց Գրիգորն ու ձեռքի տուփը մեկնեց ընկերոջը:
- Տիգրանը զարմացած վերցրեց տուփն ու սկսեց բացել: Տուփի մեջ մի հրաշալի փոքրիկ նվագարկիչ էր՝ ականջակալներով:
- Տեսա՞ր: Հիմա ինչքան ուզես՝ ձայնը կբարձրացնես, - ասաց Ծառը, - ու ոչ ոք չի բողոքի, թե աղմուկ է:
- Ուռռաաա՛, - Տիգրանի հրճվանքը չափ ու սահման չունեի, - հիմա ինչքան կուզեմ՝ կպարեմ, - ու սլացավ տուն, որ ձայնագրությունը բերի:
- Ինչ լավ ստացվեց, - ասաց Կոկոն, - փաստորեն, եթե մտքիդ դնես՝ միշտ էլ լուծում կգտնես: Հիմա մնում է՝ մի լավ համերգ կազմակերպենք ու Տիգրանը ելույթ ունենա:

Քնած գեղեցկուհին



45

Ըստ **Իրմա Չուրիցիձեի** համանուն սցենարի, Վրասան
Թեմա՝ Խնդիրների համատեղ լուծում,
որոշումների կայացում

Անիի համար գիրք կարդալուց լավ զբաղմունք չկար: Հատկապես հեքիասք կարդալ էր սիրում: Նրան կլանում էր բարի փերիների, գեղեցիկ արքայադուստրների ու քաջ ասպետների կախարդական աշխարհը: Ինքն էլ էր իրեն պատկերացնում մի գեղեցիկ արքայադուստր կամ ասպետ, որը հաղթելու է չարին: Հրճվում էր բարու հաղթանակով, տխրում էր, երբ հերոսները դժվարությունների էին հանդիպում: Չնայած, հեքիասքներում բարին միշտ էլ հաղթում էր:

Այդ օրն էլ, հերթական գիրքը կարդալ-վերջացնելով, նա բակ իջավ ու ընկերներին առաջարկեց թատրոն-թատրոն խաղալ՝ մի հեքիասք բեմադրել:

Գաղափարը բոլորին դուր եկավ: Տիգրանն սկսեց ոգևորված բացատրել, որ ամենահեշտը Շառլ Պերոյի «Քնած գեղեցկուհին» բեմադրելն է:

- Բոլորս էլ կարդացել ենք, համ էլ ամբողջ հեքիասքի ընթացքում գլխավոր հերոսը քնած է: Խաղալու բան չկա, մենակ պիտի համոզիչ խոմփա:

Լուսինեն փռթկաց. դժվար էր պատկերացնել, որ գեղեցկուհիները խոմփում են:

- Ե՞րբ ես խոմփացող գեղեցկուհի տեսել, - հարցրեց Տիգրանին:

- Ինչու՞, լավ էլ խոմփում են: Քնած ժամանակ շա՞տ է երևում՝ գեղեցիկ են, թե տգեղ:

Քուչոն նախանձով Կոկոյին նայեց ու մտածեց. «Պարզ է՝ դերը Կոկոյին կտան. Կոկոյի խոմփոցը ո՞վ չգիտի»: Նույն բանը Կոկոյի մտքով էլ անցավ:

«Գլխավոր դերում՝ ժողովրդական դերասան, փետրավոր գեղեցկուհի Կոկոն: Միայն մեկ ներկայացում...», - իսկույն մտովի պատկերացրեց ազդագրերն ու իրենից գոհ՝ քթի տակ ժպտաց:

Կոկոյին երազներից գետին իջեցրեց Անիի ձայնը: Իր վրա բեմադրիչի պարտականությունները վերցրած՝ նա սկսել էր դերաբաշխում անել և ասում էր.

- Քնած գեղեցկուհին պիտի լինի գեղեցիկ ու խելացի:

«Իմ մասին է ասում», - մտածեց Կոկոն ու իրեն անչափ երջանիկ

զգաց. ի՞նչ լավ ընկերներ ունի: Իսկ Անին շարունակում էր.

- Պիտի ոչ միայն սլացիկ մարմին ու սիրուն արտաքին ունենա, այլ քարի լինի ու դաստիարակված:

Այս բառերից Կոկոյի սիրտը մի անասհման ջերմությամբ լցվեց. իսկ և իսկ իր մասին էր խոսում: Իսկ երբ Անին ասաց, որ արքայադուստրը պիտի նաև քնքուշ ձայն ունենա, Կոկոյի վերջին կասկածներն ի չիք դարձան. այլևս կասկած չկար: Գլխավոր դերն իրեն են տալու: Թևերի սահուն շարժումով նա տեղափոխվեց մոտակա ճյուղին, որպեսզի լավ երևա, ու ընկերները կարողանան ըստ արժանվույն գնահատել նրա բոլոր բարեմասնությունները: Նրա թևերի թփփոցից երեխաները գլուխները բարձրացրին: «Ինձնով են զմայլվում», - մտածեց Կոկոն ու գլուխը շրջեց, որ բոլորը տեսնեն իր անթերի դիմագծերը, կտուցի նուրբ գծվածքը: Հպարտությունից Կոկոն հնդկահավի պես փքվեց ու շարունակեց երազել. «Միայն մեկ ներկայացու՛մ: Մեր ազգի պարծանք, հանրահայտ Կոկոն՝ նշանավոր Քնած գեղեցկուհու դերում: Բաց մի՛ թողեք բացառիկ հնարավորությունը, շտապե՛ք տոմսեր ձեռք բերել...»:

- Այս դերի համար ամենահամապատասխանը, - ասում էր Անին... «Հիմա՛, հիմա իմ անունը կտա»՝ վստահ էր Կոկոն, բայց աղջկա վերջին խոսքերը նրան դառն իրականություն վերադարձրին, - Լուսինեն՛ է:

«Երևի սխալմունք է՝ լեզվի սայթաքում», - դեռ հույսը չկորցնելով, Կոկոն փորձեց ինքն իրեն հանգստացնել, ու ջանալով ձայնին տիրապետել, հանգիստ հարցրեց.

- Ինչ ասացի՞ր՝ լավ չլավեց:

- Ասում եմ՝ Գեղեցկուհու դերը Լուսինեն կխաղա, - Կոկոյի ներքին տվայտանքներից անտեղյակ՝ պատասխանեց Անին:

- Ո՞նց, ո՞նց՝ Լուսինեն: Ո՞նց թե՛ Լուսինեն, - զայրույթից կակազելով պոռթկաց Կոկոն, - Չեք էլ ամաչու՞մ:

Բոլորն ապշահար նրան նայեցին. Կոկոյի՞ն ինչ ճանճ կծեց, ախր, նոր լավ էր:

- Քեզ ի՞նչ պատահեց, - զարմացած հարցրեցին նրանք:

- Չե՛ ձե՞զ ինչ պատահեց: Կույրին էլ է պարզ՝ այդ դերը ե՛ս պիտի խաղամ:

- Բայց ես քեզ համար ուրիշ՝ ավելի լավ դեր եմ մտածել, - ասաց Անին:

- Հը՞, - Կոկոյի հոգում նորից հույս առկայծեց, - ի՞նչ ավելի լավ դեր:

- Շատ դժվար դեր է, ու իսկապես քեզանից բացի ոչ ոք չի կարողանա խաղալ, - բացատրեց Անին, ու Կոկոն նորից երջանկությունից փրվեց. «Ա՛յ, եղպես. թող բոլորը լսեն, որ իրենից լավ խաղացող չկա...»:

- Ո՞րը, - փափկելով, հետաքրքրվեց նա:

- Չար կախարդի, - ասաց Անին: - Սև շոր հագած պիտի թևածես ու չարագույժ կոկոսա: Թե չէ՝ Գեղեցկուհին ի՞նչ՝ մենակ քնում է ու քնում: Համ էլ՝ Չար կախարդն էլ պակաս գեղեցկուհի չի:

Կոկոյին դուր եկավ, որ կախարդն էլ է գեղեցկուհի: Ուրեմն կարելի է խաղալ: Անին թեթևացած շունչ քաշեց ու շարունակեց դերաբաշխումը: Գրիգորին բաժին ընկավ Արքայագնի դերը, Տիգրանին՝ Հեղինակի, իսկ Քուչոյին՝ Նժույգի: Հիմա էլ ըմբոստանալու հերթը Քուչոյինն էր:

- Ես առանց խոսքի դեր չեմ ուզում: Ինչու՞ իմ դերը խոսքեր չունի:

- Որովհետև Նժույգ ես: Ե՞րբ ես տեսել՝ նժույգները խոսեն, - բացատրեց Տիգրանը:

- Ես չխոսողի դեր չեմ ուզում, - կտրականապես հրաժարվեց Քուչոն:

Անին զինվեց համբերությամբ ու փորձեց բացատրել, որ թատրոնում կարևոր ու անկարևոր դերեր չեն լինում՝ բոլոր, նույնիսկ առանց խոսքի դերերը, կարևոր են: Օրինակ՝ եթե Արքայագնը առանց Նժույգ մնա, ո՞նց կազատի Գեղեցկուհուն:

- Հա՛, էլի, - Անիի խոսքերը ծանրութեթև անելով՝ համոզվեց Քուչոն և ուրախ-ուրախ պոչը թափահարեց, - դուրս է գալիս, որ առանց իմ դերի հեքիաթը չէր էլ լինի:

Մյուս օրն առավոտից երեխաներն անցան փորձի: Բոլորը շատ հուզված էին, հատկապես՝ Քուչոն. չէ՞ որ ամբողջ ներկայացումն իրենից էր կախված: «Բա որ դերս մոռանա՞մ», - անհանգստացած մտածում էր նա, հետո հիշում էր, որ խոսքեր չունի ու թեթևացած շունչ էր քաշում. «Բախտս բերեց...»:

Ի տարբերություն Քուչոյի, Տիգրանի տրամադրությունը սովորականից բարձր էր: Նա մերթ մեկին էր մոտենում, մերթ մյուսին ու շշմջում էր. «Գիտե՞ք, չէ՞, Լուսոն ամբողջ գիշեր դերն էր փորձում»: Երբ ընկերները զարմանում էին, ասում էր. «Հա, մուշ-մուշ քնած խոնկում էր», ու ինքն իր սրամտության վրա հռհռում էր:

Փորձն սկսվեց: Տիգրան-Հեղինակը բեմ բարձրացավ ու հանդիսավոր ձայնով սկսեց պատմել.

- Լինում է, չի լինում՝ մի թագավոր: Մի գեղեցիկ օր աղջիկ է ունենում:

Ուրախանում, աշխարհով մեկ է լինում և որոշում է քեֆ անել: Բայց քեֆի ամենաթեժ պահին հայտնվում է Չար Կախարդը:

Այս խոսքերի վրա բեմ դուրս եկավ Կոկոն: Բոլորը շունչները պահած նրան նայեցին՝ թե ինչպես է չարագույժ կոկոսարով թևածելու, բայց նա տեղում քարացել էր:

- Հը՛, Կոկո՛, - փորձեց հուշել Անին, - ասա. «Ես Չար կախա՛րդն եմ, եկել եմ, որ ձեզ կախարդե՛մ...»:

Բայց Կոկոն այնքան էր դառնացած, այնքան էր վիրավորված, որ երևում էր՝ լացը հագիվ է գալում:

- Ես չեմ ուզում Չար կախարդը լինել, - դողացող ձայնով հագիվ ասաց նա, - ես չար չեմ, ես բարի եմ, - ու բեմից մի կերպ ցած իջնելով, գնաց մտավ փչակը. սիրտն այքան էր լցված, որ իսկի թռչել չէր կարողանում:

Երեխաները մնացին շվարած՝ կանգնած. ի՞նչ անեին:

- Բա ո՞նց անենք, - առաջինը խոսեց Գրիգորը, - եթե Գեղեցկուհու դերը Կոկոյին տանք, հիմա էլ Լուսն կնեղանա: Չտանք՝ Կոկոն մեզ չի ների:

- Չի ներում, թող չների, - բարկացավ Տիգրանը, - հերիք չի՛ ներկայացումը փչացրեց, դեռ մենք ե՞նք մեղավոր: Թող ինքն էլ մտածի:

- Չէ, Տիգրան, արի բոլորս մտածենք, - առարկեց Անին: - Որոշել ենք միասին աշխատել, ուրեմն միասին էլ պիտի ելք գտնենք:

- Իսկ եթե հեքիաթի սկիզբը փոխե՞նք: Օրինակ. «Լինում է, չի լինում՝ մի թագավոր: Մի գեղեցիկ օր երկու աղջիկ է ունենում՝ ես ու Կոկոն: Ու բոլորը շատ երջանիկ էին, մեկ էլ հանկարծ հայտնվում է Չար կախարդը՝ Անին, ու արքայադուստրերին կախարդում է, որ քնեն ու քնած մնան: Բայց հարևան թագավորությունից գալիս են քաջարի ասպետներ Քուչոն ու Գրիգորը: Քնած Գեղեցկուհիներին տեսնելով, այնքան են հավանում, որ չեն դիմանում ու համբուրում են նրանց: Ասպետների համբուրից արքայադուստրերն արթնանում են, ու բոլորն ապրում են ուրախ ու երջանիկ»:

Լուսինեի առաջարկը բոլորին շատ դուր եկավ: Պարզվում է՝ եթե շատ ես ուզում, անպայման մի ելք կգտնես, մանավանդ, եթե այդ ելքն ընկերների հետ միասին ես փնտրում: Ընդամենը պիտի լսես բոլորի առաջարկները, ծանրութե՛ն անես և ընտրես դրանցից այն մեկը, որը բոլորին գոհացնում է:



50

Բակային համերգ

Ըստ **Իռադա Սայյաի** համանուն սցենարի, Ադրբեջան
Թեմա՝ **Խնդիրների համատեղ լուծում,
որոշումների կայացում**

Ամբողջ գիշեր Կոկոն երագում երգում էր ու գլուխ տալիս ու օդային համբույրներ ուղարկում բազմաթիվ երկրպագուներին, որոնցից պրծում չկար: Վերջապես բացվեց առավոտը: Արագ բերանը մի բան գցելով՝ Կոկոն շտապեց երեխաների մոտ:

- Գիտե՞ք, չէ՞, այս ձմեռ Իտալիա էի գնացել, - հեռվից-հեռու սկսեց Կոկոն ու, երագների գիրկն ընկնելով՝ մտքի թելը կորցրեց: - Ա՛խ, Իտալիան, Հռոմը, Վեներտիկը, Սիլանը..., - հետո ուշքի եկավ ու շարունակեց, - լավ, հիմա դրա ժամանակը չի: Իտալիայում մի օր օպերա էի գնացել: Ո՞վ գիտի՝ օպերան ի՞նչ է:

Տիգրանը ճակատը կնճռոտեց. նա գիտեր, թե օպերան ինչ է, ու բռնաբարում էր ինչ-ինչ հավանում:

- Հա, տեսել եմ. փոխանակ մարդավարի խոսեն, ձայները գլուխները գցած երգում են, ու ոչինչ չի հասկացվում:

Կոկոն ներողամտորեն ծիծաղեց.

- Հիմարի՛կ, որ ուրիշներն են երգում՝ չի հասկացվում, բայց որ դու ես երգում, նախօրոք բառերը գիտես, էլ ի՞նչ չհասկանալու բան կա: Գիտե՞ս՝ ինչ հավես է:

- Հա՞, - այնքան էլ չհավատաց Տիգրանը:

- Հաստա՛տ, - հավատացրեց Կոկոն, - Էլ չեմ ասում, որ լիքը փող կաշխատենք:

Ու որոշեցին իրենց բակում օպերա բեմադրել: Կոկոն հայտարարեց, որ որպես մտքի հեղինակ, գլխավոր բեմադրողն ինքը կլինի, ու ոչ ոք չառարկեց. Կոկոյից լավ ո՞վ էր օպերայից հասկանում: Ու անցան գործի: Նախ Կոկոն բոլորին բացատրեց, որ օպերայում մի քանիսը մեներգիչ են, այսինքն՝ մենակ են երգում, իսկ մյուսները՝ երգչախումբ:

- Հասկացա՞ք, - Կոկոն հերթով նայեց երեխաներին, և երբ բոլորը գլխով արեցին, ասաց, - շուտ եմ ասել՝ մեներգիչը ես եմ:

Բա իհարկե, իրենից բացի էլ ո՞վ կարող էր մեներգիչ լինել: Կոկոն արդեն պատկերացնում էր, թե ոնց է իր ինքնագրով լուսանկարներ պատվիրելու, որ երկրպագուներին բաժանի, երբ նկատեց, որ Լուսինեն ձեռք է բարձրացրել.

- Կարելի՞ է՝ ես էլ մեներգիչ լինեմ, - հարցրեց նա:

Կոկոյի բերանը բաց մնաց: Երևակայական երկրպագուները աչքից չբացան ու նա վերադարձավ դառն իրականություն: Նա մտածեց, թե ոնց առաջ չէր հասկացել, որ Լուսինեն շատ հիմար աղջիկ է, եթե կարծում է, որ կարող է չափվել իր նման հմայիչ, տաղանդավոր երգեցիկ թռչնի հետ: Հետո մտածեց, որ Տիգրանը, Գրիգորն ու Անին նման հանդուգն հարց երբեք չէին տա:

- Իհարկե չի կարելի, - պատասխանեց առարկություն չհանդուրժող ձայնով:

Հենց որ պատասխանեց՝ հանգստացավ ու աչքերի առաջ նորից հառնեցին երկրպագուները, ծաղկեփնջերը, որոտընդոստ ծափահարությունները...

- Ես էլ եմ ուզում մեներգիչ լինել, - հանկարծ լավեց Տիգրանի ձայնը, - ես էլ վատ չեմ երգում, մանավանդ՝ ռեփ:

«Ա՛յ քեզ բա՛ն: Բոլորը խոսքները մեկ արած ուզում են իր փառքին տիրանալ», - մտածեց Կոկոն, ու վրդովմունքից փետուրները փշաքաղվեցին: Փորձեց այդ դավաճաններին խոսք հասկացնել, բայց զգաց, որ լեզուն պապանձվել է: Կոկորդից միայն ինչ-որ անհողաբաշխ հնչյուններ դուրս թռան. «Կը- կու- կկի...»:

Կոկոյի տեսքից զարմացած, բայց պատճառն այնքան էլ չպատկերացնելով՝ երեխաները ծիծաղեցին: Կոկոն զայրացած գլուխը թափահարեց, բայց դեռ չէր հասցրել ուշքի գալ, երբ Անին ու Գրիգորն էլ ձայնները մեկ արած սկսեցին ասել, որ չեն ուզում երգչախումբ լինել՝ ուզում են մեներգիչ լինել ու վերջ: Անին ասում էր, որ երգից իր քառորդը միշտ հինգ է եղել, իսկ Գրիգորը պնդում էր, որ լողանալիս՝ ցնցուղի տակ միշտ երգում է, ու դեռ ոչ ոք չի բողոքել, թե լավ չէ: Բոլորից բարձր Քուչոն էր գոռում: Վերջապես Կոկոն բորբոքված բղավեց.

- Դե մի լռե՛ք, տեսնեմ: Թող ձեր ասածը լինի, բայց ես ձեռքերս լվանում եմ: Ի՞նչ օպերա առանց երգչախումբ, փոխարենը՝ մի գլուխ բաղաձայն մեներգիչներ:

Բոլորը լռեցին ու շփոթված՝ Կոկոյին նայեցին. հիմա ի՞նչ են անելու: Ի՛նչ ավստս՝ «Բակային օպերա» ծրագիրը, ոնց որ ձախողվում էր: Ու պատճառն ակնհայտ էր՝ երեխաները մոռացել էին, որ ամեն մի գործի հաջողության գաղտնիքը նախ և առաջ համերաշխ աշխատել կարողանալու մեջ է:

Ընկերները տրտմեցին: Ախր ամեն ինչ այքան լավ էր սկսվել:

- Մի բան եմ մտածել, - հանկարծ ասաց Լուսինեն, ու բոլորը զարմացած, հույսով նրան նայեցին: - Եկեք՝ ոչ թե օպերա բեմադրենք, այլ համերգ կազմակերպենք: Բոլորս էլ կկարողանանք հա՛մ առանձին-առանձին երգել, համ՝ խմբով:

- Ապրենս, - գովեց Ծառը, որ մինչ այդ ոչ մի խոսք չէր ասել ու համբերությամբ սպասում էր, թե ով է իրավիճակից ելք գտնելու, - ես էլ մտածում էի՝ տեսնես, կհասկանա՞ն, որ կռվելու փոխարեն պիտի համաձայնության գան, թե ինչ անեն, որ բոլորի ցանկությունները համընկնեն:

- Ըհը, - ուրախացավ Գրիգորը, - հայրիկս էլ է ասում՝ երբ մարդիկ չեն կարողանում համաձայնության գալ ու համերաշխ աշխատել, ոչ մի լավ բան չի ստացվում:

- Բա ես ի՞նչ էի ասում: Ճիշտ հայրիկիս խոսքերն են, - փետուրները հարդարելով հայտարարեց Կոկոն:

Երեխաները զարմացած իրար նայեցին. Կոկոյի հայրիկի մասին առաջին անգամ էին լսում: Իսկ Կոկոն հանդիսավոր ձայնով շարունակեց.

- Ամեն երեկո ինձ մտեցնում էր կողքի ճյուղին ու ասում. «Հիշի՛ր, ճուտիկ ջան, որ համերաշխությունը հաջողության գրավականն է»: Շատ իմաստուն թռչուն էր, - Կոկոն հոգոց հանեց ու արցունքը սրբեց:

- Բա հիմա հայրիկդ ու՞ր է, - հետաքրքրվեց Լուսինեն:

- Հեռու՝ Չալցբուրգում: Գիտե՞ք, Չալցբուրգը հայտնի կոմպոզիտոր Մոցարտի ծննդավայրն է: Հայրիկս մի ժամանակ նրա տանիքի տակ բույն էր հյուսել:

Մոցարտի անունը նույնիսկ Լուսինեն գիտեր, ու երեխաները միանգամից Կոկոյի հանդեպ ակնածանքով համակվեցին:

- Տեսա՞ք, - ասաց Անին, - իսկ մենք փոխանակ համերաշխ լինենք, կռիվ ենք անում ու վիճում:

- Ճիշտ որ, - համաձայնվեց Գրիգորը, - տեսնես՝ ի՞նչ ճանճ էր մեզ կծել:

- Ոչինչ, արդեն չենք վիճի, ու ամեն ինչ կստացվի, - ավելացրեց Տիգրանը, - սրանից հետո համերաշխ կլինենք:

- Լուսինեի գաղափարը ինձ շատ դուր եկավ, - հավանություն տվեց Քուչոն, - համերգը օպերայից էլ հետաքրքիր կլինի: Համ մեկ-մեկ կեր-

գենք, համ խմբով:

- Բայց գիտեք, չէ՞, - ասաց Ճառը, - խմբով երգելը հեշտ բան չկարծեք: Դրա համար էլ է համերաշխություն պետք, որ կարգին համագործակցեք: Թե չէ՝ որ ամեն մեկն առանց ուրիշներին լսելու, ինքնագլուխ երգի՝ շիլաշփոթ կստացվի: Շատ պիտի փորձեք:

- Չմտածես, հիմա արդեն գիտենք, որ առանց համագործակցելու բան չի ստացվի: Ուշադիր կլինենք, - հանգստացրին ընկերները:

Մի երկու օրից բակում անսովոր աշխուժություն էր տիրում: Բոլոր-բոլոր հարևանները հրավիրատունս էին ստացել ու անհամբեր սպասում էին համերգի սկսվելուն:

Վարագույրը բացվեց ու հանդիսատեսները ծափահարեցին: Բեմում կանգնած էր Կոկոն՝ Քուչոյի ու երեխաների հետ միասին: Քուչոն առաջ եկավ, գլուխ տվեց ու հայտարարեց.

- Երգը կոչվում է «Համերաշխություն»: Կատարում է երգչախումբը:

Երգն այնքան ներդաշնակ էր, այնքան գեղեցիկ, որ հավաքվածները հայացքները բեմից չէին կարողանում կտրել: Իրոք որ երգչախումբը շատ ներդաշնակ էր երգում: Այո՛, համերգը հիասքանչ էր կազմակերպված:

Այդ երեկո Կոկոն հոգնած պառկել էր բնում, բայց քունը չէր տանում: Նա անընդհատ հիշում էր, թե հանդիսատեսներն ինչ որոտընդոստ ծափահարություններով էին ընդունել իր ամեն ելույթը: «Այո, - մտածում էր նա, - համերաշխությունը հաջողության գրավականն է: Ոսկի՛ խոսքեր են...»:

Արի հաճախե՛նք



Ըստ **Նանա ԿացիաՎիլիի** համանուն սցենարի, Կրասան
Թեմա՝ **Կոնֆլիկտների հաղթահարում**

Ամառային շոգ օր էր: Յերեկվա տապից իր ստվերոտ բնում թաքնված, ոտքերը բնից ցած կախած՝ Կոկոն ննջում էր: Հանկարծ ոտքերի ձայն լսվեց ու Անին կանչեց.

- Կոկո՛, ա՛յ Կոկո, ո՞ր ես, ինձ չե՞ս օգնի:

- Թող քնեմ, Անի՛, - մի աչքը բացելով՝ քթի տակ քրթմնջաց Կոկոն ու կողքի շրջվեց:

- Լավ էլի, Կոկո՛, - թախանձեց Անին, - ախր, շատ կարևոր բան եմ ասելու. վաղը կողքի բակում շորերի ցուցադրություն է: Պայուսակդ ու հովհարդ կտա՞ս: Իմ շորի հետ շատ կապեմ:

Կոկոն միանգամից սթափվեց ու նստեց տեղում:

- Ցուցադրությու՞ն, - ոգևորված բացականչեց նա, - չկասկածես՝ իմ հովհարով ու պայուսակով հաղթողը հաստատ դու ես լինելու:

Ու մոտակա ճյուղին ցատկելով՝ երևակայությունների մեջ ընկավ. սկսեց կոտրատվելով հետ ու առաջ քայլել, իբր հագուստ է ցուցադրում, ու հետն էլ խոսել.

- Դուրս ես գալիս հարթակ, քայլում ես, պտույտներ անում, երգում..., - ու դայլայլեց:

- Հա, ճիշտ ես ասում՝ երգելով պտտվում եմ..., - Կոկոյի միտքն Անիին դուր եկավ: Սկսեց քթի տակ ինչ-որ մեղեդի երգել:

Մեկ էլ հանկարծ Կոկոն կատաղեց. ականջները թևերով փակեց ու հարձակվեց Անիի վրա:

- Չայնդ կտրի՛ր, քանի լսողությունս չի փչացել: Քեզնից ի՞նչ երգող:

- Բայց ես էլ եմ երգել ուզում: Հո դու իմ տեղը շոր չե՞ս ցուցադրելու: Պիտի ցուցադրելուց երգեմ, չե՞, - փորձեց բացատրել Անին:

Բայց Կոկոն կտուցը կախել, աղջկա բացատրությունները լսել անգամ չէր ուզում: Առարկություն չհանդուրժող խիստ ձայնով հայտարարեց.

- Չէի ուզում ասել, բայց ստիպված եմ: Դե իմացիր, որ դու ո՛չ լսողություն ունես, ո՛չ ձայն:

Վիրավորանքից Անիի աչքերը լցվեցին: Լացը հազիվ զսպելով՝ դողացող ձայնով ասաց.

- Ինչ փիսն ես, Կոկո՛: Իսկ դու հա՛մ ագռավի ձայն ունես, համ էլ ան-

ճոռնի ես: Դե գնա՛:

Հիմա էլ Կոկոն, վիրավորանքից, քիչ մնաց՝ թրմփար ցած:

- Ո՞վ: Ե՞ս: Շատ կերագեիր ինձ պես գեղեցիկ լինել: Ու գնա, ում ուզում ես՝ հարցրու. ես ագռավ չեմ, ու դալալալս նախնիներիցս եմ ժառանգել: Բա՛:

Իրարից նեղացած, Անին ու Կոկոն շրջվեցին ու, էլ ոչ մի բառ չասելով, հեռացան:

Հաջորդ օրը բուրդը, բացի Անիից, բակ էին իջել: Կոկոն, ճյուղին թառած, ինչ-որ բան էր գրում:

- Հիմա, մաթեմատիկայի օլիմպիադան վա՞ղն է լինելու, - հազարերորդ անգամ հարցրեց Լուսինեն:

- Ասացի՞նք՝ հա: Մի՛ խանգարիր, - քթի տակ մրթմրթաց Կոկոն՝ հաշվարկները շարունակելով, - չե՞ս տեսնում՝ մտածում ենք:

Ու, դիմելով տղաներին, կարդաց.

- Լսեք՝ որքա՞ն կանի չորս անգամ հինգ, գումարած քսաներեք, հանած տասը:

Գրիգորն ու Տիգրանը խորասուզված՝ գլուխները կախեցին տետրակների վրա: Գրիգորը գլուխը քորեց:

- Չորս անգամ հինգ՝ անում է քսան, սրան գումարած քսաներեք՝ եղավ քառասուներեք, հանած տասը՝ արեց երեսուներեք, - շարունակեց Տիգրանը:

- Ոնց որ՝ ճիշտ է, - շուրջը նայելով ասաց Կոկոն ու հոգոց հանեց, - է՛հ: Լավ, հաջորդը. տասնմեկ անգամ տասնմեկ, անում է...: Ի՞նչ է անում, ո՞վ գիտի:

- Երևի հարյուրից ավելի, բայց հարյուր հիսունից պակաս, - փորձեց օգնել Լուսինեն, որը փոքր էր և դեռ բազմապատկման աղյուսակը չէր անցել:

- Հը-հը, լավ ասաց, - քրոջը հեզմեց Տիգրանը: - Որ մի բան չգիտես, մեջ մի ընկիր:

- Լսեք, տասը անգամ տասը կանի հարյուր, մեկն էլ գումարած...: Չէ, չստացվեց, - բոլորովին հուսահատվելով ասաց Գրիգորը: - Ա՛յ, հիմա Անին լինե՛ր՝ մի րոպեում պատասխանը կասեր: Տեսնես ինչու՞ չի ուզում օլիմպիադային մասնակցել: Մաթեմից միշտ հինգ է ստանում:

Կոկոն ձև արեց, թե Գրիգորին չի լսել ու, իբր ոչինչ չի պատահել, շարունակեց.

- Ի՞նչ եք կարծում՝ 11 անգամ 11-ը նույնը չի՞, ինչ որ 104-ին գումարած 93:

- Ինչե՞ր ես հնարում, - զարմացավ Գրիգորը:

- Մտքովս անցավ, - ուսերը թոթվեց Կոկոն: - Բնագրասբար:

Այդ պահին բակում Անին հայտնվեց: Հուզված, առանց ընկերների կողմը նայելու, արագ-արագ քայլեց դեպի տուն:

- Հե՛յ, Անի, - ձայն տվեց Տիգրանը, - տասնմեկ անգամ տասնմեկ ի՞նչ կանի:

- Ի՞նձ ինչ, - լացը հազիվ զապելով պատասխանեց Անին, - ձեր Կոկոյին էլ ասեք, որ աչքիս չերևա: Էլ կյանքումս հետը չեմ խոսի:

- Սպասիր, - նրա հետևից ձայն տվեց Լուսինեն, - չե՞ս պատմի: Յուցադրությունը ո՞նց անցավ: Հաղթեցի՞ր:

- Չէ: Ձեր ընկերուհուն հարցրեք, - հուզված պատասխանեց Անին ու արցունքները հոսեցին, - պայուսակն ու հովհարը ափսոսաց՝ չտվեց, ո՞նց հաղթեի: Թե մեկ էլ դրան մի բան խնդրեմ: Ինքս ինձ համար պայուսակ էլ կսարքեմ, հովհար էլ, որ նախանձից պայթի:

Ու վազելով տուն փախավ:

- Չէի իմացել, որ վիճել եք, - զարմացած Կոկոյին նայելով՝ հարցրեց Տիգրանը, - չեք ամաչու՞մ: Հենց հիմա գնա ու հաշտվիր:

- Ո՞վ: Ե՞ս, - վրդովվեց Կոկոն, - Էդ էր պակաս: Ես դրա հետ հաշտվողը չեմ, հույս չունենաք: Համ էլ, ձե՞զ ինչ, ի՞նչ եք քիթներդ խոթում մեր գործերի մեջ:

Հաջորդ երեկոյան երեխաները նորից էին բակում հավաքվել: Ծանոթի տակ նստարանին նստած՝ զրույց էին անում:

- Լավ չեղավ, որ օլիմպիադայում չհաղթեցինք, - ափսոսանքով ասում էր Տիգրանը:

- Հա, դու լինեիր՝ հաստատ հաղթելու էինք, - Անին ասաց Գրիգորը: - Դե լավ, ի՞նչ արած: Եկեք մի բան խաղանք:

- Եկեք, - ոգևորված տեղից վեր թռավ Տիգրանը: - Գնդակը նոր եմ փչել: Եկեք ֆուտբոլ խաղանք:

Երեխաներն սկսեցին հաշվել, որ թիմերի բաժանվեն.

- Սպասեք, - հանկարծ ընդհատեց Տիգրանը, - բայց հինգ հոգի ենք: Հինգը ո՞նց ենք երկուսի բաժանելու:

- Հա, էլի, - շուրջը նայելով ասաց Քուչոն, - Կոկոյին կանչեք, ու՞ր է՝ չի գալիս:

- Կո՛-կո՛, Կո՛-կո՛, - սկսեցին կանչել երեխաները: Միայն Անին էր լուռ կողք քաշվել:

Կոկոն բնից դուրս կախվեց, նայեց՝ ով կա, ով չկա, Անին նկատեց ու հայտարարեց.

- Քանի դա էդտեղ է, ես ձեզ հետ խաղացողը չեմ: Չգիտե՞ք, որ հետը չեմ խոսում:

- Դու էլ մի խոսիր, առանց խոսելու խաղա, - առաջարկեց Գրիգորը:

- Տափա՛կ, - Գրիգորի սրամտությունը չգնահատեց Կոկոն ու անհետացավ Ծառի սաղարթում:

- Թող չերևակայի, թե ես երագում եմ հետը խաղալ, - խեթ-խեթ Ծառի կողմը հայացք գցելով՝ ասաց Անին, շրջվեց ու նեղացած հեռացավ:

Անիի գնալուց հետո բոլորի տրամադրությունը փչացավ, ու շուտով նրանք էլ տները ցրվեցին: Միայն Գրիգորը մնաց Ծառի տակ կանգնած: Նա որոշեց, որ այսպես չի լինի, պետք է մի բան մտածել:

- Ծա՛ռ, այ Ծա՛ռ, - ասաց նա, - գոնե դու մեզ հետ խաղայիր:

- Մեծ հաճույքով, - սուսափեց Ծառն իր տերևներով, - բայց ափսոս, որ, ո՞նց ասեմ, ֆուտբոլ խաղալն այնքան էլ իմ բանը չի:

- Հեչ լավ չի, որ Կոկոն ու Անին վիճել են, - շարունակեց Գրիգորը, - ախր, մի ժամանակ անբաժան էին: Ո՞վ կմտածեր, որ էսպես հուր-հավիտյան կխռովեն:

- Գիտե՞ս, - մխիթարեց Ծառը, - բոլորի հետ էլ պատահում է: Բայց պիտի իրենց սխալները հասկանան: Հենց հասկացան՝ անպայման կհաշտվեն: Ա՛յ, կտեսնես:

- Իսկ ո՞նց են սխալները հասկանալու, ե՞րբ:

- Մի քիչ համբերեք, - ասաց Ծառը, - ժամանակի ընթացքում ամեն ինչ կպարզվի:

- Հասկացա, որ ժամանակ տանք՝ իրար կհասկանան ու կներեն, - մտազբաղ ասաց Գրիգորն ու ինքն էլ գնաց տուն:

Քիչ անց, տանը նստելուց ձանձրացած՝ Տիգրանը նորից բակ իջավ:

- Թթվեցի տանը նստելով, - դժգոհեց նա, - ինչքա՞ն պիտի շարունակվի:

Տիգրանի ձայնը լսելով՝ Կոկոն բնից թռավ-իջավ նրա մոտ:

- Հա, ես էլ եմ ձանձրանում: Բայց ե՞ս ինչ մեղք ունեմ: Մինչև չգա,

ներողություն չխնդրի, հետը չեմ խոսելու: Առանց Անիի էլ կապրենք:

Տիգրանը կասկածանքով նայեց Կոկոյին, բայց լռեց:

- Այսինքն՝ ում ե՞մ խաբում, - բարձրաձայն մտորում էր Կոկոն, - որ ծուռ նստենք, շիտակ խոսենք՝ ես էլ եմ մեղավոր: Որ չասեի՝ երգել չգիտես: Մանավանդ, որ վատ էլ չի երգում: Բա արժե՞ր դրա պատճառով կռվել: Հիմա էլ ի՞նչ բակ, ի՞նչ խաղեր, ի՞նչ ընկերություն:

- Ոնց մտածում եմ՝ մեղավոր եմ, - վերջապես եզրակացրեց նա: - Ու ես էլ պիտի սխալս ուղղեմ:

- Հա, էլի, Կոկո, մի բան մտածիր, թե չէ՝ էլ չենք դիմանում, - հույսով նրան նայելով, խրախուսեց Տիգրանը:

- Հիմա որ հիշում եմ, թե խեղճին ինչեր ասացի՝ ամոթից ուզում եմ գետիկը մտնել, - խոստովանեց Կոկոն: - Չմտածես՝ հենց հիմա կգնամ ու ներողություն կխնդրեմ: Ով-ով, ես կարող եմ սխալներս ընդունել: Ու նորից առաջվա պես բոլորս կխաղանք: Այս խոսքերով Կոկոն թռավ տեղից և ուղղություն վերցրեց դեպի Անիենց տուն:

Այդ նույն ժամանակ Անին իր սենյակում հետ ու առաջ էր քայլում և ինքն իր հետ խոսում:

- Ես ի՞նչ մեղք ունեմ, որ վրաս հարձակվեց, - ասես փորձելով ինքն իրեն համոզել՝ ասում էր նա:

Քուչոն, սենյակի անկյունում նստած, լուռ նրան էր հետևում:

- Հիմա մեր պատճառով դուք էլ իրար հետ չեք խաղում, - Քուչոյին նայելով շարունակեց Անին: - Բայց ես ի՞նչ անեմ: Հիմա որ հիշում եմ՝ ես էլ ինձ լավ չպահեցի: Չպիտի տաքանայի: Մի բան էր՝ ասաց: Մի-գուցե տրամադրությունը վատ էր, ո՞վ իմանա՝ արևահարվել էր: Իսկ ես կոպտեցի, ու տեսա՞ր՝ ինչ ստացվեց:

Քուչոն հավատարիմ աչքերով Անիին էր նայում, բայց ձայն չէր հանում:

- Երևի պիտի ուժ գտնեմ ու Կոկոյից ներողություն խնդրեմ: Վերջը, ընկերներ ենք, չէ՞:

- Շատ ճիշտ ես որոշել, ապրես, - վերջապես ուրախացած պատասխանեց Քուչոն ու պոչը թափահարեց:

- Էլ ո՞ւմ եմ սպասում: Գնացի:

Անին դուռը բացեց, որ բակ գնա ու բախվեց ներս թռչող Կոկոյին:

- Վա՛յ, կներես, - միաժամանակ բացականչեցին երկուսով:

- Դու շատ էլ լավ ես երգում, - ասաց Կոկոն:

Ն ա ն ա Կ ա ց ի ա շ վ ի լ ի

- Դու շատ էլ սիրուն ես, - միևնույն ժամանակ ասաց Անին, ու երկուսով ուրախ ծիծաղեցին:

- Հաշտվե՞նք, - հարցրեց Կոկոն:


- Ես էլ քեզ էի ուզում հարցնել, - պատասխանեց Անին:

- Գիտե՞ս, - սկսեց բացատրել Կոկոն, - հետո՞ ինչ, որ մենք իրար նման չենք:

- Բայց լավ ընկերներ ենք, - նրա միտքը շարունակեց Անին:

- Ուռռաաա՜, - բացականչեցին նրանք միասին ու ամուր-ամուր գրկախառնվեցին:

Հետո վազեցին բակ, որ ուրախ լուրը հայտնեն ընկերներին:



62

Քաջարի ծովափերի գանձերը

Ըստ **Բերնարդինե Սարգսյանի** համանուն սցենարի, Հայաստան
Թեմա՝ **Բանակցություններ**

Երեխաները շրջապատել էին Տիգրանին ու ինչ-որ բան էին նայում:

- Ինչ լավն է, - ասում էր Գրիգորը:

- Բա՞, - հեռադիտակը ձեռքում պտտեցնելով՝ հպարտությամբ պատասխանեց Տիգրանը, - պապիկիս նվերն է: Լսեք, գիտե՞ք ինչ մտածեցի. եկեք ծովահեն-ծովահեն խաղանք:

- Ուռռասա՛, - ծափ տվեց Անին, - շուտ եմ ասել՝ նավի խոհարարը ես եմ:

- Շուտ եմ ասել՝ ես էլ փորձառու ծովագայլն եմ ու ղեկը ես կբռնեմ, - վրա տվեց Քուչոն:

- Դե որ էրպես է, - ասաց Տիգրանը, - ես էլ կայմի կատարից հեռադիտակով կնայեմ՝ ցամաքը երևո՞ւմ է, թե՞ ոչ:

- Ուրեմն՝ ես էլ նավապետը կլինեմ, - ամփոփեց Գրիգորը:

Ու երեխաները գործի անցան: Ծառի տակ դրված նստարանը շրջեցին, իբր թե նավ է: Անին լվացքի պարանից մի սրբիչ հանեց ու առագաստ սարքեց: Տիգրանը շապիկը դրոշի տեղ ամրացրեց ցցին ու տնկեց նստարանի կողքը, իսկ Քուչոն որտեղից որտեղ մի հին անվադող քարշ տվեց.

- Փրկօղակ եմ ճարել, - հպարտ-հպարտ ասաց ընկերներին:

- Զբաղեցնել դիրքերը, բարձրացնել խարիսխը, - կարգադրեց Գրիգորն, ու խաղն սկսվեց:

- Չախակողմյան ուղղությամբ առագաստանավ եմ տեսնում, - Ծառի կատարից ձայն տվեց Տիգրանը:

- Պատրաստվել գրոհի, - հրամայեց նավապետը:

- Չենք կարող, - առարկեց Տիգրանը, - եղանակը փչանում է:

- Ըհը՛, - համաձայնվեց Քուչոն, - փոթորիկ է սկսվում: Առագաստը հավաքե՛ք:

- Ի՞նչ եք հնարում, - զարմացավ Գրիգորը, - ի՞նչ փոթորիկ, ի՞նչ բան, ծովը հայելու պես հանդարտ է:

- Նավապետը ճիշտ է ասում, - Գրիգորին պաշտպանեց Անին, - հրաշալի եղանակ է:

- Ոչ մի ճիշտ բան էլ չի ասում, - չհամաձայնեց Տիգրանը, - մութ-

մութ ամպերը չե՞ք տեսնում, - ու առագաստը ծալեց:

- Աչքիդ է երևացել, - նորից առարկեց Գրիգորն ու առագաստը բացեց:

- Ես էլ ասում եմ՝ չէ, եղանակը փչանում է, - Տիգրանը նորից առագաստը ծալեց:

- Եղանակը՝ չգիտեմ, բայց տրամադրությունս փչացավ, - գայրացած պատասխանեց Գրիգորն ու հոնքերը կիտած նստեց նստարանին:

Այդ պահին Լուսինեն ու Կոկոն մոտեցան խմբին:

- Երեխե՛ք, հո բան չի՞ պատահել: Ինչու՞ եք թթված նստել՝ չեք խաղում:

- Խաղում էինք, բայց եղանակը փչացավ, հետո էլ Գրիգորի տրամադրությունը փչացավ, հիմա չգիտենք՝ ինչ անենք, - բացատրեց Անին:

- Լավ, մի մեծ բան չի, կարևորը՝ փրկողակը չի փչացել, - մխիթարեց Քուչոն:

- Ի՞նչ փրկողակ, ի՞նչ էիք խաղում, ինձ էլ պատմեք, - հետաքրքրվեց Կոկոն:

- Մեր նավի փրկողակը: Ծովահեն-ծովահեն էինք խաղում, - սկսեց բացատրել Անին:

- Ես էլ ասացի՝ եղանակը փչանում է, փոթորիկ է սկսվում, ու պետք է առագաստը ծալել, - շարունակեց Տիգրանը:

- Ես էլ ասացի՝ ոչ մի փոթորիկ էլ չի սկսվում, - եզրափակեց Գրիգորը:

- Փու՛հ, ձեր վեճից գլուխս պտտվեց, - ասաց Կոկոն ու թափահարեց գլուխը: - Լավ, հերիք կովեք: Կռիվներ հարթելու վարպետը եկել է: Հիմա կմտածեմ ու կասեմ՝ ինչ անեք:

Կոկոն թառեց Ծառի բարձր ճյուղին ու մտածմունքի մեջ ընկավ.

- Ուրեմն՝ վիճող կողմերն են՝ երկու տղա, մեկ խելացի աղջիկ և մեկ փորձված Ծովագայլ: Վեճը հարթելու համար դիմել են իմ՝ փորձառու և իմաստուն Ծիտիկի օգնությանը: Սա արդեն լավ է:

Կոկոն թևը դրեց ճակատին՝ մտածողի տեսք ընդունեց ու շարունակեց խորհել.

- Երեխաները վիճել են՝ չեն կարողանում համաձայնության գալ: Ես թռա, եկա, թռա, խռա...խռռ-ըմփ...:

Կոկոյի աչքերը փակվեցին, ու սկսեց բարձրաձայն խռմփալ:

- Վեճ հարթողիս տեսեք: Գործի կեսից քնեց, - վրդովվեց Քուչոն: Նա չէր սիրում, երբ ինչ-որ մեկն իր պարտականություններին մատնե-
րի արանքով էր նայում: - Ասա՛ թե գործ ես անում՝ մինչև վերջ արա:

- Շատ էլ լավ արեց: Նավապետը ես եմ, ուրեմն ինչ ասեմ, պիտի լսեք, - հայտարարեց Գրիգորը:

- Որ էդպես է՝ չեմ խաղում: Առանց փոթորիկ հետաքրքիր չի, -
ասաց Տիգրանն ու մեջքը շրջեց ընկերներին:

- Ինձ էլ հետաքրքիր չի, որ քեզ հետաքրքիր չի, - հայտարարեց
Անին ու ինքն էլ մեջքը շրջեց Տիգրանին:

- Դե գնացեք ու առանց մեզ խաղացեք, - ասաց Տիգրանն ու ընկեր-
ներին գլխով արեց: - Լուսո՛, Քուչո՛ գնացինք:

Գրիգորն ու Անին մնացին մենակ նստած: Կոկոն քնի մեջ շուռու-
մուռ եկավ ու թրմփոցով ընկավ նստարանին՝ ուղիղ երեխաների մեջ-
տեղը:

- Ինչ էի ասու՞մ...: Հա..., - կարծես իսկի չէր էլ քնել՝ Կոկոն բացեց
աչքերն ու շարունակեց մտորելը:

- Կոկո՛ ջան, Կոկո, - թռչնակի մտածմունքներն ընդհատեց Գրիգո-
րը, - կգա՞ս՝ միասին ծովահեն-ծովահեն խաղանք:

- Բայց հո վտանգավոր չի՞, - անհանգստացավ Կոկոն: - Ես
զգուշավոր թռչուն եմ, հա՛...

- Չէ, ա՛յ վախկոտ, - հանգստացրին երեխաները, - ի՞նչ վտանգա-
վոր: Շատ հավես է:

- Դե, որ հավես է, ես հավես բաներ շատ եմ սիրում: Խաղա՛նք: Բա
մյուսներն ուր են:

- Մե՞զ ինչ: Է՛լ դրանց հետ չենք խաղում, - նեղացած ասաց Գրիգո-
րը: - Դրանք թշնամի ծովահեններ են:

- Հա՞: Դե, լավ, հիմա ցույց կտանք, թե իսկական ծովահեններն ով-
քեր են, - խոստացավ Կոկոն:

- Հա, ցույց կտանք, - միաձայն հավանություն տվեցին Անին ու
Գրիգորը:

Այդ պահին Գրիգորի աչքն ընկավ նստարանի տակ ընկած
ճնրթաց թղթի կտորին: Նա կռացավ, բարձրացրեց թուղթն ու բացեց:

- Այ քեզ բա՛ն, - զարմացած թղթին նայելով բացականչեց Գրի-
գորն ու սկսեց բարձրաձայն կարդալ.

Տեղը ասե՞մ քաջարի

Ծովահենի գանձերի.

Նախ ընկերոջդ ասածը արա,

Հեյրո՛ւնեկ քայլ ճախ, րասը քայլ հարավ...

- Յա՛, տասը քայլի վրա գանձ կա թաղված, ի՞նչ ենք հանգիստ կանգնել, - անհամբեր բացականչեց Կոկոն, - բա որ թշնամի ծովահենները գտնեն:

- Բայց ի՞նչ իմանանք՝ քայլերը որտեղի՞ց ենք հաշվելու, - նկատեց Անին: Ասում էի, չե՞, որ խելացի աղջիկ էր, - էստեղ ասում է՝ «Նախ ընկերոջդ ասածը արա...»: Ո՞ր ընկերոջ: Չեմ հասկանում:

Այդ նույն միջոցին Լուսինեն, Տիգրանն ու Քուչոն, բակի հակառակ ծայրում նստած՝ մի ուրիշ թերթիկ էին զննում:

- Ուխա՛յ, իսկական ծովահենի քարտեզ է, - հրճվանքով ասաց Տիգրանը:

- Բախտներս բերեց: Հիմա դրանք, - ասաց Քուչոն՝ թաթով ցույց տալով Անիենց կողմը, - նախանձից կայայթեն:

- Տեսե՛ք, էստեղ բան է գրված, - Լուսինեն եղբոր ու Քուչոյի ուշադրությունը հրավիրեց քարտեզի տակը գրված տողերին:

- Տու՛ր կարդամ, - քրոջ ձեռքից քարտեզն առավ ու բարձրաձայն կարդաց Տիգրանը.

Տեղը գիտե՞ս քաջարի

Ծովահենի գանձերի.

Հաշտության կերից երկու քայլ հարավ,

Հեյրո ընկերոջդ ասածը արա՛...

- Հասկացա, - իրենից գոհ՝ ընթերցածն ի մի բերեց Տիգրանը, - թաղած գանձի քարտեզ է: Հիմա ո՞նց իմանանք՝ «հաշտության կետը» ո՞րն է: Շուտ անենք, քանի մյուսները գանձի հոտը չեն առել:

Տիգրանն ու իր թիմակիցները գործի անցան. սկսեցին քայլերով բակը չափչփել, Քուչոն դեսուդեն ընկած՝ գետինն էր հոտոտում: Մեկ էլ դեմառդեմ հանդիպեցին Անիին, Գրիգորին ու Կոկոյին, որ մոտավորապես նույն գործողություններով էին տարված: Հակառակորդների ձեռքի թուղթը տեսնելով՝ Տիգրանը բղավեց.

- Մենակ չասեք՝ դուք էլ եք քարտեզ գտել:

- Վա՛յ, դուք էլ ունե՞ք, - զարմացավ Գրիգորը:
- Տեսե՛ք, համարյա նույնն են, - նկատեց Լուսինեն:
- Ոնց որ գրածները մի քիչ տարբեր են, - ուշադիր նայելուց հետո եզրակացրեց Անին:

- Հասկացա՛, - վրա տվեց Գրիգորը, - ձեր քարտեզը պիտի մեզ տաք, որ իմանանք, թե որտեղից ենք սկսելու:

- Լավ էր, չէ՞, - հեզմեց Տիգրանը, - միգուցե մե՞զ է ձեր քարտեզը պետք, որ իմանանք՝ հետո ինչ ենք անելու:

Դարձյալ Անին, որն, ինչպես ասացի, խելացի ու կազմակերպված աղջիկ էր, ի մի բերեց ու եզրակացրեց.

- Պարզ է՝ քարտեզը գտնելու համար պիտի երկու կեսերը միացնենք:

- Հա, էլի, - համաձայնեց Գրիգորը:

- Բա ի՞նչ անենք, - շփոթվեց Կոկոն:

- Ուզած-չուզած՝ պիտի փորձենք հաշտվել ու համաձայնության գալ:

- Մենք անպայման ուզում ենք գանձը գտնել, - հայտարարեց Տիգրանը:

- Մենք էլ ենք անպայման ուզում գանձը գտնել, - ի պատասխան հայտարարեց Գրիգորը:

- Տեսա՞ք՝ երկու թիմերն էլ նույն բանն են ուզում, - միաձայն բացականչեցին Անին ու Լուսինեն:

- Հա, էլի: Բա ինչու՞ ենք վիճում, - զարմացավ Քուչոն:

- Դիշտ որ, - ասաց Լուսինեն, - բոլորս էլ նույն բանն ենք ուզում:

- Էլ ո՞ւմ ենք սպասում. քարտեզները բերեք՝ միացնենք, գանձը գտնենք ու վերջ, - խելամտորեն առաջարկեց Գրիգորը:

- Ասե՞մ ինչ մտածեցի. «հաշտության կետը» երևի այն տեղն է, որտեղ հաշտվեցինք, - կռահեց Անին:

- Այսինքն՝ հենց այս տեղը, - եզրակացրեց Գրիգորը:

- Ուռռաա՛, - բացականչեցին երեխաները միաձայն, - գտնվե՛ց:

- Տեսե՛ք՝ հաշվում են, - ասաց Տիգրանն ու կանգնած տեղից երկու քայլ դեպի հարավ քայլեց:

- Ուռռաա՛, գտանք, - պոչը թափահարելով, ուրախ-ուրախ ասաց Քուչոն:

Երեխաները ոգևորված գործի անցան՝ սկսեցին փորել: Մի քանի

րոպեից Տիգրանի բահն ինչ-որ բանի դեմ առավ. մի մեծ սնդուկ էր: Երեխաներն անհամբերությամբ փոսից սնդուկը հանեցին ու բացեցին կափարիչը: Երեսին մի թուղթ կար: Անին թուղթը վերցրեց ու բարձրաձայն կարդաց.

- «Ապրե՛ք, եթե գանձը գտել եք, ուրեմն կարողացել եք հաշտվել»:

- Ասում էի, չէ՞, որ բանակցությունները վեճը հարթելու ամենալավ միջոցն են, - խելացի տեսքով գլուխը տմբտմբացնելով եզրակացրեց Կոկոն ու սնդուկի միջից գույնզգույն թղթով փաթաթած մի կոնֆետ վերցրեց:



Կախարդական ծրարը

Ըստ **Իռադա Սայյաի** համանուն սցենարի, Ադրբեջան
Թեմա՝ **Բանակցություններ**

Նոր տարվա առաջին օրն էր: Դեռ չէր լուսացել, և երեխաները խոր քնած էին տաքուկ անկողիններում: Հանկարծ Տիգրանի ու Լուսինեի սենյակի դուռը կամացուկ ճռռաց ու մի ստվեր ներս սահեց: Ստվերն անձայն մոտեցավ տոնածառին ու տակը՝ նվերների փաթեթների կողքը, մի ծրար դրեց, ապա նույնքան անձայն հեռացավ: Բակ իջնելով՝ ստվերը գնաց դեպի Կոկոյի բույնն ու մի ծրար էլ այնտեղ թողեց:

Շուտով լույսը բացվեց:

1.

Տիգրանը բոլոր տոներից ամենաշատը Նոր Տարին էր սիրում: Բա իհարկե, էլ ե՞րբ հա՛մ տոնածառ կգարդարեիր, հա՛մ նվերներ կստանայիր: Անցյալ տարի, օրինակ, Չմեռ պապիկն իրեն ֆուտբոլի գնդակ էր նվիրել և «Լեգոյի» մի մեծ տուփ: Այս տարի նա երազում էր, որ իսկական դարպասապահի ձեռնոցներ կստանա ու մեկ էլ, ո՞վ իմանա՝ ինչ հետաքրքիր նվեր:

Տիգրանն այսպիսի հույսեր էր փայփայում ու անհամբեր սպասում էր Չմեռ պապի գալուն, միայն թե տրամադրությունը մի քիչ ընկել էր, որովհետև Գրիգորի հետ շատ բուռն վիճել էին, համարյա՝ կռվել: Ո՞նց չկռվեին. Գրիգորը փորձում էր համոզել, թե ոչ մի Չմեռ պապ էլ չկա. նվերները մայրիկներն ու հայրիկներն են տոնածառի տակ թաքուն դնում, որ երեխաները չիմանան: Տիգրանը չէր հավատում: Մայրիկներն ու հայրիկները բանուգործ չունե՞ն, որ թաքուն նվերներ դնեն տոնածառի տակ: Համ էլ՝ մայրիկը սովորաբար կամ գուլպա էր նվիրում, կամ մի տաք հագուստ, ինչպես ինքն էր ասում՝ փողը քամուն չէր տալիս:

Ու հիմա Գրիգորն ու Տիգրանն իրար հետ չէին խոսում՝ հուր-հավիտյան նեղացել էին:

2.

Չմեռային արևի շողերը, պատուհանից ներս սողոսկելով, Լուսինեի քիթը խուստուտ տվեցին: Աղջիկն աչքերը տրորեց ու վեր կացավ: Աչքը գցեց տոնաձառին, նորից հիացավ: Ի՞նչ նախշուն էր ու պայծառ, աշխարհի ամենալավ տոնաձառն էր: Իսկ տոնաձառի տակ գույնգույն փաթեթներով Չմեռ պապիկի նվերներն էին դարաված:

- Վե՛ր կաց, ծուլի՛կ, - եղբորը բոթեց Լուսինեն, - տե՛ս՝ Նոր Տարի է, ի՞նչ ես քնել: Արի նվերները բացենք:

«Նվերներ» բառը լսեց, թե չէ՝ Տիգրանը տեղից վեր թռավ ու վազեց տոնաձառի մոտ:

- Հաստա՛տ ձեռնոցներս են, - ուրախ-ուրախ բացականչեց նա՝ տաքատը վրան քաշելով:

Եվ իսկապես, Չմեռ պապը խուստու՛մը կատարել էր՝ Տիգրանին ամենաիսկական դարպասապահի ձեռնոցներ էր նվիրել, իսկ Լուսինեին՝ մի սիրուն տիկնիկ: Նվերներով մի կուշտ հիանալուց հետո միայն երեխաները նկատեցին տարօրինակ կապույտ ծրարը, որի վրա մի տապը տարբեր նամականիշներ կային փակցված, իսկ հետադարձ հասցեի տեղում գրված էր՝ Լապլանդիա, Չմեռ պապին:

- Այ քեզ բա՛ն, - զարմացան երեխաները ու, նվերները մոռացած՝ սկսեցին ծրարը տնտղել:

- Ու՛խ, Չմեռ պապից է, - հասցեն կարդալով՝ ոգևորվեց Տիգրանը, - երևի գրել է, որ մյուս տարի էլ Ռոնալդինյոյի շապիկը կնվիրի: Այ թե Գրիգորը տեսնե՛ր...

Նա անհամբերությամբ բացեց ծրարն ու սկսեց կարդալ.

«Ողջույն, սիրելի Լուսինե ու Տիգրան: Հեռավոր Լապլանդիայից հասել եմ ձեր երկիրը, որ մի նվեր էլ տամ ձեզ: Եթե ուզում եք, ուրեմն ուղիղ ժամը յոթին եղեք նշված վայրում: Տեսեք, հա, չուշանաք, խոտանում եմ, որ չեք փոշմանի: Քանի չեմ մոռացել, ասեմ, որ հանդիպման վայրը նշել եմ Կոկոյին գրած նամակիս ծրարին»:

- Ուռռաաա՛, - բացականչեց Տիգրանը, - բա որ ասում էի՛: Հաստատ, Ռոնալդինյոյի շապիկն է նվիրելու:

Լուսինեն էլ շատ ուրախացավ, բայց կարծում էր, որ այս անգամ եղբայրը ճիշտ չի գուշակել. դժվար թե անակնկալը ինչ-որ ֆուտբոլիս-

տի շապիկ լինի: Իսկ Տիգրանը շարունակում էր ոգևորված խոսել.

- Մնում է՝ Կոկոյի ծրարը ձեռք գցենք: Թե, ասա՝ ինչու՞ է Կոկոյին տվել:

- Բա ո՞նց ենք անելու, - հարցրեց Լուսինեն:

- Ի՞նչը՝ ոնց: Գնալու ենք ու ասենք, որ մեզ տա, - հետո շշուկով, որ մարդ-մուրդ չլսի, ասաց, - տես, հա, ոչ մեկին ոչ մի խոսք: Գրիգորի ու Անիի ականջը չընկնի:

- Ըհը, - նույնպես շշուկով համաձայնեց Լուսինեն ու համենայն դեպս չորս կողմը նայեց՝ հո ոչ մեկն ականջ չէ՞ր դնում:

Պարզվում է՝ Գրիգորն ու Անին նույնպես նման մի ծրար էին ստացել և այդ նույն ժամանակ զբաղված էին նամակը կարդալով: Ճիշտ է՝ Գրիգորն այնքան էլ չէր հավատում, թե Չմեռ պապ գոյություն ունի, բայց նամակը շատ էր հետաքրքրել: Մանավանդ, որ ծնողներին էլ էր ծրարը շատ զարմացրել:

- Ու՞իս, ասում է՝ մեզ համար անակնկալ է պատրաստել: Տեսնես՝ ի՞նչ կլինի, - ծափ տալով բացականչեց Անին:

Գրիգորը գլուխը քորեց ու մտքերի մեջ ընկավ:

- Հա, բայց ասում է՝ «...իհարկե, եթե կատարեք վերջին պայմանը...», - ասաց նա, - իսկ վերջին պայմանն, ասում է՝ Կոկոյի նամակից կիմանանք:

- Կորանք, - Անիի ոգևորությունը մի քիչ սառեց, - եթե Կոկոն էլ գիտի անակնկալի մասին, ուրեմն շուտով ամբողջ աշխարհը կիմանա:

- Չէ, չէ, պիտի զգուշացնենք, որ ոչ մեկի չասի: Մանավանդ՝ Տիգրանին ու Լուսինեին, - վախեցած ասաց Գրիգորն ու համենայն դեպս չորս կողմը նայեց. հո ոչ մեկը չէ՞ր լսում:

3.

Ժամը տասը կլիներ, երբ Տիգրանն ու Լուսինեն, նախաճաշելուց հետո, վերջապես բակ իջան: Բակը դատարկ էր ու ամբողջովին սպիտակ ձյան ծածկոցի տակ, ասես Նոր տարվա բացիկ լիներ: Կոկոն Ծառին թառած՝ քնած էր:

- Տոնը շնորհավոր, Կոկո՛ ջան, - ասաց Տիգրանը՝ ձևացնելով, թե ուղղակի եկել է Կոկոյին այցելության, - ո՞նց ես:

- Ես՝ վատ, - հազիվ աչքերը բացելով՝ պատասխանեց Կոկոն, - իսկ դու՞:

- Ես... ըրը, ո՞նց ասեմ: Ուզում էի, այսինքն՝ Լուսինեն ուզում էր քեզ մի բան հարցնել:

- Հա, - Լուսինեն էլ մոտեցավ Ծառին, - ուզում էի հարցնել՝ վերջերս հեռու երկրներից նամակ չե՞ս ստացել:

- Ուրեմն դո՞ւք էիք այդ հիմար նամակը գրել, - վրդովվեց Կոկոն ու հազից քիչ էր մնում՝ խեղդվել: - Ես էլ ասում եմ՝ ո՞ր մի անբանն է գիշերները մարդկանց քունը խանգարում ու բները հիմար նամակներ խոթում: Հես է՝ աղբն եմ գցել:

- Չէ, չէ, մենք կապ չունենք, - Կոկոյին միաձայն շտապեցին հանգստացնել երեխաները, - բայց եթե քեզ պետք չի, կտա՞ս մեզ:

- Չեր ինչի՞ն է պետք, - չհասկացավ Կոկոն, - հիմա էլ ուզում եք Քուչոյի բո՞ւյնը խոթել: Եկեք: Տեսնենք՝ ինչ կանի: Մի լավ կծիծաղենք:

Տիգրանն ու Լուսինեն ոչինչ չհասցրին պատասխանել, որովհետև այդ ժամանակ բակում հայտնվեցին Անին ու Գրիգորը և նույնպես մոտեցան իրենց:

- Վա՛յ, - Տիգրանին ու Լուսինեին տեսնելով՝ զարմացած ձևացան նրանք, - դուք էլ ե՞ք արդեն եկել:

- Նոր տարվա օրով ինչո՞ւ եք այսքան շուտ վեր կացել, - հոնքերը կիսեց Տիգրանը:

- Եկել ենք Կոկոյին շնորհավորենք, հարցնենք՝ ոնց է: Իսկ դո՞ւք, - իրեն չկորցրեց Անին:

«Տեսնես՝ ինչու՞ եմ բոլորն ինձանով հետաքրքրվում: Կարող է՞, հիվանդոտ տեսք ունեմ», - անհանգստացած մտածեց Կոկոն:

- Հա, Կոկո, ուզում էի հարցնել՝ վերջերս հեռու տեղերից նամակ չե՞ս ստացել, - իբր իմիջիայլոց, հարցրեց Անին:

- Չե՞զ ինչ, - վրա տվեց Տիգրանը, - առաջինը մենք ենք խնդրել:

- Հետո՞ ինչ, - ասաց Գրիգորը, - մենք էլ հիմա ենք խնդրում, - ու անգիջում դիրք գրավեց:

Տիգրանը շփոթվեց: Հիմա ի՞նչ անի: Պարզ էր, որ Կոկոյի նամակը ձեռք գցելը հեշտ չի լինելու: Ու հանկարծ նախորդ անգամներից հիշեց, որ նման դեպքերում պետք է փորձել պայմանավորվել ու համաձայնության գալ: Իսկ մինչ Տիգրանն այս մտքերով էր տարված,

Կոկոն վրդովված փնթփնթում էր.

- Գալիս եմ, առավոտ-գիշերով արթնացնում, հերիք չի, հետո էլ իմ ունեցվածքի վրա աչք եմ տնկում: Կարող է՞, մոռացաք, որ նամակի վրա իմ հասցեն է: Տեսեք. Համերաշխ բակ 13, Իմաստուն Ծառ 1, Հարմար բույն, Կոկո Նախշունյանին:

«Համերաշխ բակ» բառերը լսելով՝ Գրիգորն էլ հասկացավ այն, ինչ Տիգրանն էր հասկացել. պետք էր վերջ տալ վեճերին՝ իրար լսել-հասկանալ, մի լուծում գտնել ու համաձայնության գալ:

Հենց այդպես էլ արեցին: Նամակներն իրար ցույց տվեց, և պարզվեց, որ բոլորին նույն բանն է պետք: Դու մի ասա՝ Գրիգորենց նամակի՝ Չմեռ պապի պայմանը հենց դա էր՝ որ կարողանան համաձայնության գալ: Դրանից հետո մնացածը պարզելն արդեն խաղուպար էր. հանդիպման վայրը, բանից պարզվեց, Ծառն էր, իսկ անակնկալը թաքցրած էր փչակում: Այն մի մե՛ծ...: Չէ, ավելի լավ է՝ չասեմ: Ո՞վ իմանա՝ միգուցե Չմեռ պապը մի օր ձե՞զ էլ ուզենա անակնկալ նվիրել: Եթե, իհարկե, կարողանաք համաձայնության գալ:


Իսկ Կոկոն խցկվեց փչակի խորքն ու այնտեղ Չմեռ պապիկից մի նվեր էլ գտավ: Լուսանկարչական խցիկ:

- Հապա մի բոլորդ կողք-կողքի կանգնեք, ժպիտ, հիմա ծիտիկ կթռչի...: Չըխկ: Ապրե՛ք, - ասաց Կոկոն ու լուսանկարեց բոլորին: - Շնորհավոր Նոր տարի՛...

- Շնորհավոր, Կոկո, - պատասխանեցին երեխաներն ու Ծառի շուրջն ուրախ շուրջպար բռնեցին, - թող Նոր տարին նոր արկածներ բերի:

Իսկ Գրիգորը պարում էր ու մտածում. «Ճիշտ է, էլի, ո՞վ էր ասում, թե Չմեռ պապ չկա: Բա ո՞վ էր անակնկալը պատրաստել»:

Հովանոցը



Ըստ **Թեա Հուրգայաի** համանուն սցենարի, Կրասան
Թեմա՝ **Միջնորդություն**

-Ա՛

յ, հենց այս ճյուղի վրա էլ կսարքեմ, - Ծառի ճյուղերը տնտղելով որոշեց Կոկոն ու, իր ընտրությունից գոհ, ժպտաց: Իր ընտրած ամենափարթած ճյուղին թառեց ու նայեց չորս կողմը. վերևից գեղեցիկ տեսարան էր բացվում:

- Ապրեմ ես, - ինքն իրեն գովեց Կոկոն ու հպարտ փքվեց, - սրանից էլ հարմար տե՞ղ: Աշխարհը ասես բոխո՞ մեջ լինի: Սա՞ ինչ բան է, - փնթփնթաց ցած նայելով. Քուչոն, Ծառի տակ կույ էկած՝ քնած էր ու, Կոկոյի կարծիքով, փչացնում էր տեսարանը:

- Ըհր՛, էս բրդոտն էլի ամենասահարմար տեղում պառկել՝ խռմփում է: Հե՛յ, - ճյուղից ցած կախվելով ձայն տվեց շանը, - վեր կաց, քնելու տեղ ե՞ս գտել:

Բայց Քուչոն ի պատասխան միայն հորանջեց, շուռ եկավ մյուս կողքի ու շարունակեց խռմփացնել:

- Ա՛յ քեզ բա՛ն, - վրդովվեց Կոկոն, - ես էստեղ իմ բնակարանային հարցը չեմ լուծել, իսկ էս անշնորհքը հանգիստ քնել է, էն էլ հենց, կարելի է ասել, շինիրապարակի մեջտեղը: Հե՛յ, քեզ եմ ասում, քնկո՛տ անբան, արթնացի՛ր:

Ի պատասխան էլի Քուչոյի գոմռոցը լսեց: Մի քանի րոպե Կոկոն պապանձված նստած էր ու չգիտեր՝ ինչ աներ: Բայց թե, Կոկոյին ճանաչողները հո գիտեն, որ նա դիրքերը հեշտ զիջողներից չէ: Մի քիչ մտածելուց հետո ինքն իրեն որոշեց, որ ուզում է աշխարհի բոլոր շները գան՝ Ծառի տակ քնեն: Մեկ է՝ ինքը պիտի վաղը բնակարանամուտը նշի: Ու անցավ գործի: Դյուղեր էր տանում-բերում, ճեղքերը տերևներով ու ծեփով փակում էր, թափված բմբուլները հավաքում, հատակին էր փռում, որ փափուկ լինի: Ու ինչքան էլ փորձում էր զգույշ աշխատել, երբեմն-երբեմն ինչ-որ կտորտանքներ թափվում էին ցածում քնած Քուչոյի գլխին:

- Կրողնե՞ք հանգիստ քնեմ, - վերջիվերջո չհամբերեց նա ու զայրացած տեղից վեր թռավ, - մեկ դիմացա, երկու դիմացա, բայց ամեն ինչ չափ ու սահման ունի, ա՛յ տնաշեն:

«Ոնց էլ իմացա՞վ, որ տուն եմ շինում», - մտքում զարմացավ Կոկոն ու բարձրաձայն ասաց.

- Ի՞նչ ես փնթփնթում: Լավ էլ իմացար, որ տուն եմ շինում: Ես ի՞նչ մեղք ունեմ, որ գնացել-եկել՝ շինհրապարակում ես քնել: Կամ ուրիշ տեղ գնա, կամ էլ դիմացիր:

- Դու դեռ չէիր ծնվել, որ ես այստեղ էի քնում: Ես ի՞նչ անեմ, որ իմ քնելու տեղը որոշել ես շինհրապարակ դարձնել, - վիրավորվեց Քուչոն:

- Վա՛յ - վա՛յ - վա՛յ, - ծաղրեց Կոկոն, - գոնե ամաչեիր. ընկերդ տուն չունի, դու քնելուց ես խոսում:

Քուչոյի բերանը զարմանքից բաց մնաց:

- Ո՞նց՝ տուն չունես: Բա սա՞, - ու թաթով Կոկոյի հին բույնը ցույց տվեց:

Բայց Կոկոն չպատասխանեց. սկսեց լռելյայն ծեփ շաղախել: Ծեփի մի գունդ կտուցից պոկվեց ու թրմփաց ուղիղ շան ճակատին:

- Ո՞նց բացատրեմ, որ հասկանաս, - ի վերջո ասաց Քուչոյին, - ես աճող օրգանիզմ եմ, եթե, իհարկե, հասկանում ես, թե դա ինչ բան է: Ու ժամանակ առ ժամանակ կարիք է լինում բնակարանային պայմաններս բարելավել: Հո ոտքերս բնից դուրս կախած չե՞մ քնելու: Լավ, հերիք խանգարես, ես քո հավեսը չունեմ:

- Չհասկացա՛: Ե՞ս եմ քեզ խանգարում, այ քեզ լկտի՛, համբերությունը կորցրեց Քուչոն, - աճող օրգանիզմիս տեսեք: Իսկ որ քո աճը գիշերները չհսկեմ, ու հարևան բակի կատուները գան, ո՞նց ես աճելու:

- Քեզ ո՞վ բան ասաց: Քնում ես՝ քնիր, բայց ուրիշ տեղ, - ասաց Կոկոն ու այս անգամ դիտավորյալ նշան բռնելով՝ ծեփի մի մեծ գունդ զցեց Քուչոյի ձախ ականջին:

- Գը՛ռռռ, - կատաղեց Քուչոն, - հիմա որ դրան կծեմ՝ ինձ ո՞վ կմեղադրի:

- Տե՛ղն է, - ամբարտավան ձայնով հայտարարեց Կոկոն, - գայլային բնագոյներդ քեզ պահիր: Զեզնից վախեցող չկա՛:

Կոկոյի ու Քուչոյի զզվտոցի թեժ պահին Տիգրանը բակ իջավ:

- Ի՞նչ աղմուկ եք բարձրացրել, - բրդուճը ծամելով հարցրեց նա, - զարթնել եք, չեք զարթնել, արդեն կոխվ ե՞ք անում:

- Արի՛, արի՛, - ուրախացավ Կոկոն, - քանի արյուն չի թափվել, ես վայրենուն խոսք հասկացրու: Երևի քեզ լսի:

- Չմտածեք, - ոգևորվեց Տիգրանը, - մենք դպրոցում միջնորդություն ենք սովորել: Աչքներդ չեք թարթի՝ կհաշտեցնեմ ձեզ:

- Ես մեղք չունեմ, Կոկոյի՛ն ասա: Ես ինձ համար հանգիստ քնած

էի: Ի՛նքը սկսեց վրաս վերևից ճյուղեր շարտել:

- Սուտ է ասում, - իրավիճակի՝ Քուչոյի մեկնաբանությանը չհամաձայնվելով, ասաց Կոկոն: - Ես ինձ համար տուն էի շինում: Մեղավո՞ր եմ, որ գնացել-եկել՝ հենց այդտեղ էր քնել:

- Հասկացա, - գլուխը տմբտմբացրեց Տիգրանն ու մտքերի մեջ ընկավ:

- Ինձ որ հարցնես՝ Քուչոյին պետք է մեկուսացնել: Չե՞ս տեսնում՝ կատաղել է: Դա հասարակության համար էլ վտանգավոր կլինի:

- Ստախո՛ս, բողբոն էլ գիտեն, որ ես բարի շուն եմ: Իսկ գրպարտիչներին պետք է պատժել: Առաջարկում եմ՝ Կոկոյին դնել իր հին բույնը, նորով էլ վրայից ծածկել, որ գոնե մի երկու ժամ ձայնը չլսենք:

- Վերջացրե՛ք, - ընդհատեց Տիգրանը, - ավելի լավ է՝ ամեն մեկը փորձեք ձեզ դիմացինի տեղը դնել ու տեսեք, թե ինչ եք զգում: Որ լավ մտածեք, կհասկանաք, որ իզուր եք կռվում:

Կոկոն ու Քուչոն զարմացած լռեցին ու փորձեցին հետևել Տիգրանի խորհրդին: Մինչ նրանք մտածմունքի մեջ էին ընկել, Տիգրանի հայացքն ընկավ Կոկոյի բնից դուրս ցցված հովանոցի պոչին:

Առաջինը Կոկոն խոսեց.

- Լավ, թող քնի: Ես էլ մի կերպ հին բնույնս կույ կգամ, - ինքն իրեն խղճալուց Կոկոյի աչքից արցունքներ հոսեցին:

Քուչոն Կոկոյի այս անձնուրացությունից հավիտե: Չէ՞ որ նա իսկապես շատ բարի շուն էր:

- Ոչ մի դեպքում, - պատասխանեց նա, - ավելի լավ է՝ ես ուրիշ տեղ քնեմ: Հետո՞ ինչ, որ արևի տակ կխաշվեմ: Հո չե՞մ հավի: Կոկոյի բույնն ավելի կարևոր է:

- Ապրե՛ք, - գովեց Տիգրանը, - գիտեի, որ վերջը կխաշավեք: Կոկո՛, էն ի՞նչ է բնիցդ ցցված:

- Հե՛ջ, հովանոցս է: Չինաստանում են նվիրել: Սիրուն է, չէ՞: Վա՛յ, ո՞նց շուտ գլխի չընկա, - տեղից վեր թռավ Կոկոն ու գնաց հովանոցը բերելու:

Քիչ անց, Ծառի ամենափարթամ ճյուղին հետ ու առաջ անելով, Կոկոն նոր բույն էր շինում, իսկ ցածում՝ իր մշտական տեղում, մի գեղեցիկ կանաչ հովանոցի հովանու տակ հանգիստ քուն էր մտել Քուչոն և երագում երջանիկ ժպտում էր:



Ես էլ եմ ուզում Կախարդել

Ըստ **Արզու Սուքանի** համանուն սցենարի, Արթուրյան
Թեմա՝ **Միջնորդություն**

Այն շենքն, ուր ապրում էին մեր բարեկամները, մի շատ զարմանահարաշ ձեղնահարկ ուներ: Ձեղնահարկը ճիշտ Տիգրանենց բնակարանի վերևն էր, իսկ այնտեղ տանող փոքրիկ դռնակը երբեք չէր էլ կողպվում:

Սովորաբար բոլորն իրենց անպետք իրերը ձեղնահարկում էին պահում, օրինակ՝ ոտքը կոտրած աթոռներ, վաղուց կարդացած գրքեր, հնացած հագուստ կամ փչացած հեռուստացույց, կարծելով, թե մի օր պետք կգան:

Իհարկե, ձեղնահարկը Տիգրանի սիրած վայրն էր: Ժամերով հին իրերը փորփրելիս մեկ էլ անպայման մի հետաքրքիր և իրեն շատ պետքական բան էր գտնում: Նա համոզված էր, որ սարդոստայնների, ժանգի ու փոշու մեջ մի խորհրդավոր բան կար, ու սպասում էր, թե երբ է բացահայտվելու:

Այդ օրն էլ, որի մասին պատմում են, Տիգրանը ձեղնահարկ էր բարձրացել, ուր, աչքերին ու սեփական բախտին չհավատալով, անպետք իրերի մի մեծ կույտի տակից ինչ-որ խորհրդավոր սև արկղիկ էր գտել: Այդպիսի արկղիկներ նա ֆիլմերում շատ էր տեսել, սովորաբար՝ շրջիկ կախարդների ձեռքին:

Հուզմունքից ու անհամբերությունից դողացող ձեռքերով նա արկղիկը քաշեց-հանեց կույտի տակից ու զարմանքից կտրացած աչքերով կարդաց մեծ տառերով գրված գրությունը. «Կախարդանքների արկղ: Ուժի մեջ է 400 տարի»: Տակն ավելի փոքր տառերով մի գրություն էլ կար՝ «Ձգուշացեք, անկանխատեսելի է»: Տիգրանը շունչը պահեց: Նա հիշեց տատիկի պատմությունները մի տարօրինակ հարևանի մասին, որը շատ տարիներ առաջ իրենց շենքում էր ապրում ու երեխաներին ամեն տեսակ կախարդանքներ էր ցույց տալիս: Այդ տարօրինակ հարևանն ու սև արկղիկը պիտի որ մի կապ ունենային: Արկղիկը գրկեց ու վազեց բակ: Բակում վերջապես բացեց ու հրճվանքով տեսավ, որ մեջը մի սրածայր սև գլխարկ էր, ոսկե աստղեր ասեղնագործած սև թիկնոց ու, իհարկե, կախարդական փայտիկ: Այս ամենի տակ ծայրից-ծայր գրոտած մի փոքրիկ սև գրքույկ կար՝ անհասկանալի նշաններով ու առաջին հայացքից՝ անկապ խոսքե-

րով: Օրինակ՝ ի՞նչ էր նշանակում. «Սկոռիկի-յոռիկի» կամ «Սակլամբոս, սակլամբոս, կախարդանքի տոմս» և էլի սրա նման բաները:

«Երևի կախարդական խոսքեր են», - մտածեց Տիգրանը: Թիկնոցը վրան գցեց, հագավ սրածայր գլխարկն ու կախարդական փայտիկը ձեռքն առավ: «Հիմա կփորձենք», - որոշեց, բարձրաձայն կարդաց առաջին պատահած կախարդանքն ու փայտիկը թափահարեց.

Կճուճ ունես մի պուճուր, մեջը՝ երկու գույնի ջու՛ր,
Քեզ տամ կտուց ու փետուր, դու ինձ տեղը կճուճ տուր...

Մի քանի վայրկյան ոչինչ տեղի չէր ունենում, հետո ինչ-որ ծափ լսվեց: «Երևի ծափ տալու կախարդանք էր», - հիասթափված մտածեց Տիգրանը, մեկ էլ մի աղիողորմ ճիչ լսվեց ու բախում իսկական իրարանցում սկսվեց:

- Չգիտեմ էլ՝ ինչ կատարվեց, - քիչ անց իր սենյակում հավաքված երեխաներին պատմում էր Անին: - Ես ինձ համար խոհանոցում ձվածեղ էի պատրաստում, մեկ էլ ծափ լսեցի:

- Հա, ես էլ լսեցի, ոնց որ՝ փշրվող ապակու ձայն, - ասաց Լուսինեն:

- Ըհը, - համաձայնեց Անին, - ծափի վրա աչքս մի բուպե թավայից կտրեցի ու մեկ էլ տեսնեմ՝ վառարանին ձվի տեղը...

- Տեղը՝ ի՞նչ, - շունչը պահած հարցրեց Գրիգորը:

- Չեք հավատա. տեղը Կոկոյի բույնն էր, Կոկոն էլ մեջը:

Քուչոն, այս տեսարանը պատկերացնելով, փռթկաց:

- Ի՞նչ ես ծիծաղում, - վիրավորվեց Կոկոն, - քիչ էր մնում՝ խորոված դառնայի:

- Ճիշտ եմ ասում՝ ես մեղավոր չեմ, - արդարացավ Անին: - Չեմ հասկանում՝ ոնց պատահեց: Քիչ էր մնում՝ վախից սիրոս ճաքեր: Լավ էր՝ շուտ տեսա ու կրակն անջատեցի:

- Ըհը, - հեզմեց Կոկոն, - բայց անջատելուց առաջ վրաս մի լավ աղ ու պղպեղ ցանեցիր:

Անին իրեն մի քիչ մեղավոր էր զգում, բայց ինքն էլ չդիմացավ ու փռթկաց:

- Ազնիվ խոսք, պատահաբար ստացվեց:

- Բա ո՞նց, - փնթփնթաց Կոկոն, - պատահաբար: Դե ասա՝ բախտս բերեց, որ հետո էլ պատահաբար չկերար: Ի՞նչ կա որ. թարմ տապակած թռչնամիս: Ի՞նչ ահավոր ժամանակներ են. մարդիկ

պատահաբար ընկերներին են ուտում:

Այդ պահին դուր թրխկոցով բացվեց ու հայտնվեց շնչակտուր Տիգրանը: Առանց բարև-բարի լույսի, սկսեց վրա տալ, թե ինքը աշխարհի ամենահայտնի կախարդն է ու դրա նման անհեթեթ բաներ:

- Չե՞ք հավատում, - ասաց նա ու ձեռքի թավան առաջ պարզեց: - Ըհը, ձվածեղ եմ կախարդել: Տաք-տաք:

- Վա՛յ, իմ թավան ո՞նց է մոտդ ընկել, - ապշեց Անին:

- Դե, լսե՛ք, - ոգևորված շարունակեց Տիգրանը, - կախարդական փայտիկը թափ տվեցի ու ասացի.

Կճուճ ունես մի պուճուր, մեջը՝ երկու գույնի ջու՛ր,

Քեզ տամ կտուց ու փետուր, դու ինձ տեղը կճուճ տուր...

Մեկ էլ տեսնեմ՝ որտեղից-որտեղ թավան առաջս հայտնվեց:

Երեխաների բերանը զարմանքից բաց մնաց. ինչե՞ր է խոսում. ի՞նչ կախարդական փայտիկ, ի՞նչ բան, չլինի՞ խելքը թոցրել է:

- Հա, վա՛յ, մոռացել էի, որ չգիտեք: Հիմա պատմեմ:

Ու պատմեց զարմանահրաշ արկղիկի պատմությունը:

Պատմեց-վերջացրեց, հետո Անին էլ իր ու Կոկոյի հետ պատահածը պատմեց, ու երեխաները ոգևորված որոշեցին կախարդ-կախարդ խաղալ: Դրանից էլ հեշտ խա՞ղ. փայտիկը թափ ես տալիս ու կախարդական խոսքեր ասում:

Քուչոն ոգևորվեց: - Դե՛, խաղանք:

Այս խոսքերով գլխարկը գլխին կործեց, թիկնոցը վրան գցեց ու թաթը ձգեց փայտիկին:

- Հը՞, - հարցրեց, - հիմա ի՞նչ եմ ասելու:

- Ոչ մի բան էլ չե՛ս ասելու, - խիստ ձայնով պատասխանեց Տիգրանն ու փայտիկը մի կողմ տարավ: - Կախարդը ե՛ս եմ, դուք իմ հանդիսատեսն եք: Հասկացա՞ք:

- Սպասեք, Տիգրանը արդեն մի անգամ կախարդել է, - ասաց Անին, - ու տեսանք, թե ինչ ստացվեց. սառած ձվածեղ, մեկ էլ կիսատեփ Կոկո: - Դրա համար էլ հիմա կախարդելու հերթը իմն է, - ու նայեց Տիգրանին:

Մրա վրա Լուսինեն ու Գրիգորն էլ ըմբոստացան ու իրար ընդհատելով սկսեցին ասել, որ իրենք էլ են ուզում կախարդել:

Տիգրանը համբերությունը կորցրեց:

- Շա՛տ լավ, - ասաց նա, - ուզում ե՞ք՝ ոչ էլ կխաղանք:

«Երևի առանց միջնորդի գործը գլուխ չի գա», - ընկերների տխուր դեմքերին նայելով՝ որոշեց Տիգրանը: Նա տատիկից լսել էր, որ միջնորդն այն մարդն է, որ վիճողներին օգնում է հաշտվել: Բայց միջնորդ՝ որտեղի՞ց: Ու որոշեց ընկերներին հարցնել: Ծառից էլ լավ միջնորդ՝ որոշեցին բոլորը միաձայն: Ո՞վ չգիտեր, որ նա բոլորից իմաստուն է:

Ծառը հաճույքով համաձայնեց ու պատրաստվեց հերթով բոլորին լսել: Առաջինը Տիգրանն սկսեց:

- Ես ձեղնահարկում մի սև արկղ գտա, մեջը՝ կախարդական փայտիկ: Ու որոշեցինք կախարդ-կախարդ խաղալ: Ասեցի՝ կախարդը ես եմ: Ես էի, չէ՞, արկղը գտել: Համ էլ, արդեն մի անգամ կախարդել էի ու ձևը գիտեի:

- Գիտեիր, ըիր, բա ո՞նց, - մեջ մտավ Կոկոն:

- Բայց մենք էլ ենք ուզում մի քիչ կախարդել, - բացատրեց Անին, - հետո՞ ինչ, որ արկղիկը Տիգրանն է գտել:

- Է, կախարդեք, - զարմացած ձևացավ Ծառը, - ի՞նչն է խանգարում:

- Բայց ո՞նց, - բացականչեց Լուսինեն, - ախր, մի կախարդական փայտիկ, իսկ մենք վեց հոգի ենք:

- Հասկացա, - ասաց Ծառը, - եթե վեց փայտիկ ունենալիք՝ կգնալիք տուն ու ամեն մեկը առանձին-առանձին տանը կկախարդեր:

- Չէ, ի՞նչ ես ասում, - առարկեց Տիգրանը, - մենակ հետաքրքիր չի՞ մի անգամ փորձել եմ, - ու գլուխը կախեց, - քիչ էր մնում՝ փորձանք բերեի:

- Համ էլ՝ նույնն է, թե մեծ կարկանդակ թխես ու ընկերներիդ չիյուրասիրես՝ մենակ ուտես, - ավելացրեց Անին, - ի՞նչ հետաքրքրություն:

- Ապրես, ճիշտ համեմատություն էր, - Անիին գովեց Ծառը, - հիմա ի՞նչ եք անելու: Ուզո՞ւմ եք միասին խաղալ:


- Ուզում ենք, շատ ենք ուզում: Մենակ հետաքրքիր չի, - միաձայն բացականչեցին ընկերները:

- Ուրեմն...

Բայց Տիգրանը չթողեց, որ Ծառը խոսքն ավարտի:

- Մենք էլ հերթով կկախարդենք, - գլխի ընկավ նա, - չէ՞:

Ու հանկարծ բոլորն ուրախացան. այ քեզ բա՛ն, իրենք էլ հենց նույնն էին մտածում: Չլինի՞ Ծառն էլ էր կախարդել:



Օդադարուկը

Ըստ **Իրինա Ծասուրյանի** համանուն սցենարի, Հայաստան

Թեմա՝ **Միջնորդություն**

Ո՞

վ կասի, թե նվերներ ստանալ չի սիրում: Իհարկե, բոլորն էլ սիրում են: Հատկապես Անին: Հենց այն օրը, որի մասին ուզում եմ պատմել, նա մի գեղեցիկ փաթեթավորված տուփ էր ստացել, մեջը՝ օղապարուկ:

- Էդ ի՞նչ է, - հետաքրքրվեց Կոկոն, երբ Անին, տուփը թևի տակ, բակ դուրս եկավ:

- Օղապարուկ է, - բացատրեց Անին, - որ երկինք թռցնենք:

- Բան ասացիր, - չհավատաց Կոկոն, - ես «օղապարուկ» անունով թռչուն չեմ ճանաչում: Իսկ եթե թռչուն չի՝ ո՞նց պիտի թռչի: Քո օղապարուկը, երևի, շատ-շատ՝ պարի: Ա՛յ, որ «օղաթռուկ» լիներ, երևի կհավատայի: Իսկ դրա միսը ուտո՞ւմ են: Թե՛ չէ՝ առավոտից բերանս բան չեմ դրել:

- Սպասիր, սպասիր, - վախեցած Անիի ձեռքը բռնեց Քուչոն, - տուփը չբացես: Ո՞վ իմանա՝ բա որ կծան լինի:

Անին ծիծաղեց. բարեկամների ենթադրություններն, ախր, շատ զվարճալի էին:

- Մի՛ վախեցիր, Քուչո՛ ջան: Չէ, Կոկո՛, ուտելու չի: Տեսեք՝ խաղալիք է, - ու տուփից հանեց բարակ գույնզգույն թղթից պատրաստած գեղեցիկ օղապարուկը:

- Ինչ սիրուն խաղալիք է, - հիացավ Քուչոն, - ինձ չես նվիրի՞:

- Չէ, Քուչո ջան, նվերը չեն նվիրում: Բայց միասին կխաղանք, լա՞վ:

- Շուտ եմ ասել՝ առաջինը ես եմ, - բացականչեց որտեղից-որտեղ հայտնված Տիգրանն ու, առանց երկար-բարակ խնդրելու, օղապարիկը փախցրեց Անիի ձեռքից, - հիմա կստուգենք՝ թռչո՞ւմ է, թե՞ չի թռչում:

Օղապարուկը քամու հոսանքով վեր ճախրեց՝ գույնզգույն պոչը հետևից տանելով: Մի պահ Քուչոն շատ էր ուզում պոչից բռնել, բայց փոշմանեց: «Ի՞նչ իմանաս, պարան է, կծեց՝ կծեց» - մտածեց նա:

Իսկ Անին հրճվանքից վեր-վեր էր ցատկոտում ու ծափ տալիս.

- Իմ օղապարուկը, ուխ, տեսեք՝ ոնց է ճախրում:

Օղապարուկը սլանում ու սլանում էր դեպի վեր, ավելի ու ավելի

փոքրանում, մինչև որ բոլորովին անհետացավ երկնքում:

- Վա՛յ, ու՛ր կորավ, - զարմացավ Քուշոն, - ախր, դեռ կարգին չէինք էլ ծանոթացել:

- Ուր կորա՛վ, հա՛՛ ուր կորա՛վ: Թռա՛վ, - բանիմաց տեսքով եզրակացրեց Կոկոն: - Որ թելից չբռնեք՝ բա ի՞նչ կանի: Ու դա էլ հետ եկողը չի, խոսքս հիշեք:

Իսկ ինքն իրեն մտածեց. «Թռչել իմացողը բա հոժար կամքով նեղ տուփը կխցկվի՞...»:

Անին այնքան էր վշտացել, որ բոլորովին գլուխը կորցրել էր: Քուշոն նույնիսկ մի պահ վախեցավ, թե աղջիկը կուշաթափվի:

- Անի ջան, մի վշտացիր, - փորձեց սփոփել ընկերուհուն, - ուզու՞մ ես՝ իմ թաքցրած ոսկորը քեզ նվիրեմ: Գու միայն ասա:

- Այդ բոլորը նրանից է, - Տիգրանի ուսին թառելով հայտարարեց Կոկոն, - որ ոմանք իրենց ամենագետ են երևակայում ու չեն էլ բարեհաճում մտածել, թե իրենց արաքն ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ: Խելքի՛ տուարակ:

- Ես հո դիտմամբ չարեցի՞, - փորձեց արդարանալ Տիգրանը, - ես կարծում էի՝ բան չի պատահի:

- Բա ես ի՞նչ եմ ասում, - տղայի արդարացումներն ընդհատեց Կոկոն, - մի բան անելուց առաջ նախ պիտի մտածե՛ս:

Տիգրանը վախվորած Անիին նայեց, բայց Անին Տիգրանին տեսնել չէր ուզում. հոնքերը կիտեց ու մեջքով շրջվեց:

- Ապու՛շ, գնա կորիր: Չեմ ուզում հետդ խոսել:

Այսպես մի քանի բոպե իրարից խռով կանգնել էին Անին ու Տիգրանը ու չէին ուզում իրար երեսի նայել, մեկը՝ զայրույթից, մյուսը՝ ամոթից:

- Հետո՞, - վերջապես խոսեց Գրիգորը, - ինչքա՞ն պիտի խռով մնան: Սրանց պետք է հաշտեցնել:

- Ես գիտեմ, թե ոնց հաշտեցնենք, - վրա տվեց Կոկոն՝ արդեն մտքում պատկերացնելով, որ Ծառի վրա մի գեղեցիկ ոսկետառ հուշատախտակ է փակցվելու. «Այս բնում ապրել է նշանավոր Կոկոն՝ հայտնի հաշտարարն ու խաղաղարարը»: - Եթե մաղիկ չեն ուզում հաշտվել, ուրեմն ընկերները պիտի գոռով հաշտեցնեն: Իսկ հաշտեցնելու համար մեզ միջնորդ է պետք՝ մի իմաստուն երրորդ կողմ, մեկը,

որին վիճողները վստահում են ու հարգում:

«Հիմա հաստատ իմ անունը կտա, - հույսով մտածեց Քուչոն: -Բա էլ ո՞ւմ են բոլորը հարգում ու վստահում»: Բայց, չգիտես ինչու, բոլորը հայացքները Ծառին հառեցին:

Ծառը հոգոց հանեց ու ասաց.

- Լավ, անցնենք գործի, - ու դիմեց Անիին ու Տիգրանին, - հերթով պատմեք, թե ինչ է եղել: Բայց աշխատեք մեկդ մյուսի ասածը լավ լսել:

- Ի՞նչ պատմեմ, - վրդովված սկսեց Անին, - նվերս օդ ցնդեց: Գոնե հասցնեի մի քիչ խաղալ:

- Վայ-վայ-վայ, - հեզմեց Տիգրանը, - մե՛ծ բան: Խաղալիքը կորել է: Հազար անգամ ներողություն խնդրեցի: Հո դիտմամբ չե՞մ արել: Որ իմանալի՝ զգույշ կլինեի:

- Ճիշտ է, - նախատեց Անին, - նախ անում է, հետո՝ մտածում:

- Եթե քեզ մի բան նվիրեի, - Ծառը դիմեց Տիգրանին, - մի բան, որ քեզ շատ-շատ դուր է գալիս, իսկ մեկը վերցներ ու կտտեր կամ կորցներ, դու քեզ ո՞նց կզգայիր:

- Երևի կտխրեի, - խոստովանեց Տիգրանը:

- Տեսա՞ր, - ասաց Ծառն ու դիմեց Անիին, - դու՞ ինչ կասես՝ Տիգրանն ինչու՞ օդապարուկը ձեռքիցդ խլեց:

- Ախր, օդապարուկս շատ սիրուն էր: Երևի ուզեց խաղալ:

«Ճիշտ է, շատ սիրուն էր», - մտքում համաձայնեց Քուչոն՝ օդապարուկի վառվռուն պոչը հիշելով:

Մեկ էլ Տիգրանը զարմանալի բան արեց. մոտեցավ Անիին, գրկեց ու ցածրաձայն ասաց.

- Անի ջան, շատ եմ խնդրում, ներիր ինձ: Էլ չեմ անի: Խոստանում եմ, -ու ամոթխած ժպտաց:

Տիգրանի անսպասելի պահվածքից հուզված՝ Անին էլ ի՞նչ պիտի աներ. ներեց նրան:

- Լավ, ի՞նչ արած: Եղածը եղած է: Տե՞ս՝ տուփին ինչ են գրել. թե ոնց են օդապարուկ սարքում: Արի՛ փորձենք: Մեկ էլ տեսար՝ ստացվեց:

- Ա՛յ, ապրեք, - ուրախացած մեջ ընկավ Կոկոն, - ո՞վ էր ասում, որ դատարկ տուփերը պիտանի բան են: Տեսա՞ք:

Հաջորդ մի քանի ժամը երեխաները գլուխ-գլխի տված աշխատում

Օղապարուկը

էին՝ կարդում էին, չափում, կտրում, ներկում: Վերջապես օղապարուկը, կարծես թե, պատրաստ էր:

- Մենակ մի փոքրիկ բան է պակասում, - նկատեց Կոկոն, պոչից մի գեղեցիկ փետուր պոկեց ու ամրացրեց օղապարուկի պոչին: - Ա՛յ, հիմա շատ սիրուն է, - գոհունակությամբ հայտարարեց նա ու մի փոքր կողք գնաց, որ ավելի լավ հիանա:

Տիգրանն ամուր բռնեց օղապարուկի պոչից, որ հանկարծ այս մեկն էլ չփախչի, ու օդ թռցրեց: Օղապարուկը սլացավ վեր ու վեր: Մեկ էլ Քուչոյին թվաց, որ աչքին երկուսն են երևում:

- Վա՛յ, տեսեք, կորած օղապարուկը վերադարձավ, - ուրախ-ուրախ բացականչեց Լուսինեն:

Իսկապես, Քուչոյի աչքին չէր երևացել. կապուտակ երկնքում կողք-կողքի երկու օղապարուկ էին ճախրում. մեկը երեխաների սարքածը, մյուսը՝ այն, որ Անին նվեր էր ստացել: Նրանց պոչերն օդում միահյուսվեցին, ու նրանք, դանդաղ սահելով, սկսեցին ցած իջնել:

Երեխաների իրավունքների դաճադանը



89

Ըստ **Իռադա Սայյաի** համանուն սցենարի, Ադրբեջան
Թեմա՝ **Երեխայի իրավունքներ**

Աաշի ժամ էր: Օրը շոգ էր, ու երեխաները տներն էին գնացել: Կոկոն ինչ-որ տեղ էր կորել, ու միայն Քուչոն էր Ծառի ստվերում հանգիստ նրավում: Մեկ էլ հանկարծ վերևից բացականչություն լսեց.

- Ուխ, ինչ լավ է, մտքովս չէր անցնի:

Քուչոն տեղից վեր թռավ ու ականջները սրեց:

- Այ քեզ բան, - շարունակեց ձայնը, - ո՞վ կմտածեր:

Քուչոն գլուխը բարձրացրեց, որ տեսնի՝ ով է աղմկում: Ծառի ամենաբարձր ճյուղին Կոկոն էր թառել ու ինչ-որ գիրք էր կարդում:

- Հոյակապ բան է, - ասաց նա:

Քուչոյի հետաքրքրությունը շարժվեց:

- Ի՞նչը, ի՞նչն է հոյակապ, - հարցրեց նա:

- Գիրքը, գիրքն է հոյակապ, - պատասխանեց Կոկոն: - Ես էլ եմ մի քիչ հայակապ, որովհետև հոյակապ բան եմ մտածել:

Քուչոն զարմացած նրան նայեց. ի՞նչ էր խոսում:

- Վերջապես հասկացա, թե ինչով եմ զբաղվելու, - բացատրեց Կոկոն, - սրանից հետո երեխաների իրավունքներն եմ պաշտպանելու:

- Ի՞նչ իրավունք, ո՞ր երեխաների, - չհասկացավ Քուչոն:

- Բոլոր: Երեխաներն իրավունքներ ունեն, ու ես պաշտպանելու եմ, որ ոչ ոք չխախտի, - հանդիսավոր հայտարարեց Կոկոն:

- Հասկացա, - ասաց Քուչոն ու ականջը քորեց, - ոնց որ ես բակն եմ պաշտպանում:

Կոկոն գլխով արեց ու նայեց չորս կողմը. նրանք, ում իրավունքներն ինքը պատրաստվում էր պաշտպանել, արդեն ճաշել-վերջացրել էին ու սկսեցին կամաց-կամաց հավաքվել բակում: Նստեցին Ծառի տակ ու անցան Տիգրանի նկարների ալբոմը թերթելուն:

- Տեսե՛ք, - էջը թերթելով՝ ասաց Լուսինեն, - մեր բակը, Ծառը...

- Տիգրանը խոստացել էր, որ ինձ էլ կնկարի, - ասաց Գրիգորը, - բայց ասում է՝ մեծանամ, հայտնի նկարիչ դառնամ, հետո:

- Որեմն՝ հաստատ չնկարեց, - տխուր ասաց Լուսինեն, - որովհետև դժվար՝ նկարիչ դառնա:

- Ո՞նց, - զարմացավ Գրիգորը, - ինչու՞:

- Ի՞նչ իմանամ, - ուտերը թոթվեց Լուսինեն, - մայրիկը որոշել է, որ

պիտի շախմատի չեմպիոն դառնա, հայրիկն ասում է՝ չէ, թող մաթեմատիկոս դառնա, տատիկը ուզում է, որ բժիշկ դառնա, պապիկս էլ, թե՛ չէ որ չէ՛ թող ոստիկան դառնա:

«Ըհը՛, - մտածեց Կոկոն, - աչքիս՝ իմ գործելու ժամանակն է: Խեղճ տղայի իրավունքների վրա բռնանում են, չեն թողնում՝ իր ուզած բանով զբաղվի»:

- Հիմա բոլորդ ինձ եք լսում, - մոտիկ ճյուղին հարմար տեղավորվելով՝ հայտարարեց նա, - սրանից հետո հենց խնդիր ունենաք, կդիմեք ինձ ու Քուչոյին: Մենք երկուսով ձեր իրավունքներն ենք պաշտպանելու: Մենակ փորձվեն՝ խախտեն: Տիգրանն ու՞ր է, կանչե՛ք:

Այս խոսքերով՝ գիրքը բացեց, կտուցը խոթեց մեջն ու սկսեց ինչ-որ բան փնտրել:

- Ըհը, գտա՛, - վերջապես հայտարարեց նա, - տեսե՛ք՝ «Երեխաների իրավունքների հռչակագիր», հոդված 13. ***Ամեն երեխա իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք ունի:***

Չենց այդ ժամանակ էլ Տիգրանը բակ եկավ ու, ընկերներին միանալով, սկսեց պատմել, որ մայրիկն, իր կամքին հակառակ, իրեն շախմատի խմբակ է ուղարկում:

- Ասում է՝ քեզ չեմ հարցնելու, - դառնացած պատմում էր տղան, - որովհետև ինքը իմ մասին է մտածում, ու, որ շախմատը մարդուն կազմակերպված, խելացի, չգիտեմ ինչ է դարձնում: Ասում եմ. «Բայց ես շախմատ չեմ սիրում՝ ձանձրալի խաղ է»: Իսկ նա ասում է. «Դեռ փոքր ես, չես հասկանում: Որ մեծանաս՝ հետո շնորհակալություն կասես»:

- Բայց Տիգրանը իրավունք ունի, չէ՞, իր սիրած բանով զբաղվելու, - «իրավապաշտպանին» հարցրեց Լուսինեն:

- Էն էլ՝ ոնց, - միջամտեց Գրիգորը, - համ էլ իրավունք ունի իր կարծիքը ասելու, իսկ մյուսները պիտի գոնե լսեն:

Ու հարցական նայեց Կոկոյին, որ իր ասածը հաստատի: Կոկոն նորից թերթեց «Հռչակագիրը», ապա ասաց.

- Տեսե՛ք՝ հոդված 15. Մենք միասին խմբակ կամ ընկերություն ստեղծելու իրավունք էլ ունենք: Մի գլուխը լավ է, մի քանիսն՝ ավելի: Եկեք միանանք ու մտածենք, թե ոնց ենք Տիգրանի շահերը պաշտպանելու:

- Բայց ո՞նց պաշտպանենք, - հարցրեց Լուսինեն:

- Ես առաջարկ ունեմ, - ձեռք բարձրացրեց Գրիգորը, - եկեք մայրիկի հետ բանակցենք:

- Գործ չունեք, - տխուր առարկեց Տիգրանը, - մեկ էլ տեսար՝ ավելի

բարկացավ:

- Գժվար, - ասաց Գրիգորը, - ինչու՞ պիտի բարկանա:

- Կասի. «Որոշել եմ, պրծել»:

- Փորձը փորձանք չի, - հայտարարեց Կոկոն, - ուշադիր ինձ լսեք: Լուսինե՛, մայրիկդ ու՞ր կլինի:

- Երևի հեռուստացույց է նայում, - պատասխանեց աղջիկը:

- Ուրեմն՝ առաջ, դեպի ձեր տուն: Գնացի՛նք, - այս խոսքերով Կոկոն թռավ դեպի Տիգրանենց հյուրասենյակի բաց լուսամուտը:

- Ման, - սենյակ վազելով կանչեց Լուսինեն, - մի բոպե կգա՞ս: Ուզում ենք հետդ խոսել:

- Հո բան չի՞ պատահել, - աղջկա շառագունած դեմքը տեսնելով՝ անհանգստացավ մայրիկը:

- Չէ, մամ, արի՛, - ու մայրիկի փեշից քաշելով՝ տարավ միջանցք:

Երեխաները, Քուչոն ու Կոկոն միջանցքում նրան էին սպասում:

- Բարև ձեզ, - քաղաքավարի բարևեց Գրիգորը, - եկել ենք, որ մեր ընկերոջ իրավունքը պաշտպանենք: Մենք կարդացել ենք, որ նա իրավունք ունի ի՛ր կարծիքն ունենալ:

- Ախր, Տիգրանը էնքան լավ է նկարում, - բուն նյութին անցավ Անին:

- Մամ, ես շախմատ չեմ սիրում, ես նկարել եմ սիրում, - համարձակությամբ հավաքելով՝ ասաց Տիգրանը:

- Մամ, Տիգրանը իրավունք ունի ուրիշ կարծիք ունենալու, գրքում էր գրված, - եղբորը պաշտպանեց Լուսինեն:

- Տիգրան ջան, - փորձեց բացատրել մայրիկը, - ախր, ես քո լավն եմ ուզում: Շախմատը մաթեմատիկայիդ էլ կօգնի՝ տրամաբանությունդ կզարգացնի:

- Մամ ջան, ազնիվ խոսք, դասերս լավ կսովորեմ, մաթեմից մենակ հինգեր կստանամ, մենակ թողնես՝ նկարեմ, լավ էլի, - թախանձեց Տիգրանը:

- Ինչ ասեմ, - սկսեց տատանվել մայրիկը, - դե, եթե գնահատականներդ կուղղես...

- Անպայման, այ՛ կտեսնես, - մի անգամ էլ խոստացավ Տիգրանն ու մայրիկին համբուրեց:

- Ուռաաա՜, - բացականչեցին ընկերները, իսկ մայրիկն ասաց.

- Էդ որտե՞ղ եք կարդացել էդ խելոք բաները: Կտա՞ք՝ ես էլ կարդամ:

- Իհարկե, - համաձայնվեց Կոկոն ու հպարտ-հպարտ հայտարարեց, - իմ գիրքն է, ես եմ երեխաների իրավունքների պաշտպանը:

Գաղտնիք



93

Ըստ **Նանա Կացիապիլիի** համանուն սցենարի, Կրասան
Թեմա՝ **Երեխայի իրավունքներ**

Sիգրանը, Ծառի տակ նստարանին նստած, աչքերը երկնքին էր հառել՝ կապուտակ երկնքին, իսկ և իսկ Անիի աչքերի գույնի: Տիգրանի կարծիքով Անիից սիրուն, խելոք ու սրամիտ աղջիկ աշխարհում չկար: Իսկ եթե ինչ-որ մեկն այլ կարծիքի էր, ուրեմն, ի՞նչ արած, անճաշակի մեկն էր:

Կոկոն էլ, Ծառի ճյուղին թառած, աչքերը Տիգրանին էր հառել: Ինչ-որ տարօրինակ էր թվում Տիգրանը: Կոկոյի սիրտը կասկած էր ընկել. ո՞վ էր տեսել, որ ժամերով հայացքը երկնքին հառած, բերանը ջուր առած նստի. ո՛չ աղմկի, ո՛չ չարություն անի, իսկի ֆուտբոլ էլ չխաղա:

«Շատ, շատ տարօրինակ է: Ես կասեի՝ կասկածելի», - մտորում էր Կոկոն: Նա սեփական փորձից գիտեր, որ եթե փոքրիկ տղան ինչ-որ ժամանակ լուռումունջ նստած է, ուրեմն, երևի մի նոր չարություն է մտածում: Կոկոյի կարծիքով դա նույնքան անվիճելի էր, որքան, ասեմք, բնության օրենքները: Կոկոն օրենքները հարգում էր ու վստահում դրանց:

Այդ պահին տղան վեր կեցավ ու քայլեց դեպի տուն: Կոկոն, իհարկե, ուշի-ուշով հետևում էր նրան, ու աչքից չվրիպեց, որ Տիգրանի գրպանից մի բան ընկավ գետին: Ծրար էր...

- Մտքովդ չանցնի, - Կոկոյին զգուշացրեց Քուչոն, որը նույնպես նկատել էր գրպանից ընկած ծրարն ու տեսել էր, որ Կոկոն այն վերցրել է ու փորձում է բացել: - Ուրիշի նամակները չի՛ կարելի կարդալ: Չգիտե՞ս:

- Խելքիդ գոռ մի՛ տուր, - Քուչոյին բանի տեղ չդնելով՝ Կոկոն փորձում էր կտուցով պատռել ծրարը, - արտակարգ դեպքերում միշտ էլ կարելի է բացառություններ անել: Չե՞ս հասկացել՝ մեր Տիգրանը մտքին ինչ-որ վտանգավոր բան է դրել: Ոնց որ տազ արած լինի, որ հետո մի հերթական չարություն անի՝ լեղիներս ճաքի:

- Հիմա ո՞վ է խելքին գոռ տալիս, - բարկացավ Քուչոն, - մի հանգիստ թող ծրարը, քե՛զ եմ ասում, - ու սպառնալից զոմոսաց: - Գնա ու պատի վրայի պաստառը կարդա՛. «Երեխաներն իրավունք ունեն իրենց կարծիքն ունենալու և այն ազատ արտահայտելու», մեկ էլ՝ «Երեխաներն անձնական կյանքի իրավունք ունեն»: Ոչ մի բան քո

«արտակարգ իրավիճակների» մասին գրված չի: Էնպես որ, քիթը Տիգրանի անձնական կյանքի մեջ մի՛ խոթիր:

Քուչոյի բուռն պահվածքը Կոկոյին մի փոքր վախեցրեց: Ծրարը մտազբաղ տնտղելով՝ դիմեց Ծառին.

- Հիմա ի՞նչ անեմ՝ բացե՞մ, թե՞ չբացեմ:

Բայց Ծառը խորհմաստորեն լռեց: Ինչքա՞ն կարող էր բոլորի փոխարեն որոշումներ ընդունել: Կոկոն այս բանը չէր սպասում.

- Ո՞նց, խորհուրդ էլ չե՞ս տա, - զարմացավ:

- Ամեն անգամ պատասխանատվությունը վրաս եք գցում: Կարծում եք՝ հե՞շտ է, - դժգոհեց Ծառը, - մի անգամ չեղավ՝ ասեիք՝ Ծառ՝ ջան, դու հանգստացիր, մենք կորոշենք:

«Ա՛յ քեզ բա՛ն, - մտածեց Կոկոն, - աշխարհը փուլ է գալիս. Ծառն էլ չգիտի՝ ինչ ասի...»:

- Դե, ուրեմն, ես գիտեմ՝ ինչ անեմ, - այս խոսքերով Կոկոն թռավ, թառեց մի բարձր ճյուղի, որ Քուչոյի կշտամբանքը չլսի ու ծրարը բացեց:

«Անի՛ ջան, - կարդաց նա ու մտածեց. «Ըհր՛, արդեն Անիին էլ է իր անկարգությունների մեջ խառնում»»: Բայց նամակի շարունակությունը նրան շանթահար արեց, - ես քեզ սիրում եմ, - գրում էր Տիգրանը, - դու աշխարհի ամենա-ամենալավը, ամենա-ամենասիրուն աղջիկն ես...»:

Կոկոն հասկացավ, որ Քուչոն ճիշտ էր ասում. նա քիթը խոթել էր Տիգրանի անձնական գործերի մեջ: Ամոթից շառագունեց ու ծրարը ցած գցեց, իբր չի էլ տեսել:

Այդ պահին Տիգրանը, ձեռքին մի հսկայական ծաղկեփունջ, նորից հայտնվեց բակում, շփոթված աջ-ձախ նայեց, նկատեց ծրարը, մոտ վազեց ու վերցրեց: Կոկոն, իհարկե, երես չունեի Տիգրանի աչքին երևալու ու ճյուղերի արանքում տազ արած մտածում էր. «Երեխաներն անձնական կյանքի իրավունք ունեն: Ոսկի խոսքեր են: Տեսնես՝ ո՞վ է հորինել»»: Քուչոյի աչքից էլ ոչինչ չվրիպեց: Նա հասկացավ, թե Կոկոն ինչու է թաքնվել ու ինքն էլ իր հերթին մտածեց. «Մի բան անենք՝ Երեխայի իրավունքների մասին պատասխաններից մի քանի տեղ փակցնենք, որ բոլորը կարդան ու իմանան»:

Իսկ Անին...: Անին Տիգրանից ստացավ գեղեցիկ ծաղկեփունջն ու մեջը դրված ծրարը, շատ հուզվեց, ուրախացավ ու նստեց, որ մի գեղեցիկ պատասխան գրի Տիգրանին: Վերջում, իհարկե, երեք բառ գրեց միայն, բայց ինչ բառե՛ր՝ «ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ՏԻԳՐԱՆ ՋԱՆ...»:

Իրավունք ունենա



96

Ըստ **Ռուբեն Երզնկյանի** համանուն սցենարի, Հայաստան
Թեմա՝ **Երեխայի իրավունքներ**

- Որ իմանաս՝ ինչ հետաքրքիր գիրք էի կարդում, - դասամիջոցին ասաց Տիգրանը Գրիգորին, - ավստու, որ վերջացրի: Բոլոր գրքերը սրա պես հետաքրքիր լինեին՝ ամբողջ օրը միայն կկարդայի:

- Ինչի՞ մասին էր, - հետաքրքրվեց Գրիգորը:

- Վերնագիրը մոռացա, - խոստովանեց Տիգրանը, - բայց շատ հավես էր՝ արկածային՝ ասպետների ու գանձերի մասին:

- Երանի էդ ասպետներին, չէ՞, - նախանձով ասաց Գրիգորը, - լսի՛ր, արի մենք էլ ասպետ-ասպետ խաղանք:

- Ուխ, ճիշտ ես ասում, - ուրախացավ Տիգրանը, - հենց էսօր: Արի՛ իբր թե գաղտնի ընկերություն ենք:

- Էդ ո՞րն է, - չհասկացավ Գրիգորը:

- Դե, գաղտնի ընկերություն, էլի, - ոգևորված սկսեց բացատրել Տիգրանը, - նշանաբան ենք հնարում, գիշերները գաղտնի պլաններ ենք մտածում, բան...

Բայց այդ րոպեին զանգը հնչեց, ու երեխաները դասարան շտապեցին:

- Էդ ի՞նչ էիք քչիչում, - հարցրեց Անին:

- Հետո կպատմենք, - կարճ կապեց Տիգրանը, բայց աչքով արեց, ինչը նշանակում էր. հավես բան ենք մտածել, բայց հիմա պատմելու ժամանակ չկա՝ Ուսուցչուհին նայում է:

Ուսուցչուհին, իսկապես, նկատել էր, որ երեխաները զրույցով են տարված:

- Ինչի՞ մասին եք խոսում, - հարցրեց Ուսուցչուհին՝ դասարան մտնելով, - բա՞ն է պատահել:

- Չէ, - ասաց Տիգրանը, - մի գիրք էի կարդացել, դրա մասին էի պատմում:

- Ապրես, որ սիրում ես կարդալ, - ասաց Ուսուցչուհին, - ես էլ էի այսօր ուզում ձեզ հետ մի գրքի մասին խոսել:

Ապա մոտեցավ պահարանին, դարակից ինչ-որ գիրք վերցրեց ու շարունակեց.

- Ա՛յ, տեսեք՝ այս գրքում երեխաների իրավունքների մասին է գրված: Գիտեք, չէ՞, որ բոլոր մարդիկ իրավունքներ ունեն, իսկ երե-

խաները՝ հատկապես:

Գրիգորը ձեռքը բարձրացրեց:

- Ի՞նչ իրավունքներ, - հարցրեց նա:

- Տարբեր, - պատասխանեց Ուսուցչուհին ու սկսեց բացատրել, - օրինակ՝ բոլորն ունեն ապրելու իրավունք, ճամփորդելու իրավունք, սովորելու իրավունք...

- Իսկ դպրոց չգնալու իրավունք, - հույսով հարցրեց Տիգրանը, բայց մտածեց՝ չէ, հա, մեզ որտեղի՞ց էդքան բախտ: Ուսուցչուհին ձև արեց, թե չի լսում:

- Իսկ ինչու՞ ասացիք, հատկապես երեխաները, - ձեռք բարձրացնելով հետաքրքրվեց Անին:

- Որովհետև, - բացատրեց Ուսուցչուհին, - մեծերը դեռ մեկ-մեկ կարող են իրենք իրենց պաշտպանել, իսկ երեխաները փոքր են: Պետք է, չէ՞, որ նրանց մասին մարդիկ հատկապես հոգ տանեն, որ ոչ ոք չնեղացնի:

- Ըհը, - գլուխը տմբտմբացրեց Տիգրանը, - բա ես ի՞նչ եմ ասում. մեր մասին պիտի հոգ տանեն, ճաշ տան, տնայինը անեն:

- Իսկ այդ իրավունքներն ովքե՞ր են հնարել, - Տիգրանի հիմարությունները բանի տեղ չդնելով՝ հարցրեց Գրիգորը:

Ուսուցչուհին դարձավ դասարանին ու սկսեց պատմել.

- Մի մեծ կազմակերպություն կա: Կոչվում է Միացյալ ազգերի կազմակերպություն: Այնտեղ աշխարհի տարբեր երկրների մարդիկ հավաքվում ու միասին որոշում են, թե ինչ անեն, որ պատերազմ չլինի, որ մարդիկ առողջ լինեն, լավ ապրեն: Այդ տեսակ բաներ:

- Իսկ երեխաները ուրիշ ի՞նչ իրավունքներ ունեն, - նորից ձեռք բարձրացրեց Գրիգորը:

- Ամենատարբեր, - պատասխանեց Ուսուցչուհին: - Բայց ես հիմա դրա մասին ձեզ չեմ պատմի: Ավելի լավ է՝ այս գիրքը ձեզ տամ: Տեսեք՝ կոչվում է «Երեխաների իրավունքների հռչակագիր»: Տանը ուշադիր կարդացեք, հետո՝ մյուս դասին, միասին կքննարկենք: Լա՞վ:

Չանգը հնչեց, ու երեխաները, Ուսուցչուհու պատմածը քննարկելով, սկսեցին պայուսակները դասավորել, որ տուն գնան:

Մի երկու ժամից, երբ բոլորը դասերն արել ու բակ էին իջել, Տիգրանն ասաց.

- Լսե՛ք, ես առաջարկ ունեմ: Նոր խաղ եմ հնարել:

- Նոր խաօղ, - աշխուժացավ Կոկոն, - դե պատմիր:

- Ասում եմ՝ ասպետ-ասպետ խաղանք: Իբր թե՛ գաղտնի ընկերություն ենք:

- Ուխ, - ոգևորվեց Անին, - ես էլ կլինեմ գեղեցիկ տիկին, ու դուք իմ մասին երգեր կհորինեք:

- Լավ, - ձեռքը թափ տվեց Տիգրանը՝ մտքում ասելով. «Էս աղջիկների խելք ու միտքը գեղեցիկ տիկիներն են», - բայց առաջ պիտի որոշենք՝ ոնց ենք գիշերները հավաքվելու:

- Ինչի՞ համար, - զարմացավ Քուչոն. չլինի՞ էլի ուզում են գող բռնել, մտածեց նա ու համենայն դեպս գետինը հոտոտեց:

- Ո՞նց՝ ինչի համար, - հիմա էլ զարմացավ Տիգրանը, - բա հո ցերեկը չե՞նք հավաքվելու, որ մեծերը իմանան:

- Ասենք՝ իմացան, հետո՞ ինչ, - չհասկացավ Լուսինեն:

- Ո՞նց՝ հետո ինչ, - Տիգրանն արդեն սկսում էր համբերությունը կորցնել. ի՞նչ անհասկացող են, - էլ ի՞նչ գաղտնի, եթե բոլորը իմանան: Համ էլ կսկսեն տուն կանչել՝ արի ճաշ կեր, արի դասերդ արա: Մեծերին չգիտե՞ք: Իսկ գիշերը ոչ ոք չի խանգարի:

- Լավ, ասենք՝ ճիշտ ես ասում: Բա որ հավաքվենք, հետո՞ ինչ ենք անելու, - հարցրեց Գրիգորը:

- Կմտածենք, - ասաց Տիգրանը, - հիմա առանց այդ էլ լիքը գործ կա:

- Օրինակ՝ ի՞նչ, - թերահավատ հարցրեց Քուչոն:

- Ո՞նց՝ օրինակ՝ ինչ, - վրդովեց Տիգրանը, - չես հասկանու՞մ: Նշանաբան պիտի մտածենք, գաղտնի լեզու հնարենք: Հազար ու մի գաղտնի գործ կա:

Խաղն սկսվեց: Բայց Անին չնկատեց էլ, որ ընկերները հեռացան. նա բացել էր Ուսուցչուհու տված գիրքը և առաջին էջից այբան էր տարվել, որ խորասուզված՝ կարդում էր:

- Անի՛, ա՛յ Անի, - ձայն տվեց Լուսինեն, - չես գալի՞ս:

- Եկա, - ցրված պատասխանեց Անին, - հիմա, էս գլուխը վերջացնեմ...:

- Էդ ի՞նչ ես կարդում, - հետաքրքրվեց Կոկոն ու, մոտ թռչելով, կտուցը խոթեց գրքի մեջ:

- Դպրոցում են տվել, - բացատրեց Անին, - երեխաների իրավունքներն են:

- Կտա՞ս՝ կարդամ, - խնդրեց Կոկոն:

- Կտամ, բայց հետո, - խոստացավ Անին, - պիտի բոլորս կարդանք, որ դպրոցում քննարկենք:

- Դե արի ու հասցրու, - փնթփնթաց Տիգրանը, հետո գլուխը մի հանճարեղ միտք եկավ:

- Գիտե՞ս, Անի, - լուրջ տեսքով ասաց աղջկան, - արի՛ թող դա էլ քո գաղտնի հանճնարարությունը լինի. գիրքը կկարդաս ու գիշերը մեզ գաղտնի ամեն ինչ կպատմես: Իսկ մենք գնանք՝ նշանաբան մտածենք:

Երեկոյան երեխաները տները ցրվեցին, բայց նախօրոք պայմանավորվեցին, որ գիշերով հավաքվելու են: Մթնեց: Լուսինը դուրս եկավ: Չորս կողմը քար լռություն էր՝ բակում ոչ ոք չկար: Հանկարծ մուտքի դուռը ճռռաց ու մի ստվեր հայտնվեց: Ծառի տակից մի ուրիշ ստվեր մոտեցավ առաջինին:

- Կանգնի՛ր, - ասաց առաջին ստվերը, - ո՞վ ես: Ասա՛ նշանաբանը:

- Ըրր՛, - Քուչոյի ձայնով կմկմաց երկրորդ ստվերը, - նշանաբանը...

- Էէէ՛, հետո էլ կասես՝ խուզարկու շուն եմ, - վրդովվեց Տիգրանը: Առաջին ստվերը հենց Տիգրանն էր, որ կար, - իսկի մի նշանաբան մտքումդ չես պահում:

Այդ պահին, թռչելով, մի երրորդ ստվեր հայտնվեց:

- Կանգնի՛ր, - նորից հրամայեց Տիգրանը, - ասա՛ նշանաբանը:

- Սու՛ս, ի՞նչ ես գոռում, - շշուկով ասատեց Անին, որ նույնպես բակ էր իջել, - բոլորին կարթնացնես:

- Հավես է, չէ՞, - ձեռքերն իրար շփելով հարցրեց Տիգրանը:

- Ըհը, - հորանջեց Լուսինեն՝ ընկերներին մոտենալով, - մենակ՝ քունս է տանում: Ի՞նչ կլինի՝ հիմա քնենք, հետո, ցերեկը, էլի գաղտնի կհավաքվենք:

- Էդ էր պակաս, - վրդովվեց Տիգրանը, - քունդ տանում է՝ գնա տուն: Իսկական ասպետները դժվարություններից չեն վախենում: Պիտի մեր կամքը կոփենք:

- Չեկուցում եմ, - հանդիսավոր շշնջաց Անին, - գաղտնի հանճնարարությունը կատարված է:

- Ապրե՛ս, - գովեց Տիգրանը, - գեկուցի՛ր: Ի՞նչ իմացար:

- Իմացա, որ իրավունք ունենք ցերեկները հավաքվել, - դարձյալ շշուկով պատասխանեց Անին:

- Չէ, հա՛, - կասկածեց Տիգրանը, - լուրջ ե՞ս ասում:

- Ըհը, - գլխով արեց Անին, - ասում է՝ մենք իրավունք ունենք հավաքվել երբ ուզում ենք, ուր ուզում ենք, ու ոչ ոք իրավունք չունի խանգարել:

- Տեսե՛ք, - շարունակեց նա, - համ էլ՝ իրավունք ունենք մեր գաղտնիքները մեզ պահել: Որ հարցնեն՝ չուզենք՝ չենք պատասխանի:

- Չէ, լո՞րջ, - զարմացավ Գրիգորը:

- Հա, - վստահեցրեց Անին, - տե՛ս՝ ինչքան շատ իրավունքներ ունենք: Ճիշտ կանենք՝ բոլորս դրանք սովորենք:

- Ապրե՛ս, - երկրորդ անգամ գովեց Տիգրանը, - հանձնարարությունդ պատվով ես կատարել:

- Դե, որ ցերեկն էլ կարող ենք հավաքվել, առաջարկում եմ, որ գնանք, քնենք:

- Չէ, եկեք որոշենք, թե մեր ընկերությունը ինչ է անելու, - առարկեց Տիգրանը, որը ոչ մի կերպ չէր ուզում քնելու գնալ: Երբ խոսքն արկածների մասին էր, նրա քունը ո՞նց տաներ:

Բայց Անին այդ հարցի պատասխանն էլ ուներ:

- Ասե՞մ՝ ինչ, - շշուշաց նա, - բոլորին կպատմենք երեխաների իրավունքների մասին, որ իմանան: Դա էլ կլինի մեր ընկերության գաղտնի գործունեությունը: Հը՞:

- Ըհը, - ուրախացավ Լուսինեն, - թող բոլորը իմանան՝ ինչ իրավունքներ ունեն:

- Ճիշտ է, - հավանություն տվեց Գրիգորը, - որ ուրիշ երեխաներին օգնենք: Իսկական ասպետները իրավունքի պաշտպաններ են:

Հիշեցի՛, - հանկարծ բացականչեց Տիգրանը, - գրքի անունը հիշեցի՛ «Չորրոն՝ իրավունքների պաշտպանը»:

Ուրվական Ենթ ՎհնՏրում



102

Ըստ **Իռադա Սայյախի** համանուն սցենարի, Ադրբեջան
Թեմա՝ **Սեռային (գեղեցիկ) խնդիրներ**

1.

Գ

իշերվա կեսին հայրիկը, չգիտես ինչու, արթնացավ ու գգաց, որ քունն էլ չի տանում: Մի քիչ անկողնում աչքերը փակ պառկեց՝ հույս ունենալով, որ կքնի, բայց բան դուրս չեկավ: Փոխարենը սովածացավ: Ի՞նչ աներ: Ջգույշ, որ մայրիկին չարթնացնի, անկողնուց վեր կացավ, վերմակը վրան գցեց, որ չմրսի ու գնաց խոհանոցի կողմը: Նրա մտքով էլ չէր անցնում, որ սպիտակ վերմակով փաթաթված՝ շատ նման էր ուրվականի:

Խոհանոցի սեղանին՝ սկուտեղի վրա մայրիկի թխած համեղ կարկանդակներն էին: Այնքան ախորժելի տեսք ունեին, ոնց որ ասեին՝ կերեք մեզ: Հայրիկը թեյ լցրեց, մի-երկու կարկանդակ դրեց ափսեի մեջ ու տեղավորվեց պատուհանի մոտ: Պարզկա գիշեր էր, երկնքում հազարավոր աստղեր էին շողշողում, ու հայրիկը հիշեց երիտասարդ տարիները, երբ մի անգամ սարերն արշավի էր գնացել: Մեկ էլ այդ ժամանակ էր էսպիսի աստղազարդ երկինք տեսել: Այսպես, գիշերվա երկնքով հիանալով, հին օրերը հիշելով, թեյ էր խմում ու կարկանդակ ուտում և մտածում. «Երանի Կոկոյի պես թռչուն լինեի ու բաց երկնքի տակ գիշերեի»: Միտքը հայրիկին զվարճալի թվաց ու նա ծիծաղեց:

Դու մի ասա՝ այս նույն ժամանակ Կոկոն էլ էր արթնացել: Չգիտես՝ ինչու, նրան թվացել էր, թե մեկն իրեն է նայում: «Երևի երազ եմ տեսել», - սկզբում անցավ Կոկոյի մտքով, բայց որ գլուխը բնից դուրս հանեց, դիմացի պատուհանին մի տարօրինակ կերպարանք տեսավ. ոնց որ՝ ուրվական էր: Ուրվականը ուղիղ իրեն էր նայում, թեյ խմում ու... հա՛, էլի՝ կարկանդակ ուտում:

«Չէ՛, հաստատ երազ է, - մտածեց Կոկոն, - շատ տարօրինակ երազ է»: Ու շրջվեց մյուս կողքի, որ քնի, մեկ էլ գիշերվա լռության մեջ ուրվականի սարսռեցնող ծիծաղը լսեց:

Չէ՛, երազի ուրվականը այդպես չէր ծիծաղի: Կոկոն մի անգամ էլ բնից դուրս նայեց, համոզվեց, որ ոչ մի երազ էլ չէր. ուրվականն իսկապես լուսամուտի առաջ նստած՝ ախորժակով ինչ-որ բան էր ծամում: Փետուրները բիզ-բիզ կանգնեցին, ու սարսափից ծղրտաց:

2.

- Չարդերս վկա, - հաջորդ օրը Կոկոն գիշերվա տեսածը պատմում էր շուրջը հավաքված երեխաներին, - իսկական ուրվական էր՝ սպիտակ ու վախենալու: Բակով մեկ, թևերը փռած, թռչում էր, հռհռում ու ինչ-որ բան ծամում:

Տիգրանը քթի տակ ծիծաղեց: Նա Կոկոյի փչոցներին չէր հավատում: Բայց Անին ու Լուսինեն, բերանները բաց, լսում էին ու ամեն խոսքը հալած յուրի տեղ դնում: Ու երևում էր, որ նրանք մի քիչ վախեցած են: Իսկ Կոկոն շարունակում էր.

- Մի վայնասուն էր դրել, ո՞նց էր տնքում:

Տիգրանի գլուխը մի միտք եկավ: Ո՞վ չգիտի, որ աղջիկները վախկոտ են ու խելք չունեն: Դրա համար էլ որոշեց նրանց մի լավ դաս տալ, որ ուրիշ անգամ ականջները կախած՝ ամեն հիմարության չհավատան: Գնաց տուն, պահարանից մի սավան վերցրեց, փաթաթվեց մեջը ու մի քանի բուսից նորից բակում էր: Այ քեզ բա՛ն, էդ աղջիկները մինչև հիմա, բերանները բաց, Կոկոյին էին լսում: «Լավ է՝ ձեռքներին թուղթ ու գրիչ չկա,- մտածեց Տիգրանը,- թե չէ՝ երևի գրի կառնեին, որ չմոռանան»:

Իսկ Կոկոն փչում էր ու փչում.

- ...Հետո սկսեց բնիս վերևը պտտվել: Վայ թե՛ իմ դեմ դավեր էր նյութում:

Այստեղ նա պապանձվեց, որովհետև աչքն ընկավ սավանի մեջ փաթաթված Տիգրանին:

- Վա՛յ, մամա ջան, - խռպոտ ձայնով հագիվ կարողացավ կռկռալ Կոկոն, - օգնե՛ք...

Աղջիկները Տիգրանին մեջքով էին կանգնած, դրա համար էլ գլխի չընկան՝ ինչ է կատարվում: Նրանք կարծեցին, թե Կոկոն իր պատմությունն է շարունակում: Տիգրանը ստիպված էր մի կերպ նրանց ուշադրությունն իր վրա հրավիրել: Հո ժամերով չէ՞ր կանգնելու, սպասեր, թե երբ կշրջվեն:

- Հո՛ - հո՛ - հո՛, - իր կարծիքով ուրվականի նման տնքաց նա: Աղջիկները միաժամանակ թափով շրջվեցին ու սարսափից քարացան:

- Մամա ջան, ուրվակա՛ն, - բղավեցին նրանք: Իսկ Տիգրանն արդեն դերի մեջ էր մտել:

- Ու՞ր է կարկանդակս, ու՞ր, ինձ տու՞ր, - չարագույժ ձայնով կանչեց

նա ու նորից տնքաց, - հո՛ - հո՛ - հո՛...

Ո՞վ իմանա՝ ի՞նչ կկատարվեր, եթե հենց այդ պահին բակում չհայտնվեր Գրիգորը: Նա խելքը գլխին տղա էր. մոտեցավ Տիգրանին ու սավանը վրայից քաշեց:

3.

Բայց ուրվականների պատմությունն այսքանով չվերջացավ: Նույն օրը Գրիգորը լսեց, թե ինչպես է դիմացի տան հարևանուհին մայրիկին պատմում, որ գիշերն իրենց շենքի պատուհաններից մեկում ուրվական է տեսել:

- Ես մի բան եմ մտածել, - ասաց Գրիգորը՝ չգիտես ինչու աղջիկներից հայացքը փախցնելով, - էդ ուրվականին պիտի հետևենք ու բռնենք: Տեսնենք՝ որտեղից է հայտնվել, մտքին ինչ կա: Թե չէ՝ ինչու՞ պիտի մեկ էլ հանկարծ որոշեր մեր բակ գալ:

- Ճի՛շտ ես ասում, - ասաց Տիգրանն ու տղամարդավարի սեղմեց Գրիգորի ձեռքը:

- Իսկ ո՞նց ենք հետևելու, - հարցրեց Անին:

Տիգրանն ու Գրիգորը նորից իրար նայեցին: «Ինչո՞ւ եմ կարծում, թե իրենց էլ ենք խաղացնելու», - մտածեցին նրանք: Բոլորն էլ գիտեն, որ լուրջ գործերում աղջիկները միշտ էլ խանգարում են՝ ոտի տակ են րնկնում:

- Աղջիկները գործ չունեն: Ուրվական փնտրելը ձեր խելքի բանը չէ:

- Ինչու՞, որ:

- Հենց էդպես: Գործեր կան, որ աղջիկների խելքի բանը չեն:

- Հիմար-հիմար դուրս մի՛ տվեք, - վիրավորվեց Կոկոն, որովհետև ինքն էլ էր իրեն աղջիկ համարում:

- Մենք դուրս չենք տալիս, - լուրջ առարկեց Տիգրանը, - ո՞վ չգիտի, որ տղաները քաջ են ու անվախ, իսկ աղջիկները լացկան են ու վախկոտ:

- Հե՛նց հիմար-հիմար էլ դուրս ես տալիս, - հիմա էլ բարկացավ Լուսինեն:

- Լավ, խելոք եք, խելոք, - որոշեց կարճ կապել Գրիգորը, - բայց, ավելի լավ է՝ երեքս գնանք. ես, Տիգրանը, Քուչոն:

- Գնում եք՝ գնացեք, - ինչ-որ կասկածելիորեն հեշտ ու հանգիստ համաձայնեց Անին, - մենք էլ կմնանք: Հետո կտեսնենք՝ վախկոտը ով է:

Հետո Կոկոյին ու Լուսինեին գլխին հավաքեց ու երեքով սկսեցին քշփչալ:

4.

- Տղաներ, եկեք ուրվականին ձեղնահարկում որոնենք:

Տիգրանը, Գրիգորն ու Քուչոն ոտների թաթերի վրա, որ ուրվականը չլսի, գնացին ձեղնահարկ: Կոկոն թաքուն գնաց նրանց հետևից:

- Ոնց որ էն կտրած բազմոցի հետևն է, - շշուշաց Քուչոն, - հըլը լսե՞ք. շնչում է:

Գրիգորի մարմնով սարսուռ անցավ: Նա մտածեց, որ Քուչոն ճիշտ է ասում. ինքն էլ, որ ուրվական լինե՞ր՝ ձեղնահարկում կթաքնվեր: Հանգիստ տեղ է, ոչ ոք չի գալիս, համ էլ միշտ մութ է: «Տեսնես՝ էդ Անին ու Լուսինեն ո՞ր են կորել», - մտածեց նա: Ամբողջ շենքը տակնուվրա էին արել, որ իրենց հետ ձեղնահարկ տանեն ուրվական փնտրելու: Բայց աղջիկները ոնց որ գետնի տակն անցած լինեին:

Հանկարծ ոտքի տակ հատակը ճռռաց, ու քիչ էր մնում՝ Տիգրանի լեղին ճաքեր: Մեկ էլ աչքն ընկավ անկյունում դրված հին սնդուկին: Նրան թվաց, թե սնդուկի կափարիչը կամաց բացվում է: Հա, էլի, կափարիչը բացվեց ու միջից մեկի փոխարեն երեք ուրվական դուրս թռան. մեկը՝ մեծ, մյուսը՝ միջնեկ, իսկ երրորդը՝ փոքր: Մեծ ուրվականի ձեռքում կարկանդակ կար: Տիգրանը վախից պապանձվեց, հետո փորձեց փախչել, բայց ոտքերը ոնց որ խաշած մակարոններ լինեին ու իրեն չէին ենթարկվում: Ուզեց բղավել, մեկ էլ տեսավ Կոկոյին, որն իրեն էր նայում ու խորամանկ ժպտում:

- Ու՛ր է կարկանդակս, ու՛ր, ինձ տու՛ր, - բղավեց մեծ ուրվականն Անիի հայրիկի ձայնով, ու Տիգրանն ամեն ինչ հասկացավ:

Պարզվում է՝ Անին ու Լուսինեն, Անիի հայրիկի հետ միասին, որոշել էին տղաներին մի լավ դաս տալ:

Հետո՝ երեկոյան, բակում հավաքված, երեխաները հիշում էին ուրվականի պատմությունն ու ծիծաղում:

- Էդ ո՞վ էր ասում՝ աղջիկները վախկոտ են, տղաները՝ քաջ, - երեխաների հետ մի կուշտ ծիծաղելուց հետո հարցրեց հայրիկը:

- Ի՞նչ նշանակություն ունի՝ տղա՞ ես, թե՞ աղջիկ, - խոստովանեց Տիգրանը, - կարևորը, որ լավ ընկերներ ենք: Սրանից հետո ավելի լավը կլինենք, - խոստացավ նա:

Տոնը



107

Ըստ **Վարդան Վարդանյանի** համանուն սցենարի, Հայաստան
Թեմա՝ **Սեռային (գեներային) խնդիրներ**

Եթե չգիտեք՝ իմացե՛ք. հունիսի մեկը տոն է: Ամբողջ աշխարհում նշում են երեխաների պաշտպանության օրը:

«Տեսնես՝ էդ ումի՞ց են մեզ պաշտպանում», - դպրոցից տուն քայլելով ինքն իրեն մտորում էր Տիգրանը: Ինքն էլ քաջ տղա էր ու ում ասես՝ կպաշտպաներ: «Կարող է՞, մեծերից են պաշտպանում», - հանկարծ փայլատակեց գլխում, - «Հա, բա ի՞նչ: Թե չէ՝ է՛ս մի արա, է՛ն մի արա, հերի՛ք հեռուստացույց նայես, դասերդ ո՞վ պիտի անի: Առավոտից իրիկուն, բանուգործը թողած դաստիարակում են, հա դաստիարակում: Չզվեցրի՛ն», - ու Տիգրանը զայրացած՝ ոտքով, ինչքան ուժ ուներ, փողոցում ընկած դատարկ տուփին՝ տու՛ր, թե կտաս:

«Հաստա՛տ, հունիսի մեկը երեխաների՛ ծնողներից պաշտպանության օրն է: Էհ, ինչ էլ լինի, տոնը տոն է մնում ու պետք է նշել»: Այս վերջին մտքով Տիգրանը տուն հասավ ու դուռը բացեց:

- Էդ ի՞նչ ես անում, - քիչ հետո բակում նրան մոտենալով՝ հարցրեց Անին: Տիգրանը բակի նստարանն էր ներկում: Որոշել էր, որ տոնը նշելու ամենալավ ձևը բակը կարգի բերելն է: Անիի հարցը նրան անհեթեթ թվաց. չի՞ տեսնում, ի՞նչ է հիմար հարցեր տալիս: «Որ ասեմ՝ դաշնամուր եմ նվագում, կհավատա՞», - մտածեց նա:

- Նստարանն եմ ներկում, - փնչացրեց, - իսկ դու ի՞նչ կարծեցիր:

- Ինչու՞ ես ներկում, - հաջորդ հիմար հարցը տվեց Անին (համենայն դեպս՝ Տիգրանին այդպես թվաց):

- Որ սիրուն լինի, - համբերությունը սկսում էր կորցնել Տիգրանը: Ճիշտ են ասում, էլի՛ մազը՝ երկար, խելքը՝ կարճ:

Իսկ Անին նախանձով նրան էր նայում: Ինքն էլ էր ուզում ներկել: Անցած տարի, երբ ամառանոցը նորոգում էին, ինքը հայրիկին օգնել էր ու ցանկապատը ներկել: Շատ էլ լավ էր ստացվել:

- Կտա՞ս՝ մի քիչ ներկեմ, - հարցրեց Անին ու թախանձագին նայեց Տիգրանին:

Նրա հայացքից Տիգրանի սիրտը հավեց. քիչ էր մնում՝ ասեր. «Հա, ինչու՞ չէ: Ա՛ռ վրձինը», բայց ժամանակին ուշքի եկավ, խելքը գլուխը հավաքեց ու խիստ ճայնով պատասխանեց.

- Չէ, աղջիկների խելքի բանը չի:

Ու գայրացած նստեց հենց նոր ներկած նստարանին: Անին նորից փռթկաց.

- Որոշել ես շավարդ ներկե՞լ, - ուրախ հարցրեց նա:

Տիգրանը տեղից վեր թռավ ու հիմա էլ ներկի տուփը շուռ տվեց գետնին: «Ի՛նչ խայտառակություն, - կայծակի պես անցավ նրա մտքով: - Գոնե Անին չտեսներ»: Նրա՝ տղամարդու ինքնասիրությունը շատ էր խոցվել: Չգիտեր՝ ոնց նայի Անիի աչքերին. հիմա ի՞նչ կմտածի իր մասին: Բայց աչքի պոչով տեսավ, որ Անին բոլորովին էլ արհամարհանքով կամ հեզանքով չի նայում իրեն.

- Դե լավ, մեծ բան չի, - ընկերոջը մխիթարեց նա, - ես էլ երեկ մածուները շուռ տվեցի վրաս: Համ էլ, մեր տանը պիտի որ մի տուփ ներկ մնացած լինի: Արի՛՛ բերենք, որ ներկես, վերջացնես:

Երեխաները միասին գնացին Անիենց տնից ներկը բերելու:

- Կգա՞ս՝ միասին ներկենք, - առաջարկեց Տիգրանը: Ու միասին գործի անցան:

Պարզվում է՝ Անին իսկական վարպետի պես էր ներկում՝ հարթ, հավասար:

- Ինչ էլ լավ ես ներկում, - մի քիչ նախանձով ասաց Տիգրանը, - ինձ կսովորեցնե՞ս:

- Նայիր, - ասաց Անին, - վրձիներ խորը մի թաթախիր, որ ներկը չհոսի: Տե՞ս, - ու Տիգրանին ցույց տվեց, - հայրիկս է սովորեցրել:

- Վարպետ ես, - խոստովանեց Տիգրանը:

Անին, իհարկե, կարող էր հիշեցնել՝ բա ասում էիր՝ աղջկա գործ չի՛...: Բայց լռեց: Իրեն թվաց, որ Տիգրանն առանց ասելու էլ ամեն ինչ շատ լավ հասկացել էր:

Ինձ թվում է՝ դուք էլ հասկացաք. բոլոր-բոլորը, տղա լինեն, թե աղջիկ, հավասար իրավունքներ ունեն ու կարող են անել՝ ինչ ուզեն: Կուզեն՝ ֆուտբոլ կխաղան, կուզեն՝ նստարան կներկեն, կուզեն՝ ասեղնագործ կանեն կամ ճաշ կեփեն: Կարևորը ոչ թե աղջիկ կամ տղա լինելն է, այլ գործը լավ անել կարողանալը: Էլ չեմ ասում, որ գործը միասին ավելի արագ է արվում, ու խաղալու համար էլ ավելի շատ ժամանակ է մնում:

Լուսինեի Երագը



110

Ըստ **Իռադա Սայյալի** համանուն սցենարի, Ադրբեջան
Թեմա՝ **Սեռային (գեղեցրային) խնդիրներ**

-...հ^օ

նչ ես անում,- քնից արթնանալով դժգոհեց Լուսինեն: - Ինչու՞ էիր ձեռքս քաշում:

- Երազ ե՞ս տեսել: Ի՞նչ ձեռք, ի՞նչ բան: Զեզ համար քնած չէի՞ր,- պատասխանեց Տիգրանը:

- Ըհը, քնած էի,- համաձայնեց աղջիկը , - երազում ձեռքս քաշում էիր ու գոռում. «Գնա՛ տուն, գնա՛ տուն...»: Չէիր թողնում՝ խաղամ:

- Տի՛գրա՛ն, դպրոցից կուշանաս, - միջանցքից լսվեց մայրիկի ձայնը:

Գ-ասի վերջում Ուսուցչուհին ցուցափայտը սեղանին թխկթխկացրեց, որ երեխաների ուշադրությունը հրավիրի:

- Լսեք, ձեզ մի լավ բան եմ ասելու: Հիշո՞ւմ եք, որ որոշեցինք պատի թերթ պատրաստել:

- Ըհը... Ո՞նց չէ... Հիշում ենք, - պատասխանեցին երեխաները:

- Ուրեմն՝ հենց վաղն էլ կսկսենք, - հանդիսավոր ձայնով հայտարարեց Ուսուցչուհին: - Վաղն էքսկուրսիա ենք գնալու քաղաքից դուրս, մոտիկ գյուղերից մեկը: Երեխաների հետ կծանոթանաք:

- Ուխ, հետները ֆուտբոլ կխաղանք, - ոգևորվեց Տիգրանը:

- Ֆուտբոլ էլ կխաղաք, - հանգստացրեց Ուսուցչուհին ու շարունակեց, - բայց նախ կգրուցեք, կհարցնեք՝ ինչ են սիրում, ինչ չեն սիրում, ինչ կուզեին անել...

- Ասե՞մ: Ֆուտբոլ խաղալ, - էլի տեղից չհամբերեց Տիգրանը:

- ... Ինչ գրքեր են կարդում, դասերից հետո ինչով են զբաղվում...

- Իսկ ինչի՞ համար ենք հարցուփորձ անելու, - ձեռք բարձրացրեց Գրիգորը:

Ուսուցչուհին բացատրեց.

- Որ հետո, իսկական լրագրողների պես, հավաքած տեղեկություններով մեր թերթի համար հոդվածներ գրեք:

- Ուխ, ինչ հավես կլինի, - միաբերան բացականչեցին բոլորը: Իսկ Ուսուցչուհին շարունակեց բացատրել.

- Աշխատեք շատ բան իմանալ, որ հոդվածները հետաքրքիր ստացվեն, որովհետև ամենալավ հոդվածի համար մրցանակ եք ստանալու:

Մյուս օրը Տիգրանը սովորականից շուտ արթնացավ ու դեռ չնախաճաշած՝ սկսեց պայուսակը դասավորել: Մայրիկը, որ եկել էր սովորականի նման տղային մի կերպ անկողնուց հանելու, շատ զարմացավ:

- Վահ, չլինի՞ քան է պատահել, - հարցրեց նա:

- Էքսկուրսիա ենք գնում, - ոգևորված պատասխանեց տղան, - պիտի նոր երեխեքի հետ ծանոթանանք, հարցուփորձ անենք, որ հետո հողված գրենք:

- Մամ ջան, կթողնե՞ս՝ ես էլ գնամ, - խնդրեց Լուսինեն, - ես էլ եմ որոշել, թե ինչ եմ հարցնելու:

- Այ քեզ բա՛ն, - քրոջն ընդհատեց Տիգրանը, - մենակ դու էիր պակաս: Աղջիկն ու՛ր, ֆուտբոլն ու՛ր:

- Յա՛, - վրդովվեց Լուսինեն, - ասա՛, մամ:

- Մա՛ն, լավ, էլի, - շարունակեց Տիգրանը, - ես դրա հավեսը չունեմ: Համ էլ, գիտեմ, չի դիմանա, պիտի նվնվա, թե՛ ինձ տուն տարեք: Աղջիկները նվնվան են, դրանցից ի՞նչ լրագրող:

- Տղա ջան, - առարկեց մայրիկը, - ինչե՞ր ես խոսում: Գործը գործ է՝ մեկը լավ է անում, մյուսը՝ ոչ: Էնքան հայտնի լրագրող աղջիկներ կան... Մեկն էլ կասի՝ ճաշ եփելը աղջկա գործ է, բայց հո՛ գիտես՝ քեռիդ ինչ լավ խոհարար է:

- Որովհետև տղաները միշտ էլ ամեն ինչ աղջիկներից լավ են անում, - իրեն չկորցրեց Տիգրանը:

- Դե լավ, հետո կխոսենք: Բայց, Լուսիկ ջան, - ասաց մայրիկը՝ աղջկան դիմելով, - արի՛ թող ես անգամ Տիգրանը մենակ գնա: Ախր, փոքր ես, ես քեզ մենակ ո՞նց թողնեմ: Տեսար, չե՞, Տիգրանը քեզ տիրություն անողը չի: Հազիվ հանձնարարությունից գլուխ հանի:

- Մի վախեցեք, ես հանձնարարությունից շատ էլ լավ գլուխ կհանեմ, - պատասխանեց Տիգրանը, - ա՛յ կտեսնեք:

Այս խոսքերով պայուսակն ուսը գցեց ու վազեց դուրս:

Շուտով բոլորը լցվեցին դպրոցական ավտոբուսն ու շարժվեցին: Լուսինեն բակում բոլորովին մենակ էր մնացել: Տխուր-տրտում նստել էր Ծառի տակ ու մտածում էր՝ երանի Տիգրանի փոխարեն քույրիկ ունենար:

- Հո քան չի՞ պատահել, - մոտ թռչելով, հարցրեց Կոկոն, - աչքիս՝

շատ տխուր ես:

- Ըհր, - գանգատվեց Լուսինեն, - Տիգրանենք էրսկուսիա գնացին, ինձ չտարան: Ասաց՝ պիտի երեխեքի հետ գրուցեն, որ թերթի համար հոդված գրեն, իսկ ես աղջիկ եմ, ու աղջիկները լրագրող չեն լինում:

- Ո՞նց թե՛ աղջիկները լրագրող չեն լինում: Ո՞վ է էդ հիմար բաները գլուխը լցրել:

- Չգիտեմ, - հոգոց հանեց Լուսինեն, - Տիգրանի կարծիքով՝ աղջիկները պիտի աղջիկների գործ անեն, տղաները՝ տղաների: Ասում է՝ բաներ կան, որ աղջիկներին չեն սագում:

- Շատ էլ ճիշտ է ասում, - գլուխը տմբտմբացրեց Կոկոն, - համաձայն եմ: Օրինակ՝ աղջիկներին չի սագում, որ հուսահատվեն ու քիթները կախեն:

- Հա՞, - ուրախացավ Լուսինեն, - բա ի՞նչ անեմ, ես էլ գրե՞մ: Ճիշտ ես ասում, Տիգրանից էլ հազար անգամ լավ հոդված կգրեմ, թող տրաքի, - բայց հանկարծ նորից գլուխը կախեց: - Բա հարցազրույց ու՞մ հետ անեմ՝ բոլորը գնացել են:

- Այ քեզ բան, - նեղացավ Կոկոն, - ես ու Քուչոն մարդահաշիվ չե՞մք:

- Ճիշտ ես ասում, - ուրախ-ուրախ ծափ տվեց Լուսինեն, - հենց էդպես էլ կանենք: Ուռռասա՛:

Հաջորդ օրը դպրոցում Ուսուցչուհին դասն սկսեց երեկվա էրսկուսիայի տպավորություններից:

- Ի՞նչ կասեք՝ կարողացա՞ք հանձնարարությունը կատարել:

- Այո՛, - միաձայն պատասխանեցին երեխաները:

- Տիգրան, ի՞նչ ես կարծում, - հարցրեց Ուսուցչուհին, - Օրինակ՝ Լուսինե՞ն է լավ գրում, թե՞ դու: Թե՞ աղջիկներին չի կարելի իրենց սիրած գործն անել:

Տիգրանն ուները թոթվեց.

- Եսի՞մ, - հետո գլուխը կախեց ու խոստովանեց, - Լուսինեին չթողեցի, որ գա: Հավեսը չունեի:

- Ու դրա համար քրոջդ վիրավորեցիր, - եզրակացրեց Ուսուցչուհին:

- Ո՞նց, - զարմացավ Անին, - այսինքն՝ քեզ կարելի է ուզածդ անել, որովհետև տղա ես, իսկ Լուսինեին չի կարելի, որովհետև աղջի՞կ է:

- Եսի՞մ, - նորից ասաց Տիգրանը, բայց բազուկի պես կարմրեց ու

ամոթից գլուխն ավելի կախեց:

- Դե, հիմա լավ լսեք, - ասաց Ուսուցչուհին, - ու աշխատեք չմոռանալ: Մարդ եթե մի բան շատ է ուզում, անպայման լավ կանի: Իսկ տղա ես, թե աղջիկ՝ ոչ մի կապ չունի: Հասկացա՞ք:

Այս խոսքերով մոտեցավ սեղանին ու ինչ-որ տեսք վերցրեց:

- Սա էլ է հողված՝ աղջիկների, տղաների, ընկերության ու աշխատասիրության մասին: Շատ լավ հողված է: Գիտե՞ք, ով է գրել. մեր Լուսինեն: Դուք չուզեցիք իրեն էլ ձեզ հետ տանել, բայց նա քիթը չկախեց: Մտքին դրեց ու, տեսե՞ք, ինչ արեց: Դրա համար էլ որոշել եմ, որ Լուսինեի հողվածն էլ ենք պատի թերթում գրելու: Հետո միասին բոլորը կկարդանք ու կորոշենք՝ ով է հաղթել:

Տիգրանը դպրոցից դեպի տուն էր քայլում ու մտածում. «Բա որ մեկը ինձ էքսկուրսիա չտաներ, ասեր՝ տղաներին չենք տանում... Չէ՛, լավ չստացվեց»:

Ու քայլերն արագացրեց, որ շուտ տուն հասնի: Հենց տուն մտավ, վազեց քրոջ մոտ:

- Լուսիկ ջան, ճիշտ եմ ասում, էլ չեմ անի: Լա՞վ, - ասաց նա ու քրոջը համբուրեց:

- Ոչինչ, - պատասխանեց Լուսինեն, - գիտե՞ս՝ Կոկոյից ինչ եմ սովորել: Ասում է՝ «Չկա չարիք առանց բարիք»: Այսինքն՝ ամեն վատ բանից էլ մի լավ բան դուրս կգա:

ՈՐ ԼՈՒԿԱ ԼԻՆԻ...



115

Ըստ **Իրակլի Լոնոուրիի** համանուն սցենարի, Վրասան

Թեմա՝ **Մասնակցություն, ակտիվ
ֆաղափացիական դիրքորոշում**

Մ

ուք գիշեր էր: Լուսնի հետքն անգամ չկար, ու շատ վատ էր, որ չկար. Քուչոն լուսնկա գիշերներն ավելի էր սիրում: Առանց լուսնի մի տեսակ շատ մութ էր ու վախենալու: Ճիշտ է, Քուչոն ընկերներին չէր խոստովանում, բայց շատ էր վախենում մթից: Իսկ բակը հսկելն իր պարտականությունն էր: Ի՞նչ աներ: Հենց այդպես վախենալով էլ պահակություն էր անում:

Իհարկե, մի ժամանակ բակը գիշերով բոլորովին էլ վախենալու չէր, որովհետև բակի լապտերը միշտ վատ էր լինում ու շատ էլ լավ փոխարինում էր լուսնին: Ինքն իրեն քաջալերելով ու հույս տալով, Քուչոն զինվեց համբերությամբ ու սկսեց սպասել լույսը բացվելուն, որ երեխաներին խնդրի՝ լույսը սարքեն:

Առավոտյան, հենց որ երեխաները բակ եկան, Քուչոն մոտեցավ նրանց.

- Ախր, մթության մեջ գիշերները ո՞նց աշխատեմ, - գանգատվեց նա, - էնքան մութ է, ոչինչ չի երևում:

- Դե լավ, պատճառներ մի մոզոնիր, ասա՝ վախենում եմ, - քնծիծաղ տվեց Տիգրանը:

Քուչոն վրդովվեց: Տիգրանի խոսքերը միչև հոգու խորքը խոցեցին Քուչոյին: Նա հայտարարեց, որ այսուհետև հրաժարվում է գիշերները բակը հսկել:

- Քուչոն ճիշտ է ասում, - շանն օգնության հասավ Անին, - մթության մեջ ո՞նց պահակություն անի:

- Ուրեմն վատ քաղաքացի ես՝ պարտականություններիդ չես կատարում, - երեսով տվեց Տիգրանը:

- Բողբովին, - արժանապատվությամբ լի ձայնով առարկեց Քուչոն, - եթե մեկը պարտականությունն ունի, ասա իրավունքներ էլ ունի: Դուք իմ իրավունքը հարգեք, որ ես էլ պարտականությունս կատարեմ:

Քուչոյի բողբոյից ձանձրացած՝ Տիգրանն ուտերը թոթվեց, իբր՝ հավետդ չունեն, հեծանիվ նստեց ու սկսեց Քուչոյի շուրջը պտույտներ

գործել:

- Աչքս լույս, հիմա Քուչոն պիտի ասի, թե ես ինչ անեմ, ինչ չանեմ:

- Քո աչքը լույս, իմը՝ մութ, հա՞: Հետո էլ կասես՝ ընկեր ես, - ամոթանք տվեց Քուչոն ու գլխահակ հեռացավ:

- Չես ամաչու՞մ, - եղբորը նախատեց Լուսինեն, - եղած-չեղածը մի լամպ է: Ի՞նչ մեծ բան է լամպ փոխելը:

Ճիշտն ասած, աղջիկը շատ էր ամաչում եղբոր պահվածքի համար ու հույս ուներ, որ հիմա կասի՝ դե լավ, տվեք՝ լամպը փոխեմ: Բայց Տիգրանը միտք էլ չուներ օգնելու:

- Քեզ է պետք՝ ինքդ էլ փոխիր, - ասաց նա ու շարունակեց հեծանվով պտույտներ անել:

Վեճին միացավ Գրիգորն ու հայտարարեց, որ բակի հոգսերը միայն Քուչոյինը չեն, այլ բոլորինը:

- Եթե մենք մեր բակի մասին չմտածենք, ո՞վ պիտի մտածի, - ասաց նա: Գրիգորը միշտ էլ աչքի էր ընկել իր պատասխանատվությամբ: Բայց Տիգրանին Գրիգորի խոսքերն էլ չհամոզեցին. նա նորից ուները թոթվեց ու սլացավ հարևան բակ:

- Չեմ հասկանում՝ սա ի՞նչ է, - հաջորդ օրը, թղթի կտորը ձեռքում պտտելով հարցրեց Անիի հայրիկը:

- Սա, - բացատրեց Լուսինեն, - մեր բակն է՝ գիշերով: Այդպես էլ կոչվում է՝ «Մեր բակն իմ պատուհանից. գիշերային տեսարան»:

- Բայց ոչ մի բան չի երևում: Ոնց որ ուղղակի սև ներկած թուղթ լինի, - տարակուսեց հայրիկը:

- Մենք էլ հենց դա ենք ասում, - հաստատեց Գրիգորը, - գիշերները մեր բակն այնքան մութ է, որ ոչինչ չի երևում:

Գրիգորին միացավ Կոկոն ու հեզմանքով ասաց.

- Որ լավ նայեք, երևի բակի անկյունում փչացած լապտերը կտեսնեք:

Հայրիկն, իհարկե, իսկույն հասկացավ, թե Կոկոն ու երեխաներն ինչ էին ուզում ակնարկել, բայց ձևացրեց, թե չի հասկանում:

- Իսկ ինչու՞ եք այսքան նկարներ բերել: Չլինի՞ որոշել եք ցուցահանդես բացել:

- Ըհր, - պատասխանեց Գրիգորը, - ցուցահանդես-վաճառք: Որ հավաքած փողով վարպետ կանչենք՝ լապտերը սարքի:

- Ապրեք, լավ եք մտածել: Դե, լավ, ես գնամ իմ գործերով: Հետո կպատմեք՝ ինչ արեցիք:

- Գոնե մի նկար գնեիք, - հույսով խնդրեց Լուսինեն:

- Անպայման, բայց ուրիշ անգամ, - խոստացավ հայրիկը, - հիմա ժամանակ չունեմ: Որ ճիշտ ասեմ՝ փող էլ չունեմ:

- Տեսա՞ր, որ ասում էի՞, - հուսահատվեց Լուսինեն, - հայրիկիդ մեր նկարները դուր չեկան: Իսկ որ Տիգրանի նկարներից լիներ՝ անպայման կառներ. Տիգրանը իսկական նկարչի պես է նկարում:

Այս խոսքի վրա Տիգրանը հայտնվեց բակի ծայրում: Տեսքը բավական տխուր էր. ծունկը քերծած, ճակատին՝ մի մեծ կապտուկ: Տղան գլխիկոր մոտեցավ ընկերներին ու ձեռքում պահած նկարները նրանց պարզեց:

- Ես ներողություն եմ խնդրում, - ցածրաձայն ասաց նա, - հիմա հասկացա, որ սխալ էի: Մթով տուն էի գալիս, չտեսա ու գլուխս խփեցի սյանը: Ծիշտ եմ ասում՝ դրանից առաջ էլ էի հասկացել, բայց որ գլուխս խփեցի՝ ավելի լավ հասկացա:

Տիգրանը մեղավոր տեսքով ընկերներին նայեց, իսկ ընկերներն ուրախացած՝ նկարները ձեռքից վերցրին ու հրճվանքով սկսեցին նայել: Անիի հայրիկը, որ անձայն մոտեցել էր խմբին, ժպտաց, գրպանից մի լամպ հանեց ու ձեռքում պտտեցնելով ասաց.

- Դե, որ ամեն ինչ հասկացել եք, հիմա ես ձեզ օգնեմ: Բայց դուք էլ ինձ կօգնեք, հա՛, աստիճանը կրռնեք, որ չընկնեմ: Գնացի՛նք:

Մութ գիշեր էր՝ լուսնի հետքն անգամ չկար, ու հեշ պետք էլ չէր, որ լիներ: Որովհետև Քուչոն էլ չէր վախենում. չէ՞ որ բակում, լուսնից էլ պայծառ, վառվում ու լույս էր տալիս նորոգված լապտերը:



Մուրակի Օրը

Ըստ **Իռադա Սայյալի** համանուն սցենարի, Արրեջան

Թեմա՝ **Մասնակցություն, ակտիվ
ֆաղափացիական դիրքորոշում**

-Այսօր տոն է , - ասաց Ուսուցչուհի: - Տոնը կոչվում է Մոլորակի օր:

- Այսինքն՝ ո՞նց՝ Մոլորակի օր, - չհասկացավ Լուսինեն, - բոլորը մոլորվում են, ի՞նչ է:

Ուսուցչուհին սկսեց բացատրել, որ Երկիր մոլորակը մեր բոլորի տունն է, ու դրա համար աշխարհի մարդիկ որոշել են այս օրը տոնել որպես Երկիր մոլորակի օր: Բացատրեց, որ առավտից բոլորը տնից դուրս են գալիս ու իրենց բակերը, փողոցները կարգի բերում, աղբը մաքրում, նստարանները նորոգում, ծառեր տնկում: Մի խոսքով, ամում են ամեն ինչ, որ մեր մոլորակն էլ ավելի լավն ու գեղեցիկը դառնա:

- Ո՞վ է տեսել՝ մարդ տոնը մաքրություն անելով նշի, - Տիգրանին այս միտքն այնքան անհեթեթ թվաց, որ նույնիսկ զվարճացավ, - որ էդպես է՝ մայրիկս ամեն օր էլ տոն է նշում:

Երեխաները ծիծաղեցին, բայց Ուսուցչուհին նշան արեց, որ լռեն, ու շարունակեց: Պատմեց, որ գործը վերջացնելուց հետո՝ երեկոյան տոնախմբություն էլ են կազմակերպում երգերով, պարերով:

- Կարելի է՞, մենք էլ տոնահանդես անենք, - հարցրեց Անին:

- Իհարկե, - պատասխանեց Ուսուցչուհին, - շատ էլ լավ կանեք: Ուզու՞մ եք՝ միասին ծրագիր կկազմենք ու բոլոր-բոլոր հարևաններիս կիրավիրենք:

Երեխաներն իսկույն ոգևորվեցին ու սկսեցին տարբեր առաջարկներ անել: Տիգրանը նույնիսկ առաջարկեց նկարների ցուցահանդես-վաճառք կազմակերպել, իսկ հավաքած փողերով բակում ճոճանակ սարքել:

Ուսուցչուհին էլ մի քանի առաջարկ արեց, թե տոնահանդեսին ինչ երգեր երգեն, ինչ ոտանավորներ արտասանեն, հետո մոտեցավ պահարանին ու դարակից գլոբուսը վերցրեց:

- Տեսե՞ք, - ասաց նա, - ա՛յ, այս գլոբուսը մեր մոլորակի փոքրիկ մոդելն է: Տեսնու՞մ եք՝ ինչքան տարբեր երկրներ կան, ու ամեն տեղ շատ տարբեր մարդիկ են ապրում: Բայց ամեն մեկս հողի մի հարազատ պատառիկ ունենք՝ մեր երկիրը, որ շատ ենք սիրում: Եթե ամեն

մեկս այդ պատատիկի մասին հոգ տանենք, մեր ամբողջ մոլորակն էլ մաքուր ու գեղեցիկ կլինի:

Չանգը տվեց, դասը վերջացավ, ու երեխաները պատրաստվեցին տուն գնալ: Քայլում էին ու խոսում, թե տոնահանդեսը ոնց կազմակերպեն, որ ուրախ լինի: Եկան, հասան բակ. այ քեզ բա՛ն՝ բակի կենտրոնում՝ անցորդների ոտքի տակ շինարարական աղբի մի մեծ կույտ էր չգիտես՝ որտեղից հայտնվել, իսկ Ծառի տակ իրար վրա ինչ-որ պարկեր ու ներկի դատարկ տուփեր էին թափված:

- Էս ի՞նչ աղբ է, որտեղի՞ց հայտնվեց, - չէին հասկանում երեխաները. ախր, առավոտյան, երբ դպրոց էին գնում, բակը մաքուր էր:

Տիգրանի այս խոսքերի վրա տան կողմից մի սարսափելի դողոյուն լսվեց:

- Հասկացա՛, - հանկարծ ուրախ-ուրախ հայտարարեց Լուսինեն, - հայրիկս տունն է նորոգում: Վաղուց էր որոշել:

Եվ իսկապես՝ հենց այդ պահին բակում հայտնվեց հայրիկը՝ աղբի մի մեծ պարկ ուսին:

- Ողջու՛յն, երեխեք, - ուրախ-ուրախ բարևեց նա, - ի՞նչ կա, ի՞նչ չկա:

- Պա՛յ, ա՛յ պա՛յ, - վրա տվեց Լուսինեն, - էսօր տոն է՝ ուզում ենք բակում տոնահանդես սարքել, բայց, որ էսքան աղբ կա...

- Հա՛ ..., Մոլորակի օրը..., - հայրիկը գլուխը քորեց: - Գործերով ընկած՝ ամեն ինչ մոռանում եմ: Դե լավ, դարդ մի արեք, վաղը-մյուս օրը մեքենա կկանչեմ՝ աղբը կտանեն:

Ու գնաց՝ աղբը Ծառի տակ թափելու:

- Աչքիս՝ մենք էսօր տոնահանդես չարեցինք, - ընդհանուր տպավորություններն ի մի բերեց Գրիգորը:

- Եկեք հենց էս աղբերի մեջ էլ մեր տոնը տոնենք: Ի՞նչ կլինի՞, որ , - ասաց Տիգրանը:

- Չէ՛, չէ՛, - գլուխը թափ տվեց Լուսինեն, - աղբը պիտի հավաքենք՝ մաքրենք:

- Ըհը՛, - իսկույն նրան միացավ Անին, - ու ինչքան շուտ սկսենք, այնքան շուտ կվերջացնենք: Դեռ պիտի համերգին պատրաստվենք:

- Բայց էսքան աղբը մեր խելքի բանը չի, Անի՛, - ականջը քորելով հուսահատ ասաց Քուչոն, - ուժներս չի պատի:

- Լսե՛ք, մի բան եմ մտածել, - հանկարծ բացականչեց Տիգրանն ու



երեխաներին շուրջը հավաքելով՝ սկսեց ականջներին ինչ-որ բան փափսալ:

- Ուխ, - ոգևորությունից ձեռքերը շփեց Գրիգորը, - բոլոր հարևաններին կհրավիրենք: Ա՛յ թե կգարմանան:

- Ուսուցչուհուն էլ ենք հրավիրելու, չէ՞, - հարցրեց Լուսինեն, և դեռ պատասխան չստացած՝ վազեց դպրոց, որ հրավիրի:

Այդ օրը երեկոյան բոլոր-բոլորը հավաքվել էին բակում: Երեխաները բակով մեկ ցաքուցրիվ արված դատարկ տուփերն ու արկղերը հավաքել, դարսել էին մի անկյունում: Ամեն տեղ գեղեցիկ նկարված պատառներ էին կախել՝ «Մաքուր պահենք շրջապատը», «Երկիրը մեր տունն է, ուրիշ տուն չենք ունենալու: Հոգ տանենք մեր տան մասին»: Ծառի տակ փոքրիկ բեմ էին սարքել:

Բեմ դուրս եկավ Անին:

- Բարև ձեզ, սիրելի հյուրեր, - ողջունեց նա, - նստեք, խնդրեմ:

- Որտե՞ղ նստենք, - տարակուսած հարցրեցին հյուրերը, - չորս կողմը կեղտ է:

- Շնորհավոր լինի բոլորիս տոնը, - նրանց բողբոջներին ուշադրություն չդարձնելով՝ շարունակեց Անին, - ուզում էի ասել՝ եթե մեզանից ամեն մեկը Երկրի գոնե մի փոքրիկ պատառիկ պահպանի ու պաշտպանի, մեր մոլորակից լավը չի լինի:

Հյուրերը ծափ տվեցին, բայց երևում էր, որ մի քիչ շփոթված են:

- Ո՞վ կասի՝ սա ի՞նչ է, - ինչ-որ անհասկանալի տձև բան բեմ գլորելով՝ հարցրեցին Գրիգորն ու Լուսինեն:

- Ես կասեի՝ անհայտ թավալագլոր, - կարծիք հայտնեց հայրիկը:

- Կամ դեն գցած հին լվացքի մեքենա, - ասաց մայրիկը:

- Չկռահեցիք, - ասաց Լուսինեն, - սա մաքրության պատառիկն է:

- Ի՞նչ, - զարմացան հյուրերը. ախր, ինչ-ինչ՝ բայց «մաքրություն»

բառը տվյալ դեպքում հեշ չէր սազում:

Բայց երեխաները սկսեցին գնդի վրայից մեկիկ-մեկիկ կեղտոտ թղթիկներն ու պատառիկները պոկել, ու տակից դուրս եկավ մեր կապույտ-կանաչ մոլորակի մոդելը՝ գլորուսը:

- Այ քեզ բա՛ն, - զարմացավ հայրիկը, - գլորուս է: Բայց մի կտոր մոռացել եք մաքրել: Ա՛յ, էստեղ:

- Չենք մոռացել, - խմբով պատասխանեցին երեխաները, - այդ կեղտատ պատառիկը մեր բակն է: Չորս կողմը նայեք՝ կհամոզվեք:

Հետո Լուսինեն այդ վերջին աղբի կտորն էլ պոկեց գոբուսի վրայից.

- Տեսե՞ք, ինչ սիրուն է մեր մոլորակը, երբ մաքուր ենք պահում, չէ՞:

Հյուրերը ամոթահար գլուխները կախեցին, իսկ հայրիկը գլուխն օրորելով ասաց.

- Մեկ-մեկ մոռանում ենք, թե ի՞նչ սիրուն է մեր մոլորակը: Խոստանում են, որ սրանից հետո անձամբ են հետևելու մեր բակի մաքրությանը:

Ու վազեց բահը բերելու, որ անմիջապես գործի անցնի:

- Էդ էր պակաս՝ մոլորակի վրայի կեղտոտ բիծը մեր բակը լինի, - վրդովվեց մայրիկը, - բա մենք ինչի՞ համար ենք:

Ու ինքն էլ վազեց՝ ավել, դույլ բերի ու միանա հայրիկին: Մյուս հարևաններն էլ նրանց միացան, ու մինչև մութն ընկնելը բակը մասմաքուր էր:

- Շատ ապրեք, - երեխաներին շնորհավորեց Ուսուցչուհին, - մեծերը երբեմն այնքան են գործերով տարվում, որ կարևոր բաների մասին մոռանում են: Իսկ դուք հիշեցրիք: Խոստացե՛ք, որ մեծանաք՝ դուք էլ չեք մոռանա. մեր մոլորակը մեր խնամքի կարիքն ունի: Ինչքան նրան լավ պահենք, այնքան նա էլ մեզ լավ կպահի: Ամեն բան փոխադարձ է, գիտե՞ք:



124

ԳԼՈՒԽ

Ըստ **Իրինա Ծասուրյանի** համանուն սցենարի, Հայաստան
Թեմա՝ **Մասնակցություն, ակտիվ
փաղափացիական դիրքորոշում**

-S Իգրան, ա՛յ տղա, դպրոցից ուշացար:

Տիգրանը չուզելով աչքերը բացեց, բայց հանկարծ հիշեց, որ առաջին դասը, հակառակի պես, աշխարհագրություն էր: Բանն այն է, որ աշխարհագրություն շատ էր սիրում, ուղղակի խելքը գնում էր ճանապարհորդությունների ու նոր հայտնագործությունների համար: Նա կայծակնային արագությամբ հագնվեց ու տնից դուրս թռավ. մենակ թե չուշանար: Չանգի հետ, շնչասպառ, դասարան ընկավ:

- Այսօր, երեխաներ, ես կպատմեմ Ամերիկայի հայտնագործման պատմությունը, - դասն սկսեց Ուսուցչուհին: Նա այնքան հետաքրքիր էր պատմում, որ Տիգրանն սկսեց երազել: Մտքերը շեղվեցին: Մատիտը վերցրեց ու սկսեց նստարանին մեքենա նկարել: Պատկերացնում էր՝ ոնց է դրանով ուղևորվելու նոր երկրներ գտնելու ու այնքան տարվեց, որ չնկատեց էլ՝ ինչպես Ուսուցչուհին մոտեցավ ու կանգնեց գլխավերևը:

- Ինչո՞վ ես զբաղված, - խիստ ձայնով հարցրեց տղային:

Հանկարծակիի գալով, Տիգրանը փորձեց ձեռքերով ծածկել նկարածը:

- Բավական չի, որ դասը չես լսում, հետն էլ նստարանն ես փչացնում: Ապրե՛ս, - նախատեց Ուսուցչուհին:

Տիգրանն ամոթից կաս-կարմիր կտրեց. ինքն էլ չէր հասկացել, թե ինչպես է նստարանին նկարել: Դիշտ է, որ իրեն հարցնեին՝ նստարանն ավելի էր սիրունացել, բայց Ուսուցչուհուն ո՞նց բացատրես:

Լավ է՝ զանգը տվեց: Ուսուցչուհին մի անգամ էլ խիստ հայացք զգելով տղայի վրա, դասարանից դուրս եկավ: Տիգրանն ուրախությունից թռավ աթոռին ու սկսեց պարել: Բայց ճիշտ են ասում, որ ձախորդությունը մեկով չի վերջանում: Տիգրանի ծանրությանը չդիմանալով՝ աթոռը ճռռաց ու կոտրվեց:

«Հա՛, հիմա անպայման ծնող կկանչեն: Բա սա կյանք է՞»,- մտածեց տղան:

Գրիգորը, Տիգրանի ընկնելը տեսնելով, մոտ վազեց, որ օգնի, ու ճանապարհին ձեռքը կպավ սեղանին դրված գլոբուսին: Գլոբուսը երերաց, հետո շուռ եկավ ու գլորվեց ցած:

Օրը տաք էր, և դասարանի լուսամուտները բաց էին: Պատուհանի

ճիշտ դիմացը, ծառի ճյուղին նստած, Կոկոն հետևում էր այս ամենին և, վերջին իրադարձությունները տեսնելով, պատուհանից ներս թռավ:

- Լսեք, ի՞նչ եք իմացել՝ նստարանը փչացրիք, աթոռը կոտրեցիք, գլոբուսը ջարդուփշուր արեցիք, հետո՞, - երեխաներին նախատեց նա:

- Մենք գլոբուսը կտանձենք, - խոստացավ Գրիգորը:

- Աթոռն էլ կսարքենք, - լրացրեց Անին:

- Նստարանն էլ կմաքրենք, - նրանց միացավ Լուսինեն:

- Բայց ես պիտի շուտ տուն գնամ՝ մայրիկս կանհանգստանա, - վրա տվեց Տիգրանն ու սկսեց արագ-արագ գրքերը պայուսակը խոթել:

Երեկոյան երեխաները հավաքվել էին բակում՝ Ծառի տակ: Կոկոն բազմել էր ցածի ճյուղին ու հերթական տպավորություններն էր պատմում իր ճամփորդություններից:

- Կոկո՛ջան, - ասաց Լուսինեն, - ցույց կտա՞ս՝ որ երկրներում ես եղել:

- Ո՞նց ցույց տամ, - հոգոց հանեց Կոկոն, - տղաները գլոբուսը հազարավոր փոքրիկ գլոբուսիկների են փշրել:

- Դե, կսարքենք, էլի, - նորից խոստացավ Տիգրանը, - հո հենց էս րոպեիս պարտադի՞ր չի: Ավելի լավ է, քանի մութը չի ընկել, խաղանք:

Տիգրանը բոլորովին հավես չունեք թանկագին ժամանակը գլոբուս նորոգելու վրա վատնել:

- Ըհը, - եղբոր հետ համաձայնեց Լուսինեն, - ի՞նչ խաղանք:

- Ես նոր խաղ եմ մտածել, - առաջարկեց Կոկոն, - նվեր-նվեր:

- Նվեր-նվե՞րը որն է, - զարմացավ Տիգրանը: Հետո մտքով անցավ, թե ինչպես է հերթով բոլոր ընկերներից նվերներ ստանում ու ասաց: - Լա՛վ, եկեք խաղանք:

Տիգրանի վրա խիստ հայացք գցելով՝ Կոկոն բացատրեց.

- Կհաշվենք, որ տեսնենք՝ ով է սկսում: Սկսողը պիտի կողքինին մի մաղթանք նվիրի՝ բարի ցանկություն: Հասկացա՞ք:

Լուսինեն հաշվեց, ու Գրիգորը դուրս եկավ. ինքն էր սկսելու: Մի պահ մտածեց ու ասաց.

- Ես Լուսինեին մաղթում եմ, որ միշտ իր ուժերին հավատա: Թե չէ, մեկ-մեկ կարծում է, թե փոքր է՝ չի կարողանա ուզածին հասնել:

- Ապրե՛ս, ապրե՛ս, - գովեց Կոկոն, - հիմա Լուսինեի հերթն է:

- Ես էլ Քուչոյին ուրախություն եմ մաղթում, որ միշտ մեզ տեսնելիս ուրախ-ուրախ պոչը թափահարի ու ոչ մի անգամ չտխրի:

- Իսկ ես, - ասաց Ծառը, - ձեզ բոլորիդ մաղթում եմ, որ իմանաք՝ մի

ծաղկով էլ է գարուն գալիս: Երբեք չմտածեք՝ ի՞նձ ինչ, թող ուրիշներն անեն, այլ հասկանաք, որ միասին պիտի ամեն ինչի համար պատասխանատու լինեք:

- Ես չհասկացա, - խոստովանեց Լուսինեն, - պատասխանատու ո՞նց լինեմք:

- Այսինքն՝ փոխանակ ասելու՝ «ի՞նձ ինչ, թող ուրիշներն անեն», ասենք՝ «եթե ես չանեմ՝ ո՞վ է անելու», - բացատրեց Անին: - Չէ՞, - հարցրեց Ծառիկ:

- Մեկ էլ՝ որ գրքերը չփչացնենք, խնամքով վերաբերվենք, որովհետև առանց գրքերի անխելք կմնայինք, - վրա տվեց Տիգրանը, ու բոլորը զարմացած նրան նայեցին. այ քեզ բա՛ն, Տիգրանը, կարծես թե, խելք է հավաքում:

- Ո՞վ է գալիս՝ հենց հիմա միասին գլոբուսը կայցնենք, աթոռը սարքենք ու նստարանը մաքրենք, - առաջարկեց Գրիգորը, որ ավելի շատ անել էր սիրում, քան խոսել:

- Ես, - ասաց Անին, - գլոբուսը Երկիր մոլորակի մոդելն է: Երկիր մոլորակը մեր տունն է: Որ մենք մեր տունը կարգի չբերենք՝ ո՞վ է բերելու:

- Ըհր՛, - համաձայնեց Քուչոն, - հետո էլ բակը մաքրենք: Մանավանդ՝ իմ տան կողքերը: Դա էլ է գլոբուսի մի մասը, չէ՞:

Ընկերները միահամուռ գործի լծվեցին: Անին ու Լուսինեն անցան բակը մաքրելուն, Տիգրանն ու Գրիգորը աթոռն էին սարքում ու նստարանը լվանում, իսկ Կոկոն ու Քուչոն, գլուխ-գլխի տված, փորձում էին գլոբուսը կայցնել:


Հաջորդ օրը Ուսուցչուհին դասարան մտավ ու աչքերին չհավատաց.

- Չլինի՞, սխալ դասարան եմ մտել, - զարմացած հարցրեց երեխաներին, - այս ի՞նչ կարգուկանոն է. գրատախտակը՝ մաքուր, ծաղիկները՝ ջրած, ամեն ինչ իր տեղում: Պատմեք՝ տեսնեմ. ու՞մ ձեռքի գործն է:

- Մեր, - բացատրեց Անին, - հա՛ն դասարանը, հա՛ն մեր բակը մաքրել ենք: Միասին: Վաղն էլ որոշել ենք դպրոցի բակում մաքրություն անել ու գրադարանի գրքերը դասավորել: - Մենակ է դժվար, - բացատրեց նա՝ Ուսուցչուհու զարմացած հայացքը տեսնելով, - միասին հեշտ է: Տեսե՛ք՝ գլոբուսն էլ ենք կայցրել: Մենակ՝ Կոկոն կտուցով մի քիչ փոս է գցել՝ օվկիանոսն ավելի է խորացրել, բայց ոչինչ, չէ՞:

Բոլորն ուրախ ծիծաղեցին:

ԱՃԵՆՈՍԻՐՈՒՆ ԲԱԿՐ



128

Ըստ **Հիմեդ Այդինոլլուի** համանուն սցենարի, Ադրբեջան
Թեմա՝ **Մասնակցություն, ակտիվ
փառաբացիական դիրքորոշում**

-Տեսնենք՝ թերթերն ինչ են գրում,- ակնոցը քփն՝ ինքն իրեն խոսում էր Կոկոն՝ լրագրի էջերը շրջելով, - «Հայտարարություններ»: Տեսնենք: «Կորել է սև ականջով սպիտակ շնիկ: Գտնողին խնդրում ենք զանգահարել»: Ըհր... «Կբացեմ ցանկացած կողպեք»: Այ քեզ բա՛ն...: «Հայտարարվում է մրցույթ՝ Ամենասիրուն բակը: Հաղթողը կստանա...»: Այ, սա հետաքրքիր է:

Թե հաղթողն ինչ մրցանակ էր ստանալու, Կոկոն այդպես էլ չիմացավ, որովհետև լրագրի այդ մասում լաքա կար: Բայց կարևորը՝ հասկացավ, որ մրցանակ է լինելու: Ու ոգևորվեց: Հինգ րոպե չանցած՝ բակի բոլոր բնակիչներն արդեն գիտեին մրցույթի մասին:

Երեխաները որոշեցին գործի լծվել: Մի բան պարզ էր՝ պիտի ամեն ինչ անեին, որ իրենց բակն ամենալավը, ամենասիրունն ու ամենից հարմարավետը դառնար:

- Հիմա ինձ լսեք, - կազմակերպիչի դերը ստանձնելով՝ կարգադրեց Գրիգորը ու ոտից գլուխ չափեց Քուչոյին: - Նախ և առաջ պիտի Քուչոյին փոշեծծիչով մաքրենք ու բուրդը սանրենք:

Քուչոն շփոթվեց.

- Չեմ ուզում, որ ինձ սանրեք: Իմ բրդի ի՞նչը դուրներդ չի գալիս:

- Հա՛, էլի, - Տիգրանն անսպասելիորեն Քուչոյին օգնության հասավ, - սանրե՛լս որն է: Եթե կուզեք՝ փոշոտ տեսքը Քուչոյի ոճն է, - ու խեթ նայեց Գրիգորին, - համ էլ, դու՞ ինչ ես հրամաններ տալիս, ոնց որ ամենախելոքի պաշտոնը քեզ են տվել:

«Վա՛յ-վա՛յ, - մտածեց Ծառը, - հիմա էլի սկսելու են վիճել»: Բայց բարձրաձայն ոչինչ չասաց:

Մինչ տղաները վիճում էին, Անին ու Լուսինեն սկսեցին թափված տերևներն ավելել: Աշուն էր, օրերը ցրտել էին ու տերևաթափն սկսվել էր:

- Ինձ որ հարցնեք, - թունոտ ձայնով հայտարարեց Կոկոն, - մեր Ծառը պատասխանատվության զգացում չունի: Տերևները չորս կողմը շաղ է տալիս ու չի էլ մտածում, թե իր հետևից ով պիտի դրանք հավաքի:

Ծառը զարմացավ, ճյուղերն իրեն հավաքեց ու հոգոց հանեց.

- Ի՞նչ անեմ, որ աշնանային թախծոտ տրամադրություն ունեմ: Աշնանը միշտ էլ տերևներս սկսում են թափվել: Երևի եղանակից է:

- Էլ մի արդարացիր, - շարունակեց նախատել Կոկոն, - ոչ ոք պարտավոր չէ քո թափածը մաքրել: Թե՞ կարծում ես՝ դու միայն իրավունքներ ունես, մյուսները՝ միայն պարտականություններ: Հետո էլ կասես՝ հայրենասեր ես:

Չարմանքից Ծառը պապանձվեց: Ի՞նչ ասեր:

- Կոկոն շատ էլ ճիշտ է ասում, - մեջ ընկավ Քուչոն ու այնպես նայեց Ծառին, կարծես ուզում էր ասել. «Հը՞, թե կարող ես, առարկիր»:- Եթե տեսնում ես՝ տերևներդ թափվում են, դրանք հավաքիր, լցրու տոպրակները, որ գոնե շուրջդ չաղտոտես:

«Կամ ես երազ եմ տեսնում, կամ աշխարհն, իրոք, շուռ է գալիս. բոլորը գծվել են», - մտածեց Ծառն ու այդ տազնապալի մտքից մի տերև էլ պոկվեց՝ ընկավ ուղիղ Քուչոյի պոչին:

Իսկ Անին ու Լուսինեն տերևներն ավելի վերջացրին ու անցան նստարանների փոշին սրբելուն:

- Գործը ճիշտ կազմակերպելու համար մեկը պիտի դեկավարի, - Տիգրանին դառնալով՝ նորից պնդեց Գրիգորը: - Արի որոշենք, թե ով է գլխավորը, որ հետո որոշենք, թե ինչ անենք, որ մեր բակն ամենասիրունը դառնա:

- Համաձայն եմ, - պատասխանեց Տիգրանն ու խեթ-խեթ աղջիկների կողմը նայեց: -Չէ՛ սրանց պես: Թողնես՝ առավտոից իրիկուն տուն-տունիկ խաղան: Բայց, որ մի հետաքրքիր գաղափար մտածե՛ն, մի խելոք բան առաջարկե՛ն..., չէ, հույս չունենաա:

Գրիգորը ձեռքը թափ տվեց, իբր՝ հա, էլի, աղջիկներից ի՞նչ սպասես, ու ասաց.

- Աղջիկներն ի՞նչ երևակայություն ունեն, որ ինչ էլ առաջարկեն:

- Խելք հավաքեք, տղաներ, - միջամտեց Ծառը՝ միաժամանակ թափվող տերևները ճյուղերով բռնելու հուսահատ փորձեր անելով, - միգուցե ամենալավ գաղափարը հենց գործ անե՞լն է, հը՞: Մինչև դուք լեզվին եք տալիս ու որոշում եք, թե ինչ հետաքրքիր բաներ մտածեք, Անին ու Լուսինեն, տեսե՛ք, արդեն բակը կարգի են բերել:

Հենց այդ պահին Անիի հայրիկը բակ դուրս եկավ ու անցավ էլեկտրական հոսանքի լարերը նորոգելուն:

- Տեսե՛ք, հայրիկն էլ է մրցույթի մասին իմացել, - ասաց Քուչոն:

- Ի՞նչ մրցույթ, - չհասկացավ հայրիկը, - լարերը բացվել են՝ վտանգավոր է, ասացի՝ սարքեն: Ես չսարքեն՝ ո՞վ սարքի:

- Տեսա՞ք, - ուրախացավ Ծառը, - հայրիկը գիտի, որ գործը բոլորինն է: Նա լավ քաղաքացի է ու իրեն պատասխանատու է զգում մեր բակի համար:

- Ուզում ես ասել՝ մենք լավ քաղաքացի չե՞նք, - վրդովվեց Գրիգորը:

- Ի՞նչ ասեմ, - Ծառը երբեք չէր ստում, որքան էլ որ դիմացինին դուր չգային իր խոսքերը, - լավ քաղաքացիներն իրենց բակը կարգի բերելու համար մրցույթների չեն սպասում: Էլ չասած՝ գործ անելու փոխարեն չեն վիճում, թե իրենցից ով է գլխավորը:

Տիգրանն ու Գրիգորն իրար նայեցին ու ամոթից գլուխները կախեցին:

- Արի՛ գործի անցնենք, - առաջինը լռությունը խախտեց Տիգրանը:

- Հա, աշխատենք, քանի մութը չի ընկել, - համաձայնվեց Գրիգորը:

Երեկոյան բակն անճանաչելի էր դարձել՝ մաքուր, կոկիկ, լույսը նորոգած, նստարանները գեղեցիկ դասավորած: Այնքան հաճելի էր, որ ոչ ոք չէր ուզում տուն գնալ:

- Ապրե՛ք, ապրե՛ք, - գովեստի խոսքեր ասելով՝ Կոկոն բացեց լրագիրը, - հիմա փորձենք կարդալ, թե վերջը մեր աշխատանքի համար մեզ ի՞նչ մրցանակ է հասնում: Ա՛յ քեզ բա՛ն, - հիասթափված բացականչեց նա՝ աչքերը զարմացած լրագրի էջին հառելով: - Անցյալ տարվա համար է: Ի՞նչ է դուրս գալիս. իզո՞ւր ենք աշխատել:

- Իզո՞ւր, - միաձայն բացականչեցին երեխաները, - ա՛յ Կոկո, մի չորս կողմդ նայիր...

Նվերը



132

Ըստ **Արթուր Վարդանյանի** համանուն սցենարի, Հայաստան
Թեմա՝ **Շրջակա միջավայր**

1.

- Ն

վերս կտամ, - սենյակում հետ ու առաջ քայլելով ինքն իրեն խոսում էր Տիգրանը, - ու կասեմ՝ ծնունդդ շնորհավոր, Անի: Անին կհարցնի՝ սա ի՞նչ է, ու կսկսի փաթեթը բացել: Հեչ, կասեմ ես, իսկ ինքը նվերս կտեսնի ու կասի. «Վա՛յ, ինչ լավ նվեր է»: Հետո հիացած ինձ կնայի ու կասի. «Կյանքում էսքան լավ նվեր չէի ստացել»: Իսկ ես գլուխս կկախեմ ու կասեմ. «Մի մեծ բան չի»: Հետո Անին ինձ կգրկի ու կասի. «Շնորհակալություն, Տիգրան, դու իսկական ընկեր ես», ու միգուցե համբուրի:

- Հա, լավ կլինի, - հիմա մնում է որոշեմ՝ ինչ եմ նվիրելու:

Դա հեշտ բան չէր, ու Տիգրանը մռայլված նստեց բազմոցին: Նստեց ու սկսեց մտածել ու մտածել: Բայց ոչ մի խելքը գլխին միտք գլուխը չէր գալիս:

Հանկարծ Տիգրանն ուրախացած վեր թռավ.

- Ո՞նց էի մոռացել: Իհարկե՛ պիտի ծաղիկներ նվիրեմ: Անին ծաղիկ շատ է սիրում:

Իր բախտից՝ զարուն էր, ու չորսբորորը անթիվ-անհամար ծաղկած ծառեր կային:

2.

- Տիգրան, էդ ի՞նչ ես խշխշացնում, - հետաքրքրվեց Կոկոն:

- Հեչ, - պատասխանեց Տիգրանը, - Անիի նվերն եմ փաթաթում:

Ու ծաղկած ճյուղերի հսկայական ծաղկեփունջը վերս պարզեց, որ Կոկոն լավ տեսնի:

- Հը՛, - հարցրեց Կոկոյին, - հավանում ե՞ս:

- Ըրը՛, ո՞նց ասեմ - կմկմաց Կոկոն, - ծաղկեփունջը շատ սիրուն է, խոսք չկա, բայց վախենամ՝ Անին էնքան էլ չուրախանա:

Տիգրանն անսպասելիությունից պապանձվեց:

- Ո՞նց, - մի կերպ կարողացավ հարցնել:

Կոկոն ուտերը թոթվեց.

- Ախր, ո՞նց բացատրեմ:

Այստեղ խոսակցությանը միացավ Ծառը և Տիգրանին դիմելով՝
ասաց.

- Ուշադիր ինձ նայիր: Հիմա ամեն ինչ կհասկանաս:

Մեկ էլ Տիգրանի աչքերի առաջ ինչ-որ հրաշքով նա ոտից գլուխ գե-
ղեցիկ գույնզգույն ծաղիկներով պատվեց: Հետո ծաղիկները թափվե-
ցին ու նրանց տեղը մրգեր հայտնվեցին, ինչ ուզես՝ տանձ, խնձոր,
դեղձ, ծիրան:

Այդ պահին մյուս երեխաներն էլ բակ եկան ու ապշած նայեցին
Ծառին:

- Այ քեզ հրա՛շք, - զարմացած բացականչեցին նրանք՝ աչքներին
չհավատալով: Հետո իրենց չկորցրին. մոտ վազեցին ու սկսեցին միրգ
պոկել:

- Բա ինչու՞ շուտ-շուտ չես էս տեսակ հյուրասիրություն կազմա-
կերպում, - հյութեղ մրգերն ուտելով հարցրին նրանք:

- Շուտ-շուտ չեմ կարող, - բացատրեց Ծառը, - միայն երբ շատ է
պետք:

- Ինձ միրգ ամեն օր էլ շատ է պետք, - խնձորի միջից մի չաղլիկ որդ
կտցելով ասաց Կոկոն:

Ծառը ծիծաղեց:

- Սպասիր, Կոկո, խոսքը հիմա դրա մասին չէ: Ո՞վ կասի՝ մրգերը
որտեղի՞ց են հայտնվում:

- Ես, - լիքը բերանով խոսեց Տիգրանը, - հիմա տեսա. ծառերին ծա-
ղիկներ են բուսնում, հետո դառնում են միրգ:

- Ճիշտ տեսար, - խրախուսեց Ծառը, - ուրեմն՝ հասկացար, որ քո
քաղած ճյուղերի ծաղիկներն էլ՝ ամեն մեկը մի միրգ էր դառնալու:
Բայց հիմա էլ չեն դառնա:

Քիչ էր մնում՝ խնձորի կտորը Տիգրանի բլին կանգներ:

- Վա՛յ, - լացակումած ասաց նա, - բայց ես չգիտեի: Ճիշտ եմ
ասում՝ չգիտեի:

Իսկ Ծառը շարունակեց բացատրել.

- Ծառերն էլ, ծաղիկներն էլ, շատ նուրբ են: Ճիշտ է՝ նրանք մարդ-
կանց ու կենդանիներին շատ օգուտ են տալիս, բայց իրենք էլ ձեր
պաշտպանության կարիքն ունեն: Եթե չխնամեք՝ կմեռնեն:

- Իսկ մրգերից բացի ուրիշ օգուտ է՞լ են տալիս ծառերը, - հարցրեց Լուսինեն: Նա շատ հետաքրքրասեր փոքրիկ աղջիկ էր:

- Ո՞նց թե, - զարմացավ Գրիգորը, - չգիտե՞ս. ծառերը որ չլինեին, մեր շունչը կկտրվեր: Նրանք են մեր շնչելու օդը մաքրում: Մի բան էլ ասե՞մ, - ավելացրեց նա՝ գոհ, որ ժամանակին դասը սովորել էր ու հիմա կարող էր ընկերների մոտ գիտելիքներով պարծենալ, - մեր երկրագնդի վրա ամեն ինչ իրար հետ կապված է: Օրինակ, եթե ծառերը փչանան, օդը փչանա, մյուս ամեն ինչն էլ հերթով կփչանա՝ սկզբում մի տեղ, հետո՝ ուրիշ տեղ հետո ամեն տեղ:

- Ո՞նց՝ ամեն տեղ, - չհասկացավ Կոկոն, - այսինքն՝ եթե աշխարհի մյուս ծայրում ինչ-որ մի գիժ ծառեր փչացնի՝ ես էլ կտուժե՞մ: Չեղա՞վ, - ու շրջեց, որ Տիգրանին ինչ-որ բան ասի, բայց տղան անհետացել էր:

Այսինքն՝ ոչ մի տեղ էլ չէր անհետացել: Ուղղակի ամեն ինչ հասկացել էր ու վազել էր տուն, որ Անիի համար ուրիշ նվեր բերի: Նա ծաղկամանի մեջ հող ցրեց, մի քանի կորիզ դրեց, մի քիչ ջրեց, հետո ծաղկամանը վերցրեց, որ բակ տանի:

«Հաստատ Անիի դուրը կգա», - մտածեց նա, - ամեն օր կջրի ու մեկ էլ մի օր կորիզը կծլի, հետո կմեծանա, կդառնա կիտրոնի ծառ, հետո կծաղկի, ծաղիկները կդառնան կիտրոն, կհասնեն: Հետո Անին ինձ թեյի կիրավիրի: Միասին կիտրոնով թեյ կխմենք ու կգրուցենք»:

Տիգրանը ծաղկամանը ձեռքն առավ ու շտապեց բակ: Ընկերները, բոլորը, բակում էին: Անիի մայրիկին օգնում էին, որ Ծառի տակ տոնական սեղան գցի: Կոկոն էլ էր օգնում՝ մրգերը մեկ-մեկ կտցում էր, որ համոզվի՝ մեջը հո որդ-մորդ չկա՞:

Ծառն առաջինը տեսավ Տիգրանին ու ճյուղով արեց, որ մոտ գա: Տիգրանը մոտեցավ Անիին ու ծաղկամանը պարզեց:



Եկե՛ք դայնանավորվե՛նք...

Ըստ **Իրակի Լոնոուրիի** համանուն սցենարի, Վրասան
Թեմա՝ **Շրջակա միջավայր**



ուչոն միշտ, ինչպես իրենից առաջ իր նախնիներն են արել՝ ձեռքն ընկած ուտելիքն ուտում էր, իսկ ավելացածը պահում նեղ օրվա համար: Բակի թփերից մեկի տակ՝ աչքից հեռու մի ապահով տեղ փոս էր փորում, դնում մեջն ու հողով ծածկում: Բայց վերջերս թաքստոցի վրա աճող թուփն ինչ-որ տարօրինակ էր իրեն պահում. դեղնել էր, նվաղել ու մի տեսակ կուչ եկել:

Օրերից մի օր հայրիկը, թփի կողքով անցնելիս, այս բանը նկատեց: Կանգ առավ, զննեց թուփն ու մտահոգված ասաց.

- Ոնց որ լուրջ հիվանդացել է մեր թուփը: Ստիպված եմ լինելու կտրել:

«Կտրել» բառի վրա թուփը ցնցվեց. չէ՞ որ հասկացավ՝ խոսքն իր մասին է: Այս բանը հայրիկի աչքից, իհարկե, չվրիպեց: «Միգուցե փորձեմ պարարտացնե՞լ», - մտածեց նա ու, գլուխը քորելով, քայլեց դեպի տուն: Կոկոն, որ Ծառի ճյուղին բազմած՝ բակի անցուդարձին էր հետևում, հայրիկի բառերից տազնապահար, թռավ-իջավ թփի մոտ:

- Ո՞նց թե՛ թուփը կտրի: Ինչե՞ր է խոսում: Առանց թփի բակն ինչի՞ նման կլինի: Էլ չեմ ասում՝ ինչքան է օղը մաքրում:

Կոկոն իր վրդովմունքն այնքան բարձրաձայն էր արտահայտում, որ երեխաները լսեցին, վազելով եկան:

- Չէ, ի՞նչ կտրել, - ասաց Լուսինեն, - մի քիչ հիվանդացել է, պիտի բուժենք, ոչ թե կտրենք:

- Լավ, մի խառնվեք, - ընկերներին հանգստացրեց Գրիգորը, - հիմա մի բան կմտածենք:

- Միգուցե ծարա՞վ է, - ասաց Անին, - եկեք ջրենք:

- Չէ՛, - մտահոգ պատասխանեց Գրիգորը, - դժվար՝ երեկ եմ ջրել:

- Կարող է՞ որդնած լինի, - կասկած հայտնեց Տիգրանը, - Կոկո՛, դու կիմանաս:

- Ինչ ես խոսում, - առարկեց Կոկոն:

- Մի տեղ կարդացել եմ, որ բույսերն էլ են լսում ու զգում: Կարո՞ղ է, մեկնումեկը նեղացրած լինի, - ենթադրեց Գրիգորը, - Քուչո՛, ոչինչ չես նկատե՞լ:

- Ո՛չ նկատել եմ, ո՛չ տեսել, ո՛չ լսել, - հայտարարեց Քուչոն, - ինչ-
քան տեսել եմ՝ ոչ մեկը մատով էլ չի կպել:

Մի քիչ էլ իրավիճակը ծանրութեթև անելուց հետո, երեխաները
որոշեցին, որ ամենաճիշտը հայրիկի հետ լուրջ խոսելն է:

- Այ քեզ բա՛ն, - երեխաների վրդովված դեմքերը տեսնելով՝
պատասխանեց հայրիկը, - բան էր՝ ասացի: Ես հո բարբարո՞ս չեմ՝
միանգամից կացինս առնեմ ու աջ ու ձախ կոտորեմ:

- Ո՞նց թե՛ բան էր՝ ասացիք: Բա դա ասելու բան է՞ր: Ծառասպա՛ն,
- չէր հանգստանում Կոկոն:

Կոկոյի վերջին խոսքից հայրիկը շատ վիրավորվեց. ախր, ինքն իս-
կապես թուփը կտրելու միտք չուներ: Բայց, ինչ ուզում է լինի, երեխա-
ները պիտի իրենց դաստիարակված պահեն: Ո՞վ է տեսել՝ մեծերի
հետ էդպես խոսեն:

- Գիտե՞ք ինչ, չափներդ մի անցեք: Եթե նույնիսկ որոշեմ թուփը
կտրել, ուրեմն պատճառ կա:

Այստեղ երեխաները լրջացան, իրենց հավաքեցին ու քաղաքա-
վարությամբ խնդրեցին սեղանի շուրջ նստել՝ բանակցելու: Հայրիկն
այնքան էր վրդովվել, որ քիչ էր մնում՝ չուզեր հետները խոսել, բայց,
քանի որ շատ քաղաքավարի խնդրեցին, վերջը համաձայնվեց:

Առաջինը խոսք խնդրեց Լուսինեն:

- Մեր թուփը, ախր, հո հասարակ թուփ չի՞, - սկսեց նա:

- Բա ի՞նչ է, - հետաքրքրվեց հայրիկը:

- Մեր շտաբն է, - բացատրեցին երեխաները, - այնտեղ ենք
հավաքվում, կարևոր որոշումներ կայացնում: Դե, խաղում ենք, էլի՛:

- Լավ, բացատրեք՝ հասկանամ. հիմա էլ ե՞ք խաղում, թե էս անգամ
լուրջ եք խոսում, - փորձեց իր դիրքերը պարզել հայրիկը:

- Չէ, չէ, ի՞նչ էս ասում, հիմա լուրջ ենք, - վրա տվեցին երեխանե-
րը, - բա թուփը կտրելը կատակ բա՞ն է: Դրա համար էլ, ի՞նչ կլինի՝
մեզ մինչև վերջ լսեք, հա՞: Որ հետո տեսնենք՝ ինչ ենք անում:

Ու սկսեցին հերթով իրենց փաստարկները բերել, թե ինչու թույլ չեն
տա, որ թուփը կտրեն:

- Օրինակ, ասենք, մեր շտաբն էլ չի: Հասարակ թուփ է: Բայց բույ-
սերը օդն են մաքրում, չէ՞: Որ բոլոր բույսերը կտրենք, ի՞նչ ենք շնչե-
լու: Շունչներս կկտրվի՝ կխեղդվենք:

- Այդ մեկի հետ համաձայն եմ, - պատասխանեց հայրիկը, - բույսերը մեզ շնչելու համար թթվածին են տալիս: Մյուս կողմից՝ հիվանդ բույսը ի՞նչ թթվածին պիտի տա՞, որ... Գուցե սա կտրենք, տեղը մի նո՞րը տնկենք:

- Չէ՛, նորը չենք ուզում, - երեխաները միահամուռ գլուխները թափահարեցին, - մենք մեր թուփն ենք ուզում:

- Հա՛, - դարձյալ մտքերի մեջ ընկավ հայրիկը, - բա ո՞նց անենք: Ախր, հիվանդ է, պիտի խոչընդոտը հաղթահարելու եղանակ գտնենք:

Այս խոսքերի վրա Քուչոն ականջները սրեց: Անհասկանալի բառերից մեջը տազնապ առաջացավ. հանկարծ չկարծե՞ն, թե ինքն էլ է «խոչընդոտ», ու որոշե՞ն իրեն էլ «հաղթահարել»:

Բայց Գրիգորը տեղից վեր թռավ ու բացականչեց.

- Ուռսա՛, իմացա... Եթե վիճողները նույն բանն են ուզում՝ պիտի համաձայնության գան ու միասին մի ճար գտնեն: Հիմա պարզվեց՝ հայրիկն էլ է նույն բանը ուզում, ուրեմն՝ կկարողանանք միասին լուծում գտնել ու թուփը փրկել, չէ՞, - հույսով հարցրեց հայրիկին:

- Համաձա՞յն ես՝ եթե պարզենք, թե թփին ինչ է պատահել, չկտրես, թողնես՝ փորձենք բուժել:

- Իհարկե, համաձայն եմ: Ես հո չե՞մ ուզում իմ հաճույքի համար թուփը կտրել: Ուղղակի մտածում էի՝ եթե անբուժելի լինի, ավելի լավ չի՞, տեղը մի նոր թուփ տնկենք:

Երեկոյան, երբ երեխաները գնացել էին տուն՝ ընթրելու, Լուսինեն նորից բակ եկավ ու կամացուկ մոտեցավ հիվանդ թփին:

- Գնամ ասեմ, որ շատ չտխրի, - մտածեց նա ու մեկ էլ ի՞նչ տեսնի. Քուչոն դնչով ու թաթերով թփի արմատներն է փորում:

- Վա՛յ, ի՞նչ ես անում, ա՛յ Քուչո, - սարսափից քարացած հարցրեց շանը:

Քուչոն, որ չէր լսել աղջկա մոտենալը, հանկարծակիի եկած՝ վեր թռավ, ու բերնի ոսկորը զցեց ցած: Նա անհանգստացավ, որ հիմա Լուսինեն գիտի իր թաքստոցի տեղը:

- Մարդու չասես, հա՞, - թախանձագին խնդրեց աղջկան, - թե չէ, մեկ էլ տեսար՝ ուրիշները թաքստոցիս տեղն իմացան ու սկսեցին ոսկորներս թոցնել:

- Վա՛յ, - ձեռքերն իրար խփեց Լուսինեն, - հիմա հասկացա՞ թփի

հիվանդության մեղավորն ով է:

- Հա՞, - ուրախացավ միամիտ Քուչոն, - ինձ էլ կասե՞ս:

Լուսինեն հասկացավ, որ Քուչոն դիտավորյալ չի վնաս տվել թփին. պարզապես հիմարիկ է՝ չի հասկացել, թե թփի արմատները փորելը ինչքան վտանգավոր է նրա համար: Մոտեցավ, ականջից մի թեթև քաշքշեց, հետո սկսեց բացատրել.

- Տե՛ս, թե արմատներն ինչ օրն ես գցել, - ասաց նա ու ցույց տվեց բացված արմատները՝ Քուչոյի ճակների ու ատամների հետքերը վրան: Քուչոն սկսեց ինչ-որ բան գլխի ընկնել ու շատ ընկճվեց:

- Չի կարող պատահել, - սարսափեց նա, - ուրեմն՝ իմ մեղքո՞վ է եղել:

Այդ ժամանակ մյուսները նույնպես, ընթրիքը վերջացրած՝ բակ եկան: Տեսան, հասկացան ու դիմեցին Քուչոյին.


- Արի՛ քեզ համար մի ավելի ապահով թաքստոց սարքենք: Իսկ թուփը, որ հանգիստ մնա, շուտով ուշքի կգա: Լա՞վ:

Քուչոն ուրախացավ: Ճիշտն ասած՝ արածի համար շատ էր անաչում ու պատրաստվել էր ընկերներից արժանի նախատիներ լսել:

- Համաձայն եմ, - ուրախ-ուրախ հաչաց նա, - ո՞նց համաձայն չեմ: Ես էլ եմ, չէ՞, ուզում, որ մեր թուփը առողջ լինի:

Գիտե՞ք, պարզվում է, պայմանավորվելը բոլորովին էլ դժվար բան չի. պարզապես պիտի կարողանաս ուշադիր լսել: Մեկ էլ տեսար՝ պարզեցիր, որ երկու կողմն էլ համարյա նույն բանն են ուզում, իսկ եթե ուզածը տարբեր բաներ են, միևնույն է՝ էլի կարող ես պայմանավորվել, որ երկուսդ էլ ձեր ուզածին հասնեք:

Կար, չկար՝ մի ֆառափ կար...



Ըստ **Պագա Նախուրիչիլիի** համանուն սցենարի, Վրասան
Թեմա՝ **Շրջակա միջավայր**

1.

«Յ

ոք սարից այն կողմ, հեռու հեռվում կար, չկար, մի Մեծ քաղաք կար: Այս քաղաքում Մեծերն էին ապրում: Նրանք իրենց քաղաքի մաքրությանը հատուկ չէին հետևում: Մեծերն իրենց մեծ աղբը կարող էին, իհարկե, փողոց թափել կամ գետը լցնել: Բայց նրանք ոչ միայն մեծ էին, այլև՝ խելացի, իրենց Մեծ քաղաքն էլ շատ էին սիրում, դրա համար էլ երբեք աղբն ուր պատահի չէին թափում:

Դրանից ոչ այքան հեռու մի ուրիշ քաղաք էլ կար՝ Փոքր քաղաքը: Այստեղ Փոքրերն էին ապրում: Փոքր քաղաքում մաքրությանը հետևող հատուկ ծառայություն կար: Չնայած դրան՝ քաղաքը, միևնույն է, շատ կեղտոտ էր, որովհետև փոքրերն աղբը հենց փողոցում գետին էին գցում, կամ էլ գետն էին լցնում: Ասում էին՝ էս մի պուճուր աղբից ի՞նչ մեծ վնաս պիտի լինի:

Բայց ժամանակն անցնում էր, ու փոքր աղբը կուտակվում՝ աղբի մեծ կույտի էր վերածվում: Փոքրերի տեսքը գնալով ավելի ու ավելի անառողջ էր դառնում, գետակն ավելի ու ավելի կեղտաջրի առվակի էր նմանվում, իսկ քաղաքի ծառերը դեղնում, տերևաթափ էին լինում...»:

Մայրիկը գիրքը փակեց ու ասաց.

- Մնացածը վաղը կկարդամ: Հիմա քնեք, ուշ է:

2.

Ամբողջ գիշեր բնում շուռումուռ գալուց հետո, վերջապես լուսադեմին քուն մտած Կոկոն աչքերը բացեց: Արևն արդեն ծագել էր, բայց բակում լռություն էր: Գլուխը բնից հանեց ու չորսկողմը նայեց: Կարծես՝ ոչինչ չէր փոխվել. նստարանն իր տեղում էր, ծաղկանոցը նույնպես: Ծառի տակ մեկն իր հեծանիվն էր թողել: Վա՛յ, այն ի՞նչ է. բակի անկյունում, պատի տակ աղբի մի մեծ կույտ էր բուսնել:

«Ես էլ ասում եմ՝ ինչու եմ վատ գգում, - աղբի կույտը տեսնելով՝ գլխի ընկավ Կոկոն, - դու մի ասա՝ աղբանոցում եմ քնել...»: Հետո

բարձրաձայն ասաց.

- Ինչ անշնորհք մարդիկ են: Թողնես՝ մեծ-մեծ բաներից խոսեն, բայց բակն աղբանոց են սարքել: Տեսնես՝ ո՞վ արած կլինի, - հետո, համբերությունից դուրս գալով, ձայնը գլուխը զցեց, - հե՛յ, ձեզ եմ ասում, ո՞ր մի անշնորհքն է աղբը էստեղ լցրել:

Կոկոյի ճովողունի վրա երեխաները բակ վազեցին:

- Այ քեզ բա՛ն, - դեզը տեսնելով՝ զարմացավ Գ-րիգորը, - էս ե՞րբ էսքան մեծացավ:

- Որ թափողին բռնել եմ, չէ՛, - հոնքերը կիտելով ասաց Տիգրանը, - ձեռիցս չի պրծնի:

- Ես էլ ասում եմ՝ ինչու՞ եմ ինձ վատ զգում, գլուխս ցավում է, մարմինս կոտրտվում է, - էլի մեջ ընկավ Կոկոն: - Բա որ պարզվի՝ թունավորվե՞լ եմ: Ջահել-ջիվան մեռնե՞մ:

Այս խոսքերից ինքն իրեն այնքան խղճաց, որ լացը եկավ:

- Չէ, չեմ հասկանում, - վրդովվեց Լուսինեն, - էս աղբը թափողը չի մտածե՞լ, որ մենակ մեր բակը չի կեղտոտել՝ մեր մոլորակն է կեղտոտել: Ճիշտ չե՞մ ասում:

Բայց Կոկոն, չզիտես, ինչու, չպատասխանեց: Նա, աչքերը չռած, աղբակույտին էր նայում, ասես՝ ինչ-որ զարմանալի բան էր տեսել:

- Այ քեզ բան, - վերջապես քթի տակ ասաց նա, - հին գիշերանոցս այստեղ ինչ գործ ունի: Վա՛յ, - ավելացրեց՝ մի քիչ էլ աղբակույտը տնողելով, - էս էլ առաջվա ծակ բույնս:

Երեխաները, շունչները պահած, նրան էին հետևում:

- Հա՛, էլի, հիշեցի՛, - թևը ճակատին խփելով ասաց Կոկոն, - ո՞նց էի մոռացել, ախր, ինքս էլ բերել՝ դրել եմ:

Իր մոռացկոտության վրա զվարճացած՝ նայեց երեխաներին, ու ասածի իմաստը, վերջապես, իրեն էլ հասավ:

- Չէ, բայց էս միայն գիշերանոցս ու բույնս եմ բերել՝ ուղղակի դրել պատի տակ: Հո աղբի դեզը ե՞ս չեմ կիտել:

Բոլորը, գլուխները կախ, լռում էին: Մեկ էլ, չզիտես ինչու, միանգամից բոլորի ծիծաղն եկավ, ու փորները բռնած՝ սկսեցին ծիծաղել: Հետո Կոկոն այսպես էր պատմում. «Առաջինը Տիգրանը փոթկաց, հետո՝ մյուսները: Մի ծիծաղում են, մի ծիծաղում...: Մեկը հարցնի՝ ի՞նչ ուրախանալու բան կա»:

- Խոստովանում եմ, - ծիծաղից կակազելով ասաց Տիգրանը, - էս էլ

մի երկու անգամ լիմոնադի շիշ են բերել՝ դրել պատի տակ:

- Ես էլ մի անգամ պաղպաղակի թուղթ են գցել, - հիշեց Անին:

- Ես՝ կոնֆետի տուփ, - գլուխը կախեց Լուսինեն:

Հիմա էլ Կոկոյի ծիծաղը եկավ: Ավելի ճիշտ՝ ուրախացավ, որ ընկերներն ազնիվ են, ամեն ինչի մեղքը միայն իր վրա չգցեցին: «Ապրե՛ն, - մտածեց Կոկոն, - իրենց արածի համար պատրաստ են պատասխան տալ»: Իսկ բարձրաձայն ասաց.

- Անկեղծ ասած՝ ես մեկ-մեկ արևածաղկի կճեպներ էլ են էստեղ թափել:

- Լավ, արդեն պարզ է, - եզրակացրեց Լուսինեն, - ամեն մեկս մի քիչ- մի քիչ աղբ էինք բերում՝ գցում պատի տակ: Ամեն անգամ մտածում էինք՝ մի պուճուր աղբից ի՞նչ վնաս: Փոքրերի քաղաքի պես:

- Ի՞նչ փոքրեր, ի՞նչ քաղաք, - չհասկացավ Քուչոն:

- Հեքիաթ է, հետո կպատմեմ, - խոստացավ Տիգրանը, - բայց եկեք նախ միասին մեր թափածը հավաքենք, լա՞վ:

Ու միասին գործի անցան: Չգիտեմ՝ արժի՞ պատմել, թե ոնց էին ջանասիրաբար բակը մաքրում: Երևի՛ արժի. լավ գործերի մասին միշտ էլ արժի խոսել: Մի խոսքով՝ ամբողջ օրն աշխատեցին, բակը մաս-մաքուր հավաքեցին, ավլեցին, հետո էլ խոստացան, որ էլ երբեք աղբը գետին չեն գցի. չէ՞ որ դրա համար հատուկ աղբամաններ կան: Անձամբ ես նրանց խոստումին հավատում եմ: Ու գիտեմ, որ դուք էլ, իմ փոքրիկ բարեկամներ, երբեք նման բան չեք անի: Չէ՞:

Այդ օրը երեկոյան, երբ Տիգրանն ու Լուսինեն արդեն ընթրել, ատամները լվացել ու անկողին էին մտել, մայրիկը եկավ, որ խոստումը կատարի ու կարդա հեքիաթի շարունակությունը: Երեխաները, շունչները պահած, պատրաստվեցին լսելու, թե հետո ինչ եղավ:

«Վերջապես մի օր Փոքրերն այնքան վատացան, չորսկողմի բնությունն այնքան խեղճացավ, որ էլ ասելու չէր: Հենց այդ ժամանակ իրենց Փոքր քաղաք գործով Մեծ քաղաքից մարդիկ եկան: Նրանք ճամպրուկները ձեռքներին գնացքից իջան ու ապշահար շուրջը նայեցին: Ամեն տեղ աղբի մեծ կույտեր էին դիզված: Մեծերը երբեք այդքան շատ աղբ չէին տեսել: Փոքրերը ամոթից կարմրեցին: Ամաչում էին, թե հյուրերն իրենց մասին ինչ կմտածեն: Հազիվ համբերեցին, որ մուրը ընկնի, ու, խոսքները մեկ արած, բոլորը փողոց դուրս եկան: Մի գիշերվա մեջ քաղաքը մաքրեցին, աղբը լցրեցին մեծ պարկերն ու աղ-

քանոց տարան:

Առավոտյան, երբ Մեծերն արթնացան ու պատուհանից դուրս նայեցին, շատ զարմացան. երեկ այդ ի՞նչ տարօրինակ երազ էին տեսել. ախր, Փոքր քաղաքը մաքուր ու կոկիկ էր ու շատ գեղեցիկ:

- Չէ, երևի հոգնածությունից աչքներիս է երևացել, - ասաց նրանցից մեկը, - հո մարդիկ իրենց քաղաքը այդքան չէի՞ն կեղտոտի: Ո՞վ կուզի կեղտի մեջ ապրել:

- Ըհը, ճիշտ ես ասում, - գլխով արեցին մյուսները, - տեսե՞ք՝ ինչ սիրուն քաղաք է:

Ու այս խոսքերից Փոքրերն ուրախացան: Բանն այն է, որ ինչ-որ մեկը դռան հետևից լսել էր Մեծերի այս խոսքերն ու անմիջապես պատմել էր բոլորին:

Այդ օրվանից Փոքր քաղաքում ոչ մի հատուկ ծառայություն քաղաքի մաքրությանը չէր զբաղվում, որովհետև այլևս ոչ ոք երբեք աղբն ուր պատահի չէր զգում: Հետևում էին, որ իրենց սիրելի քաղաքը մաքուր մնա. չէ՞ որ իրենք էին այդտեղ ապրում»:



146

Վարակիչ Բուլչոն

Ըստ **Իրակի Լոմոնոսի** համանուն սցենարի, Վրասան
Թեմա՝ **Հանդուրժողականություն**

Վաղ առավոտ էր՝ լույսը նոր էր բացվել: Բակի բնակիչները դեռ մուշ-մուշ քնած էին անկողնում, և ոչ մի շշուկ չէր խախտում առավոտյան անդորրը:

Քուչոն արթնացավ, ճմլկոտեց ու հորանջելով գլուխը բնից հանեց:
- Մարդ չկա: Երևի դեռ քնած են: Ծույլիկներ...

Այդ պահին ականջին ինչ-որ աղիողորմ ծլվլոց հասավ:

- Մա ի՞նչ ձայն է, տեսնես՝ ո՞վ կլինի:

Այս խոսքերով՝ Քուչոն գնաց ձայնի կողմը ու գլուխը ճյուղերի արանքով թփի տակ խցկեց: Փշոտ ճյուղերի մեջ խճճված՝ մի փոքրիկ ծիտիկ սրտաճմլիկ ծլվլում էր և փորձում ազատվել, բայց ապարդյուն:

- Վայ, ինչ մեղք է, - հուզվեց Քուչոն, - երևի բնից է ընկել: Մի վախեցիր, ծիտիկ ջան, հիմա քեռի Քուչին քեզ կազատի,- ու սողոսկեց թավուտը:

- Ինչ էլ խիտ են աճել էս ճյուղերը, - փորձելով փշերին ուշադրություն չդարձնել՝ Քուչոն առաջ էր սողում, - մաշկս քերթեցին: Վա՛յ, մամա ջան:

Վերջապես ծիտիկին հասնելով, զգուշորեն փշերի միջից հանեց ու ազատ արձակեց:

- Ըհը՛, թռիռ մայրիկիդ մոտ: Երևի հիմա վախից գլուխը կորցրել է:

Ծիտիկին ազատ արձակելուց հետո Քուչոն ուշադրությունն ուղղեց քերծվածքներին:

- Անզգամը ինչ էլ սուր-սուր փշեր ունի: Արյունլվիկ եղա, - վերքերը լիզելով դժգոհեց նա:

Բայց Ծառի սաղարթի միջից մայր ճնճղուկի երջանիկ ծլվլոցը լսելով՝ ցավը մոռացավ ու, իրենից գոհ, մի ուրախ երգ սուլելով՝ փողոց վազեց:

Հազիվ էր Քուչոն հեռացել, երբ բնից դուրս եկավ Կոկոն ու սկսեց քակում հետ ու առաջ քայլել:

- Վայ, սա ի՞նչ է, - անհանգստացած բացականչեց ու ավելի մոտեցավ ճյուղին, որ լավ տեսնի, - ձեռք չտամ: Չգուշությունը լավ բան է: Չես իմանա՞ որտեղ ինչ վարակ կա:

Գրպանից խոշորացույցը հանելով՝ կռացավ ճյուղի վրա ու սկսեց զննել:

- Սա հո՛ մեր Քուչոյի բուրդն է: Ա՛յ քեզ բա՛ն: Տեսնես՝ էս ամառ օրով մազերն ինչո՞ են թափվում: Հիվանդ չլինի՞: Հա՛, էլի:

Ու ինքն իր խոսքերից սարսափած՝ Կոկոն գունատվեց ու վեր թռավ:

- Հաստատ էս նոր վարակիչ հիվանդություններից է, որ դեռ բուժումն էլ չկա: Վա՛յ, մամա ջան, Քուչոյից պիտի հեռու մնանք: Հեռու մնանք՝ քանի չենք վարակվել: Այ քեզ պատիժ: Բոլոր պարերը պարել էինք՝ մնացել էր վարակվելը:

Գրիգորը հենց նոր էր բակ դուրս եկել: Կոկոյի ողբը լսելով՝ անհանգստացած մոտ վազեց:

- Հը՛, Կոկո ջան, քեզ ի՞նչ պատահեց, հո չե՞ս հիվանդացել:

- Հա՛-հա՛-հա՛, - կեղծ ծիծաղեց Կոկոն, - Լավ ասեցիր: Չէ, բարեբախտաբար ես չեմ հիվանդացել: Հիվանդացողը ձեր սիրելի Քուչիկն է: Ա՛յ, թե ով է հիվանդացողը: Ա՛յ, թե ումից պիտի հեռու մնանք՝ քանի չենք վարակվել:

- Քուչոն հիվանդացե՞լ է, - մոտ վազելով, անհանգստացած հարցրեց Լուսինեն, - Հո հին-մին ոսկոր չի՞ կերել:

- Ի՞նչ իմանամ, - ուտերը թոթվեց Կոկոն, - ես մի բան գիտեմ, որ հիվանդությունը վտանգավոր է ու խիստ վարակիչ:

- Բան չեմ հասկանում,- ասաց Գրիգորն ու դիմեց Կոկոյին, - կարելի՞ է՝ սկզբից պատմիր՝ ի՞նչ ես իմացել:

- Ըհը, պատմեմ: Ինչ-որ անհայտ հիվանդություն է, որից մազերը թափվում են, ու հիվանդը քաչալանում է, - խորհրդավոր շշուկով պատասխանեց Կոկոն, թառեց ճյուղին ու գլուխը ձեռքերի մեջ առավ, իբր թե խիստ անհանգստացած է:

- Ինչե՞ր ես հնարում, որտեղի՞ց վերցրիր, թե մազերը թափվում են,- վրդովվոց Գրիգորը:

- Որտեղի՞ց վերցի, որտեղի՞ց վերցրի: Ես իմ առավոտյան մարզանքն էի անում, մեկ էլ ի՞նչ տեսնեմ՝ Քուչոյի բուրդը ծվեն-ծվեն թափվել ու կպել է թփերին, - և գլխով ցույց տվեց թփուտի կողմը, ուր ճյուղերին դեռ մի քանի ծվեն կպած մնացել էր:

- Սա ի՞նչ է, - ծվենները տեսնելով՝ զարմացավ Տիգրանը:

- Ասում եմ՝ խոսքերս հաստատող փաստացի ապացույց, եթե

կուզեք՝ հանցանշաններ, - պատասխանեց Կոկոն:

Երեխաները մոտեցան թփուտին ու սկսեցին ուշի-ուշով զննել Կոկոյի ասած հանցանշանները:

- Լավ, ասենք՝ Քուչոյի բուրդն իսկապես թափվում է, - գլուխը քարձրացնելով առաջինը խոսեց Տիգրանը, - ո՞վ չգիտի, որ բոլորի մազերն էլ երբեմն-երբեմն թափվում են, որ տեղը նորերն աճեն: Դա հո չի՞ նշանակում, թե հիվանդացել է:

- Ճիշտ է ասում, - Տիգրանին պաշտպանեց Գրիգորը, - Կոկո՛, մեղադրելու համար մի հատ ես: Չի կարելի առանց պարզելու, միանգամից մեղադրանքներ շարտել: Հիմա կգնամ ու Քուչոյին կհարցնեմ: Ու Գրիգորը գնաց շանը փնտրելու: Մյուսները նույնպես հեռացան՝ ամեն մեկն իր գործերով: Կոկոն մնաց մենակ՝ Ծառին թառած:

Շատ չէր անցել, երբ Քուչոն, ոտքերը հազիվ քարշ տալով, մոտեցավ Ծառին: Երևում էր, որ տրամադրությունը տեղը չի ու սաստիկ շփոթված էր:

- Չեմ հասկանում՝ երեխաներին ի՞նչ ճանճ է կծել: Ոչ որ հետս չի խաղում՝ հեռվից ինձ նկատում են, թե չէ՝ փախչում են: Ոնց որ բորոտ լինեմ, - բողբոջեց Կոկոյին: - Գոնե դու հետս խաղա:

- Էլ ի՞նչ կուզեիր, - փնչացրեց Կոկոն, - քեզ հետ խաղամ, վարակվեմ, հիվանդանոց ընկնեմ, սիրուն փետուրներս թափվեմ, հետո ի՞նչ եմ անելու:

- Գժվեցի՞ր, Կոկո՛, - Քուչոյի բերանը զարմանքից բաց մնաց, - ինչե՞ր ես դուրս տալիս:

- Ինչ որ լսեցի՛ր, - չէր հանդարտվում Կոկոն, - բոլորն էլ գիտեն, որ վարակիչ ես: Հեն է՛՝ ծվեններդ թփի փշերին կպած են:

- Վա՛յ, նոր հասկացա, - ուրախ հաչաց Քուչոն: - Չէ, Կոկո ջան, դա հիվանդությունից չի: Հիմա բացատրեմ: Մի ծիտիկ բնից ընկել էր ու թփերի մեջ խճճվել:

- Ի՞նչ ծիտիկ, - չհասկացավ Կոկոն:

- Ծիտիկ, էլի, ճնճողուկի ճուտիկ: Ես էլ ազատեցի, բայց փշերը ոտից գլուխ քերծեցին ու բուրդս պոկոտվեց:

- Չէ-չէ-մի՛: Է՞լ ինչ կմոզոնես: Փչան՛:

- Է՛հ, - տեսնելով, որ իր բացատրությունները լսող չկա, Քուչոն դառն հոգոց հանեց, - մի խոսքով՝ ես խաբանի գոհ եմ՝ ինչ էլ ասեմ՝ չեմ համոզի:

- Տեսա՞ր, ինքդ խոստովանեցիր, - հաղթական ձայնով բացականչեց Կոկոն, - ուրեմն քո հիվանդության անունը խարան է: Ճիշտն ասած՝ առաջին անգամ եմ լսում: Շատ է՞ վարակիչ:

- Է՛հ, Կոկո, Կոկո, - տխուր քմծիծաղ տվեց Քուչոն, - հետո էլ կասես՝ կարդացած եմ, աշխարհ տեսած եմ: Խարանը հիվանդություն չի, խարանը այն է, երբ անտեղի տեղը քեզանից փախչում են ու վատ են վերաբերվում:

- Ինձ խելք մի սովորեցրու: Սրա՛ն տեսեք: Վարակիչ ես, ասա՛ վարակիչ եմ, - փնչացրեց Կոկոն ու շուռ եկավ:

- Ախր, չես թողնում, որ բացատրեմ, - համբերությամբ զինվելով նորից փորձեց արդարանալ Քուչոն, - տես, ինքդ քեզ որոշել ես, որ վարակիչ եմ, հետո երեխաներին ես համոզել, որ վարակիչ եմ, ու բոլորը, հենց ինձ տեսնում են, վախեցած հեռու են փախչում: Բայց ես բողբոջվին էլ հիվանդ չեմ, ուղղակի դու ես ինքդ քեզ համոզել: Խարանը հենց դա է՝ որ ես քո վառ երևակայության պատճառով տուժում եմ: Հասկացա՞ր:

- Չհասկացա՛, - ասաց Կոկոն, որը, ճիշտն ասած, կարգին չէր էլ լսում. ի՞նչ լսեր, եթե իր համար ամեն ինչ պարզ էր:

- Օրինակ՝ պատկերացրու, որ մեկը թաքուն մեջքիդ պիտակ է կայրել, վրան գրված՝ «Խաբարբզիկ»...

- Մենակ փորձվեն, - վրդովվեց Կոկոն:

- ...Բայց դու չգիտես, - Կոկոյի վրդովմունքին ուշադրություն չդարձնելով՝ շարունակեց Քուչոն, - մենակ էն ես տեսնում, որ քեզ ոչ որ ոչինչ չի ասում, հենց մոտենում ես, խոսակցության կեսից բոլորը լռում են, հենց որ մեկին ասում ես՝ ինչու՞ ինձ հետ չեք խաղում, պատասխանում են՝ գնա կորի՛ր, խաբարբզիկ: Քեզ ո՞նց կզգաս: Էնպես որ, ես փչան չեմ, դա էլ է կարծրատիպ:

- Կարծրատիպը ինչ է: Տիպերը կարծր չեն լինում, թե չէ՝ ո՞նց կկայցնես թղթին, - Քուչոյի օգտագործած անհասկանալի բառերից Կոկոյի գլուխն սկսեց պտտվել:

- Լսիր, կարծրատիպը ո՛չ կարծր է, ո՛չ էլ տիպ, - համբերատար շարունակեց Քուչոն, - այլ այն, երբ մեկի մասին գլուխդ մի բան ես մտցնում ու հավատում ես: Օրինակ՝ հիմա գլուխդ մտցրել ես, որ ես փչան եմ, ու ինչ էլ ասեմ՝ չես հավատալու:

Քուչոյի բացատրություններից հոգնած՝ Կոկոն գլուխը թափահա-

րեց ու թռավ-զնաց, բայց ուսի վրայով նետեց.

- Ի՞նչ ես գլուխս տանում քո դեսից-դենից լսած անհասկանալի բառերով, ինձանից հեռու մնա, վարակի՛չ:

- Հիմա ի՞նչ անեմ, - հուսահատված ասաց Քուչոն ու տխուրտրտում նստեց Ծառի տակ, - ո՞նց բացատրեմ, որ վարակիչ չեմ:

- Երևի փորձես երեխաներին համոզել, որ սխալվում եմ, - խորհուրդ տվեց Ծառը:

- Հա, բայց ասողին լսող է պետք, իսկ Կոկոն բոլորին հավատացրել է, որ ես փչան եմ:

- Մի բան եմ մտածել, - պատասխանեց Ծառը, - մոտ արի՛ ասեմ, - ու, կռանալով, Քուչոյի ականջին ինչ-որ բան ստասփեց:

Հաջորդ առավոտյան, երբ բոլորը դեռ քնած էին, Կոկոյի բնից հանկարծ աղեկտուր ճիչ լավեց.

- Վա՛յ, անզգամներ, վա՛յ, չարագործներ, - մղկտում էր խեղճը, - հիմա ի՞նչ եմ անելու, ո՞նց եմ ապրելու, վա՛յ, վա՛յ, վա՛յ, իմ սիրուն զարդեր, սև օրվա միակ հույսս: Հիմա ո՞վ պիտի ծերությունս ապահովի, ո՞վ ինձ կփրկի ճակատագրի այս դաժան հարվածից:

- Գալիս ե՞ս՝ խաղանք, - իբր Կոկոյի ողբը չլսելով, պոչը թափահարելով մոտ վազեց Քուչոն:

- Դու էիր պակաս, վարակիչ, իմ դժբախտությունն ինձ հերիք է, զնա կորի՛ր, - պատասխանեց Կոկոն ու շարունակեց ողբը, - իմ սիրուն, աննման զարդերը, իմ փայլփլուն գանձիկները:

- Չլինի՞ զարդերդ ես կորցրել, - Քուչոն ականջը բորեց, - Վայ թե ես գիտեմ, - ասաց, - գիշերը մի կասկածելի կերպարանք եմ տեսել՝ մեծ պարկը ուսին: Երևի հենց նա էլ գողացած լինի: Կուզե՞ս՝ գտնեմ:

- Իհարկե կուզեմ, իմ ասպետ, - միանգամից իր վախը մոռացած, շողոքորթեց Կոկոն, - բայց կկարողանա՞ս, որ...

- Յա՛, ինձ նո՞ր ես ճանաչում: Գող բռնելն իմ մասնագիտությունն է, - հպարտ ասաց Քուչոն ու անցավ գետինը հոտոտելուն:

Կոկոյի վայնասունը բոլորին արթնացրել էր, ու երեխաները հերթով բակ դուրս եկան: Լսելով, թե ինչ է պատահել, սկսեցին իրենց ընկերուհուն մխիթարել: Հանկարծ թփուտի մոտից լավեց Քուչոյի հաղթական ճիչը.

- Ուռռասաա՛:

- Ի՞նչ, ի՞նչ պատահեց, - չհասկացավ Տիգրանը:

- Գտա, Կոկոյի զարդերը գտա, - բացատրեց Քուլչոն, - տեսե՞ք՝ թփուտում էին թաքցրած:

Երջանկությունից գլուխը կորցրած՝ Կոկոն իրեն նետեց Քուլչոյի ցույց տված կողմը, փշերի միջով սողոսկեց, դուրս բերեց նվիրական զարդատուփը և կրծքին սեղմելով, հուզված մոտեցավ Քուլչոյին, որ շնորհակալություն հայտնի:

Բայց Քուլչոն հեռու փախավ ու կոպիտ ասաց.

- Ինձ չնոտենա՛ս, տե՛ս՝ փետուրներդ թափվել են: Ի՞նչ իմանամ՝ ի՞նչ վարակիչ հիվանդություն ունես: Վայ թե՛ թռչնագրիպ է:

Անսպասելիությունից Կոկոն պապանձվեց ու կտուցը բաց մնաց: Չարմացած նայեց չորսկողմն ու տեսավ, որ թփուտի փշերին ամենուր իր փետուրներն էին կպել:

- Վա՛յ, հիմա էլ Կոկոն հիվանդացավ, - անհանգստացավ Լուսինեն:

- Ինչե՞ր եք հնարում, է՛, - ուշքի գալով առարկեց Կոկոն, - ես ոչ մի թռչնագրիպ էլ չունեմ:

- Բա ինչու՞ են փետուրներդ թափվում, - հարցրեց Անին:

- Ը՛հ, ախր, թփերը փշփշոտ են, դրա համար էլ փետուրներս պոկվել՝ կպել են վրան, - փորձեց արդարանալ Կոկոն:

- Դե, եթե դու հիվանդ չես, ուրեմն Քուլչոն էլ հիվանդ չի, ուրեմն ճիշտ էր ասում, - Կոկոյին ընդհատելով՝ եզրակացրց Տիգրանը:

- Տեսա՞ք, - ուրախ-ուրախ պոչը թափահարեց Քուլչոն, - բա որ ասում էի՛...

- Տեսա՞ր, Կոկո: Չի կարելի առանց ամեն ինչ իմանալու եզրակացություններ անել, - ասաց Գրիգորը, - իզուր տեղը խեղճ Քուլչոյին նեղացրիր: Սրանից հետո սրան-նրան մեղադրելուց առաջ նախ հարցրու՝ ինչ է պատահել, ամեն ինչ պարզիր՝ նոր:

Կոկոն հասկացավ, որ մեղավոր է, գլուխը կախեց ու քթի տակ մրթմրթաց.

- Դե լավ, - մեծահոգաբար ասաց Քուլչոն ու պոչն ուրախ թափահարեց, - անցածն անցած է: Ավելի լավ է՝ եկեք խաղանք:

Հաճուրթյան բաժակը



153

Ըստ **Իռադա Սայյաի** համանուն սցենարի, Ադրբեջան
Թեմա՝ Հանդուրժողականություն

Ա

յո նույն ժամանակ ընկերները բակում ձանձրույթից մեռնում էին. նստել էին Ծառի ստվերում ու նույնպես մտածում էին, թե ինչ անեն, որ ամառային արձակուրդներն այսքան ձանձրալի չանցնեն: «Էս Տիգրա՞նն ուր կորավ», - մտածում էին նրանք, մեկ էլ Տիգրանենց լուսամուտից մի թղթե սավառնակ դուրս թռավ և սահուն վայրէջք կատարեց ճիշտ Լուսինեի գլխին: Պարզ էր. Տիգրանը մի նոր բան է մտածել: Անհամբերությունից շունչները պահած՝ սավառնակը բացեցին ու ի՞նչ կարդան. «Մենք ամերիկյան անտառների քաջարի զինվորներն ենք»: Ուռա՛, նոր հետաքրքիր խաղ են խաղալու:

Էլ առանց երկար-բարակ ձգձգելու, գործի անցան: Որոշեցին նախ քաջության ու հնարամտության փորձություն անցնել: Դրա համար ամենից հարմարը Քուչոյի բույնն էր. իբր՝ քարանձավ է, իսկ Քուչոն՝ քարանձավում բույն դրած ահարկու վայրի ցուրը՝ բիզոնը:

Վիճակ զցեցին ու պարզվեց, որ առաջինը Տիգրանն է փորձություն անցնելու:

Հետո փորձություն անցնելու հերթը Լուսինեինն էր:

- Օգնե՛ք, փրկե՛ք, - աղեկտուր ճիչ արձակեց նա ու քարանձավից դուրս ցատկեց: Պարզվեց, որ ոչ մի վայրի բիզոն էլ չկար, այլ Քուչոն էր, որը վախեցել էր, թե իր բույնը գող է մտել:

- Ի՞նչ գող, ի՞նչ բան, - նրան հանգստացրեց Գրիգորը, - մեր քաջարի զինվորն էր:

Քուչոն, որին ոչ ոք ոչինչ չէր պատմել, ապշած ընկերներին նայեց, թե՛ ինչե՞ր են խոսում:

- Ուզում եք ասել, որ պատերա՞զմ է, - տարակուսեց նա:

- Չէ, - հանգստացրեց Գրիգորը, - ի՞նչ պատերազմ, ա՛յ Քուչո: Տիգրանը նոր խաղ է հնարել՝ «քաջարի զինվոր-քաջարի զինվոր», մենք էլ խաղում ենք:

- Գիտե՞ք ինչ, - ասաց Քուչոն, - եկեք՝ ես մտնեմ բույնս, իբր թե՛ ոսկորս են փրկում Բիզոնի ճիրաններից: Լա՞վ:

- Չէ, - չհամաձայնեց Գրիգորը, - քեզ չենք խաղացնում: Ե՞րբ ես տեսել՝ զինվորը չորս ոտանի լինի:

Քուչոն շատ տխրեց: Իսկ Լուսինեն մտածեց, որ ճիշտ չի ոտքերի

թվի պատճառով ընկերոջը չխաղացնելը, բայց ձայն չհանեց:

- Համաձայն եմ, - փոխարենը ասաց Անին, - չորս ոտանի զինվոր չի լինում:

- Հետն էլ՝ բրդոտ-փոշոտ, - կրակին յուղ լցրեց Տիգրանը:

- Ես փոշոտ չեմ, - նեղացած ասաց Քուչոն:

- Բա չէ՞ ես եմ փոշոտ, - պատասխանեց Տիգրանը: Ճիշտն ասած՝ հոգու խորքում Տիգրանն էլ գիտեր, որ լավ բան չի անում: Քուչոն ընկեր էր, չէ՞: Ընկերներին հո ոտքերի թվո՞վ չեն ընտրում:

Նույն բանը նույն ժամանակ Անիի ու Գրիգորի մտքով էլ անցավ, բայց նրանք էլ լռեցին: Վերջիվերջո, ճիշտ է՝ հնդկացի զինվորները ոչ բրդոտ էին, ոչ էլ չորքոտանի:

Իսկ Քուչոն մի երկու բուպե էլ ոտքը կախ գցեց, հետո հուսահատ հենացավ:

- Հենց որ ուրիշ խաղ խաղանք, անպայման քեզ կկանչենք, - նրա հետևից բղավեց Անին, որ գոնե մի քիչ խիղճը հանգստացնի:

- Խոստանում ենք, - ավելացրեց Տիգրանը՝ երևի նույն պատճառով:

- Բարև երկու ոտանի քաջարի զինվորներին, - իր կարծիքով՝ հնդկացու նման ընկերներին ողջունեց Կոկոն, - ես ուզում եմ քաջարի զինվոր խաղամ:

- Չէ, Կոկո՛, ձեռքերիդ փոխարեն թևեր եմ:

- Հետո՞ ինչ, - հիմա էլ Կոկոն չհասկացավ:

- Հետո էմ, որ ե՞րբ ես տեսել՝ զինվորը թռչի:

- Ես էլ չեմ թռչի:

- Չէ, չեղավ, Կոկո, մենք ձեռավոր զինվորներ ենք, ոչ թե՛ թևավոր:

- Լավ: Չփոշմանե՛ք, - նեղացած ասաց Կոկոն: Քիչ էր մնում՝ վիրավորանքից պայթեր: «Դրանց տեսեք,- մտածեց նա,- շատ են երևակայում: Դե լավ, ոչինչ, մի օր մի բան կխնդրեն, չէ՞»:

Այսպես նեղացած, քթի տակ ընկերների հասցեին վիրավորանքներ փնթփնթալով, քայլեց դեպի բակի հեռու անկյունը, մեկ էլ զգաց, որ ոտքն ինչ-որ փափուկ բանի կպավ:

- Ճիշտ ես անում, քայլիր վրայովս, տրորիր, - լավեց Քուչոյի ձայնը, - հիմա ես ոչ մեկին պետք չեմ:

- Վայ, Քուչո ջան, - ընկերոջ վիշտը տեսնելով՝ ավելի հուզվեց Կոկոն, - շատ մի տխրիր՝ մենակ չես: Պարզվում է՝ ես էլ եմ էստեղ ավելորդ: Պատկերացնո՞ւմ ես, ասացին՝ թռչողներին չենք խաղացնում: Ես

մեղավոր եմ, որ թևեր ունեմ: Դրա համար էլ անունս թռչուն է, - ու չդիմացավ՝ աչքերից արցունքներ հոսեցին:

- Լաց մի լինի, - փորձեց մխիթարել Քուչոն, չնայած ինքն էլ հագիվ էր լացը զսպում: - Հերիք լացես, - Կոկոյի ողբն ընդհատեց Քուչոն, - ես էլ մեղավոր չեմ, որ բրդոտ եմ ու չորս ոտանի:

Կոկոն արցունքները սրբեց, մի բուռ մտածեց, հետո ասաց.

- Գիտե՞ս ինչ որոշեցի. արի, մենք էլ մեզ համար առանձին զինվոր-զինվոր խաղանք:

- Ըհը, - Կոկոյի խոսքերից Քուչոն ոգևորվեց, - նետ-աղեղով կկրակենք, հետո...

- Հետո տաք-տաք շոկոլադ կխամենք, - առաջարկեց Կոկոն, - ես մի տեղ կարդացել եմ, որ շոկոլադն առաջինը հնդկացիներն են պատրաստել: Արի՛, գնացինք շոկոլադ խամելու. տատիկիս ձևով կպատրաստեմ: Էնքան համով է:

- Գնացինք, - պոչը թափահարեց Քուչոն ու վազեց Կոկոյի հետևից: Երկուսով շտապեցին Ծառի կողմը՝ դեպի Կոկոյի բույնը:

- Էդ ու՞ր եք էդպես շտապում, - հարցրեց ընկերներին Ծառը, - հո բան չի՞ պատահել:

- Ինչի՞ց իմացար, - Կոկոն ու Քուչոն զարմացած իրար նայեցին, հետո որոշեցին ամեն ինչ պատմել:

Ճաշից հետո երեխաները նորից բակ իջան ու ի՛նչ տեսնեն. Ծառի բարձր ճյուղին՝ Կոկոյի բնում կողք-կողքի թառել են Կոկոն ու...Քուչոն և, կարծես թե՛ ի՛նչ է պատահե՞լ, որ: Իրենց համար կակաո են խմում:

- Հե՛յ, - ձայն տվեցին զարմացած երեխաները, - ինչու՞ եք Ծառին թառել:

- Չեք տեսնու՞մ՝ խաղում ենք: Մենք քաջարի հնդկացի զինվորներ ենք ու կակաո ենք խմում, որ մեր ուժերը վերականգնենք:

- Մեզ էլ կխաղացնե՞ք, - խնդրեց Լուսինեն. կակաոն նրա ամենասիրած ըմպելիքն էր:

- Իհարկե, - գլխով արեց Կոկոն, բայց իսկույն միտքը փոխեց, - այսինքն, իհարկե՛ ոչ: Մեր ցեղի զինվորները պիտի գեղեցիկ լինեն. ասենք՝ փետուրներ ունենան կամ գոնե՛ բրդոտ մորթի:

- Տեսեք, ըհը՛, - ասաց Տիգրանը՝ գլխի փետրափունջը ցույց տալով, - ես փետուրներ ունեմ:

- Դրանք հաշիվ չեն, - առարկեց Կոկոն, - դրանք վրադ չեն աճում:

Գոնն փոչոտ լինեիր:

- Մայրիկս ասում է՝ հայրիկս փոչոտ է, - համոզելու մի փորձ էլ արեց Տիգրանը:

- Դե, թող ինքն էլ գա:

- Հերիք վիճեք, - չհամբերեց ու մեջ մտավ Ծառը, - ձեզ որ լսեմ, ուրեմն ինձ հետ երբեք ոչ ոք չի խաղալու. ո՛չ ոտքեր ունեմ, ո՛չ ձեռքեր, ո՛չ փետուրներ, համ էլ՝ ոտից գլուխ կանաչ եմ: Չեք հասկանու՞մ, որ բոլորն էլ ինչ-որ բանով իրարից տարբեր են: Տարբեր բաներ են սիրում, տարբեր կերպ են մտածում, տարբեր երազներ ունեն: Դա ընկերությանը չի խանգարում: Թեկուզ՝ մեկը պտավոր կամ գծավոր կամ քթավոր կամ էլ՝ գունավոր լինի: Հակառակը՝ ավելի հետաքրքիր է:

- Ծառը ճիշտ է ասում, - գլխով արեց Քուչոն, - գիտե՞ք, ինչ վիրավորական է, երբ քեզ քշում են, որովհետև իրենց նման չես: Մեփական մորթուս վրա եմ զգացել:

- Տեսեք՝ ոչ մեկս էլ մյուսիս նման չի, - ուշադիր ընկերներին զննելուց հետո զարմացած հայտարարեց Անին, - այսինքն՝ ինչ-որ բաներով նման ենք, ինչ-որ բաներով՝ տարբեր: Օրինակ՝ Տիգրանն ու Լուսն քույր ու եղբայր են, չէ՞, բայց հեչ իրար նման չեն:

- Կոկոն Քուչոյին նման չի, - մտազբաղ ասաց Գրիգորը:

- Քուչոն ինձ նման չի, - նրա միտքը շարունակեց Լուսինեն:

- Ու, համ էլ՝ նման ենք, որովհետև ընկերներ ենք, - եզրակացրեց Տիգրանը:

- Լավ ստացվեց, չէ՞, - ուրախացավ Կոկոն, որին, ճիշտն ասած՝ մի բան էր հետաքրքրում. որ իրեն էլի բոլորը սիրեն ու չասեն՝ թռչուններին չենք խաղացնում:

Երեխաները ժպտացին, համաձայնվեցին ու նույնիսկ բոլորը հերթով գրկեցին Կոկոյին: Հետո ինչ-որ մեկն առաջարկեց, որ բոլորը Ծառը բարձրանան, ու Կոկոն իրենց էլ կակաո հյուրասիրի: Իսկ երեկոյան, ամբողջ օրը խաղալուց հոգնած, բայց երջանիկ, նրանք տները գնացին, բայց պայմանավորվեցին, որ հաջորդ օրն անպայման նորից կշարունակեն խաղը:

- Գիտե՞ս, մայրիկ, - ասաց Տիգրանը, երբ մայրիկը եկավ բարի գիշեր ասելու, - հեչ կարևոր չի՝ ուրիշները քեզ նմա՞ն են, թե՞ չէ: Նույնիսկ, եթե տարբեր են, ավելի հետաքրքիր է ընկերություն անելը: Ո՞նց առաջ չէի հասկանում:

Աստղ



158

Ըստ **Թեա Հուրգայաի** համանուն սցենարի, Վրասսան
Թեմա՝ **Հանդուրժողականություն**

-Վա՛յ, - տեղից վեր ցատկելով՝ ծորտաց Կոկոն, - Քուչո՛ւ, վրադ ի՞նչ ընկավ:

- Ո՞վ, ի՞նչ, ու՞մ վրա, - չհասկացավ Քուչոն, - ինչե՞ր ես հնարում: Որ վրաս բան ընկներ՝ չէի՞զգա:

- Բայց, ախր, աչքովս տեսա, - պնդեց Կոկոն, թռավ, նստեց Քուչոյի գլխին ու թևերով ականջները կողք տարավ: - Ըհը՛, տե՛ս, այ քեզ բա՛ն, հա, էլի, աստղ է: Տեսա՞ր, երկնքից գլխիդ աստղ է ընկել:

Քուչոն, ուրախանալու փոխարեն, տխրեց: Նա լսել էր, որ եթե աստղ ընկնելուց մտքումդ ցանկություն պահես, անպայման կկատարվի: «Թու՛, ափսոս, ո՞նց չհասցրեցի մտքումս բան պահել», - մտածեց նա:

Մի քանի րոպեից բակում արդեն բոլորը գիտեին, որ Քուչոն աստղ է գտել: Քուչոն սրանից նրան էր վազում ու պոչը թափահարելով ոգևորված պատմում՝ ամեն անգամ նորանոր մանրամասներ ավելացնելով.

Գրիգորն աստղը զգուշորեն ձեռքն առավ, նայեց աստղին, նայեց Քուչոյին ու զարմացած ասաց.

- Հա, էլի, իսկական է: Տեսե՞ք՝ ո՛նց է շողշողում: Հենց կաչում եմ, սկսում է լույս տալ:

- Բա ի՞նչ էիր կարծում, - հաստատեց Քուչոն, - իհարկե իսկական է: Հաստատ այլմոլորակայինների ձեռքից ընկած կլինի: Խեղճերը, երևի, հիմա փնտրում են ու չեն հասկանում, թե ուր կորավ:

Այս մտքից Քուչոն շատ տխրեց. պատկերացրեց, թե ոնց է ինչ-որ մի այլմոլորակային հեռավոր տիեզերքում շվարած չորս կողմը նայում ու չի կարողանում իր աստղը գտնել:

- Գիտե՞ս ինչ, - Քուչոյի ենթադրությունից ոգևորված՝ ասաց Գրիգորը, - ուրեմն, ուր որ է, կարող է մեր բակ գան՝ աստղի հետևից:

- Վա՛յ, ինչ լավ կլինի, - հրճվեց Լուսինեն ու ծափ տվեց, - ես կյանքումս երբեք այլմոլորակային չեմ տեսել, բայց որ իմանաք՝ ո՛նց եմ երազում ծանոթանալ:

Տիգրանը կռացավ, մի քանի րոպե հիացած աստղին նայեց, հետո թախանձագին խնդրեց Գրիգորին.

- Կտա՞ս, մի քիչ էլ ես պահեմ:

- Գժվել ե՞ս, ինչ է, - ձեռքերը փախցնելով ասաց Գրիգորը, - բա որ ցա՞ծ գցես: Չէ, չի կարելի: Համ էլ, դու գնա՝ ֆուտբոլ խաղա, հա՞:

- Չեմ գնա: Ես ումի՞ց եմ պակաս, - նեղացավ Տիգրանը, - ես էլ եմ ուզում այլմոլորակայինի հետ ծանոթանալ:

Պատասխանի փոխարեն Գրիգորը ոտից-գլուխ չափեց Տիգրանին. այդ ի՞նչ անհասկանալի գլխարկ էր գլխին, որ ավելի շատ Կոկոյի հին բնին էր նման, քան գլխարկի:

Գրիգորը մտածեց, որ երևի պետք չէր ընկերոջը նեղացնել ու փորձեց իրավիճակը շտկել.

- Դու մի նեղացիր, բայց հյուր ընդունելու համար մի քիչ լավ չես հագնված: Էդ գլխարկդ էլ մի տեսակ...

- Գե՛- դե՛- դե՛, - ընդհատեց Կոկոն, - խոսքերիդ հետևիր: Գլխարկը, իմիջիայլոց, ես եմ նվիրել:

- Հա, էլի, - փոթկաց Անին, - ես էլ եմ ասում՝ աչքիս Կոկոյի հին բնին է նման:

- Թո՛ւ, անճաշակներ, - վիրավորվեց Կոկոն, - դե արի՛՝ սրանց բացատրիր, որ ձեռքի աշխատանք է: Սրանք ու՛ր, ձեռքի աշխատանքից բան հասկանալն ու՛ր:

- Ձեռքի աշխատանք-մեռքի աշխատանք չգիտեմ, բայց որ Տիգրանի տեսքը նորմալ մարդու նման չի, դա հաստատ եմ ասում: Այլմոլորակայինները որ տեսնեն, մեր մասին ի՞նչ կմտածեն:

Տիգրանը գլխիկոր լսում էր ընկերներին ու մտածում, որ այս ամենը, երևի, երազ է: Հո չի՞ կարող, որ մարդու տեսքի համար ընկերներն էլ չուզենան հետն ընկերություն անել: Լուսինեին էլ այս խոսակցությունը դուր չէր գալիս, ու հասկացավ, որ պիտի եղբորը պաշտպանի:

- Բա եղա՞վ, հա՞, - միջամտեց նա, բայց դեռ չէր հասցրել խոսքը վերջացնել, երբ Քուչոյի տագնապած բացականչությունն ընդհատեց նրան:

- Վայ, մամա ջան - ասաց Քուչոն, - տեսեք՝ աստղը հանգել է, էլ լույս չի տալիս:

Աստղն, իսկապես, էլ լույս չէր տալիս. խամրել ու հանգել-սառել էր:

- Գիտե՞ք, - առաջինը քար լռությունը խախտեց Քուչոն, - իմ կարծիքով, մենք երևի մի վատ բան ենք արել, դրա համար էլ հանգել է:

- Բայց ի՞նչ վատ բան, - տարակուսեց Գրիգորը: Նա շատ էր

հուզվել, որ աստղն էլ չէր շողշողում, - ոնց որ թե ամբողջ ժամանակ նույն տեղում կանգնած ենք եղել:

- Վատ բան անելու համար հեչ էլ պետք չի տեղից շարժվել: Մենք տեղում կանգնած չէի՞նք, որ շատ լավ էլ Տիգրանին նեղացրինք: Ո՞վ է ասում, որ բոլորը պիտի իրար նման լինեն: Բա տեսքի համար մարդուն կվիրավորե՞ն:

Քուչոյի խոսքերից բոլորը մտքերի մեջ ընկան, նույնիսկ Տիգրանը: Նա հիշեց, որ ինքն էլ մի անգամ մի նման բան էր արել՝ Քուչոյին ու Կոկոյին չէր խաղացրել, որովհետև իրեն նման չեն:

- Ինչ ամոթ է, - գլուխը կախեց Գրիգորը, հետո մոտեցավ Տիգրանին, ժպտաց ու աստղը մեկնեց նրան, - ամեն մարդ էլ իրավունք ունի ուրիշներից տարբեր լինելու կամ էլ իր ճաշակով հագնվելու:

Հենց այս խոսքերի վրա, աստղը նորից սկսեց շողշողալ՝ առաջվանից էլ պայծառ: Իսկ հետո, երեխաների ապշահար աչքերի առաջ սկսեց վեր բարձրանալ, ավելի ու ավելի, հետո շլացուցիչ առկայծեց ու աներևակայելի արագությամբ վեր սլանալով անհետացավ երկնքի կապույտում: Երևի գնաց իր այլմոլորակային բարեկամին գտնելու: Երեխաները, շունչները պահած, նայում էին նրա սլացքին, ու հանկարծ մի թեթևություն պատեց բոլորին. նրանք պատկերացրին, թե ինչպես հեռավոր տիեզերքում այլմոլորակայինը նորից գտնում է իր կորած բարեկամին, որն իրականում չէր կորել, այլ եկել էր երեխաներին մի շատ կարևոր բան հասկացնելու: Քուչոյին նույնիսկ մի պահ թվաց, թե երկնքում տեսնում է այլմոլորակայինի երջանիկ դեմքը, որ ժպտում է իրեն ու աչքով անում:

Ամօիկը



162

Ըստ **Բերնարդինե Սարգսյանի** համանուն սցենարի, Հայաստան
Թեմա՝ **Միջնակուրային փոխընթաց**

Ամեն ինչ սկսվեց այն բանից, որ հայրիկը մի նկար գնեց: Պայծառ կապույտ երկնքում մի պստիկ ամպի քուլա էր նկարված: Հայրիկին, չգիտես ինչու, թվաց, թե ամպիկն իրեն է նայում ու ժպտում: Չդիմացավ՝ գնեց ու թևի տակ դրած՝ ուրախ-ուրախ տուն բերեց:

Իսկ այդ նույն ժամանակ երեխաները բակում խաղում էին: Փուչիկը վեր-վեր էին զգում ու հետևում, թե ինչպես է ճախրում պայծառ կապույտ երկնքում:

- Հըրը էն ամպիկին նայեք, - հանկարծ ասաց Տիգրանն ու մատը վեր տնկեց, - ա՛յ, այնտեղ: Ոնց որ ուղտ չլինի՞:

- Ի՞նչ ուղտ, - ամպիկն ուշադիր գննելով՝ ասաց Գրիգորը, - Ու՞ղտ որտեղից տեսար:

- Վա՛յ, - զարմացավ Տիգրանը, - լավ նայիր, տես՝ ինչ ծիծաղելի մոռթ ունի: Տեսա՞ր: Մամա՛ ջան, - Տիգրանը ձևացրեց, թե վախենում է, - ոնց որ իսկական: Հանկարծ վրաս չթքի՞:

Անին, համենայն դեպս, մի կողմ քաշվեց. ի՞նչ իմանաս, թքեց՝ թքեց: Գնաց, կանգնեց Ծառի հետևն ու սկսեց ամպիկը գննել: Ծիշտն ասած՝ ոչ մի ուղտ էլ չտեսավ: Իրեն թվաց, թե ամպիկը ճիշտ ու ճիշտ ութոտնուկի է նման: Այ քեզ բա՛ն, մտքում ծիծաղեց Անին, ո՞վ է տեսել, որ նույն ամպը մեկի աչքին ուղտ երևա, մյուսի աչքին՝ ութոտնուկ: Ու այդ մտքից զվարճացավ: Նորից վեր նայեց. հա՛, էլի, ութոտնուկ էր: Որոշեց իր տեսածը Տիգրանին պատմել:

Բայց Գրիգորը նրանից առաջ անցավ:

- Շատ կներես, - ասաց Տիգրանին, - բայց ամպիկը ավելի շուտ ոնց որ կրիա լինի: Հըրը նայի՞ր...

«Լավ էր, չէ՞,- նորից մտքում զարմացավ Անին: - Տիգրանը ուղտ է տեսնում, ես՝ ութոտնուկ, Գրիգորը՝ կրիա: Ինչ հետաքրքիր խաղ է»:

Իսկ Գրիգորը շարունակում էր իրենը պնդել.

- Տես՝ գլուխը դուրս է հանել, թաթերը առաջ է տնկել, ոնց որ տուն շտապի:

- Ասե՞մ՝ ինչու է շտապում. որ բոլորին պատմի, թե ոնց իրեն ուղտի տեղ դրեցիր, - ասաց Անին:

Հիմա էլ Գրիգորը ծիծաղեց, իսկ Տիգրանը նեղացած հոնքերը

կիտեց:

- Մեկ է՝ ուղտ է, - գայրացած պնդեց նա, - չե՞ք համոզի:

- Կրիա է, - ասաց Գրիգորը, մեկ էլ՝ գգը՝ մփ՝ փուչիկը պայթեց:

Ո՞նց չպայթեր, եթե Տիգրանն իր ամբողջ քաշով վրան էր նստել:

- Էդքան էլ ճիշտ, - պայթյունը յուրովի բացատրեց Գրիգորը:

- Աչքիդ է երևացել, - պատասխանեց Տիգրանն ու կովովի դիրք ընդունեց. նա միշտ պատրաստ էր իր կարծիքը բռունցքներով պաշտպանել:

Անին մի քիչ վախեցավ. նա բոլորովին չէր ուզում, որ տղաները կռվեն: Ախր, ո՞նց չեն հասկանում, որ հավես է, երբ մարդիկ նույն բանին նայում են ու տարբեր բաներ են տեսնում:

- Ի՞նչ եք արլորացել, - փորձեց ընկերներին հանգստացնել նա, - ի՞նչ վատ բան կա, որ մեկը ուղտ է տեսնում, մեկը՝ կրիա: Դրա համար կկռվե՞ն:

Բայց տղաները նրան բանի տեղ չդրեցին ու շարունակեցին բղավել՝ կրիա է, չէ՛ ուղտ է, չէ՛ կրիա է, չէ՛ ուղտ է...

- Ի՞նչ եք ձայններդ գլուխներդ գցել, - գլուխը բնից դուրս տնկեց Կոկոն: - Չեք թողնում՝ մարդ հանգստանա:

Երեխաները լռեցին:

- Կոկո՛ ջան, չգիտեինք, որ հանգստանում ես, - ներողություն խնդրեցին նրանք:

- Էդ ինչի՞ մասին էիք վիճում:

Տղաները ձև արեցին, թե չեն լսում, ու Անին նրանց փոխարեն պատասխանեց.

- Վիճում էին, թե ա՛յ էն ամպիկը ինչի է նման:

Կոկոն աշխուժացավ. նա շատ էր սիրում սեփական կարծիքը հայտնել:

- Բախտներդ բերեց, - հանդիսավոր ձայնով հայտարարեց նա ու բնից դուրս եկավ:

Նա գլուխը վեր տնկեց, մի քանի բռայե ուշադիր նայեց ամպիկին, հետո հայտարարեց.

- Տեսնում եմ՝ շատ հիմար տղաներ եք...

Երեխաներն այս բանը չէին սպասում: Ջարմանքից բերանները բաց մնաց: Իսկ Կոկոն, իր թողած տպավորությունից ավելի ոգևորված, սկսեց բացատրել.

- Ուրեմն, եթե չգիտեք՝ իմացեք. ամպիկները օդ բարձրացած քուլաներ են: Գրանք անձրևից են ստացվում, թե՞ հակառակը՝ անձրևն է դրանցից ստացվում, - մի պահ շփոթվեց նա, բայց իրեն չկորցրեց ու շարունակեց: - Ամպիկների բանուգործն ի՞նչ է՝ երկնքով լողալ, կամ թռչել, կամ...: Լսե՛ք, ձեզ չի թվո՞ւմ, որ ձեր ամպիկը ոնց որ իմ պատկերը լինի: Հա, էլի՛: Ինչ էլ սիրունն է:

Անին ու Գրիգորն ապշեցին, ու բերանները ջուր առած՝ չգիտեին՝ ինչ ասեին: Իսկ Տիգրանը զարմանքից աչքերը չռեց: Հետո ուշքի եկավ ու սկսեց հռչոսալ.

- Վա՛յ, մեռա, - ծիծաղից գկռտալով ասաց նա, - Կոկո՛, չլինի՞, գիտես՝ ուղտի նման ես: Հա՛-հա՛-հա՛: Թևերիդ արանքից էլ՝ հե՛ն է, սապատ է աճում: Ա՛յ երևակայություն եմ ասե՛լ:

- Որ ասում եմ՝ հիմար ե՞ք, - Կոկոյի համբերությունը հատեց, - աչքներդ լավ բաց արեք. բա ինձ նման չի՞:

- Չէ, - ասաց Տիգրանը, - հեչ նման չի: Ավելի շուտ կհավատամ, որ կրիայի է նման, քան՝ քեզ:

- Չլինի՞ զայրույթդ փուչիկի մեջ ես ուզում դատարկել, - ծիծաղեցին նրանք:

Հենց այդ պահին Լուսինեն էլ բակ եկավ ու մոտեցավ ընկերներին: Սրանք սկսեցին ծիծաղելով պատմել պատահածը, հետո հարցրին.

- Դու՞ ինչ կասես. ամպիկը կրիայի՞ է նման, ուղտի՞, թե՞ ութոտնուկի:

- Եթե պատկերացնենք, որ երկինքը անապատ է, - ամպիկին նայելով ասաց Լուսինեն, - ոնց որ՝ ուղտի է նման:

Հա, էլի, ճիշտ որ, մտածեց Գրիգորը՝ ամպին նայելով: Նրան թվաց, թե ինքն էլ տեսավ Տիգրանի ասած ուղտին:

- Բայց եթե պատկերացնենք, որ սապատը սապատ չի, այլ կրիայի գրահ՝ ուրեմն՝ կրիայի է նման, - շարունակեց Լուսինեն:

Այ քեզ բա՛ն, զարմացավ Տիգրանը, որովհետև ինքն էլ տեսավ՝ եթե ձախից աջ նայես՝ իսկապես կրիայի է նման: Իսկ Լուսինեն շարունակում էր.

- Հիմա փորձե՛ք ա՛յ, էստեղից նայել: Պատկերացրեք, թե երկինքը ծով է: Տեսա՞ք՝ ոնց որ ութոտնուկ լինի:

Անին ժպտաց. ինքը միշտ էլ գիտեր, որ Լուսինեն խելոք աղջիկ է: Ու մտածեց, որ երբեմն կարելի է նույն բանի մասին տարբեր կարծիք-

ներ ունենալ ու բանից պարզվի, որ բոլորն էլ ճիշտ են:

- Ի՞նչ ես կարծում, մի քիչ էլ մեր Կոկոյին նման չի՞, - հարցրեց Անին՝ հույս ունենալով, թե Լուսինեն «այո» կասի: Ախր, ինչու՞ պիտի հիմար բաների համար իրարից նեղացած մնային:

- Չէ, - գլուխը թափահարեց Լուսինեն, - Կոկոյին նման չի: Բայց ոչինչ, Կոկո՛, ուրիշ անգամ անպայման նման կլինի, - փորձեց մխիթարել նեղացած մի կողմ քաշված ընկերուհուն:

Այս խոսքերի վրա Կոկոն թևերը պարզեց ու երկինք ճախրեց:

Հանկարծ՝ ո՛վ զարմանք. երեխաները տեսան, որ, իսկապես, ամպիկի ուրվագիծը ճիշտ և ճիշտ Կոկոյի ձևն ունի: Բերանները բաց, հմայված՝ չէին կարողանում աչքները երկնքից կտրել:

Անին էլի մտածեց, որ լավ չի, երբ ընկերներն իրար նեղացնում են, ինչ է՝ թե տարբեր կարծիքներ ունեն: Եթե բոլորը միշտ մի կարծիք ունենային, շատ ձանձրալի կլիներ, չէ՞:

Հենց այս պահին էլ, նկարը թևի տակ դրած, հայրիկը բակ մտավ: Երեխաներին տեսնելով՝ որոշեց նրանց էլ ցույց տալ, թե ինչ հաջող գնում է կատարել:

- Տեսեք, - ասաց նա, - լավն է, չէ՞: Ամպիկը մի քիչ փղի նման չի՞:

Երեխաները ծիծաղեցին:

- Ըհր, նման է, - համաձայնվեցին նրանք: Հայրիկն ուրախացավ:

- Բայց մի քիչ էլ ուղտի է նման, - ասացին նրանք: Հայրիկը զարմացավ:

- Մի քիչ էլ՝ ութոտնուկի, - շարունակեցին երեխաները, - ու կրիայի, ու մեր Կոկոյին:

- Այ քեզ բա՛ն, - բացականչեց հայրիկը, - կարծում էի՝ մի նկար եմ գնել, բանից պարզվում է՝ մի քանիսը: Մրան են ասում՝ շահավետ գնում, - ու քթի տակ ուրախ-ուրախ սուլելով՝ քայլերն ուղղեց տուն:



Հեռավոր Կղզու սովորույթները

Ըստ **Վարդան Վարդանյան** համանուն սցենարի, Հայաստան
Թեմա՝ **Սիջմաակութային փոխըմբռնում**

Կոկոն վերադարձել էր հեռավոր կղզիներից, հազել էր տարօրինակ, վառվուռն գույներով շորերը, նստել էր տիկին Հրուշիկի խոհանոցում, թեյում էր ու վրդովված խոսում:

- Չէ՛, պատկերացնում ե՞ք: Ոչ մի ուրիշ մշակույթ չեն ուզում հարգել: Է՛լ պատմել եմ, է՛լ բացատրել, է՛լ համոզել: Կղզուց բերած տարազը հազել էի ու իրենց ժողովրդական պարն էի պարում՝ չհասկացան, - բողոքում էր իր ընկերներից:

Տիկին Հրուշիկը զարմացած գլուխն էր օրորում.

- Ի՞նչ ես ասում:

- Բա՞: Սկսեցին վրաս ծիծաղել ու ձեռ առնել: Քուչոն էլ դեռ վիրավորեց, ասաց. «Էդ ի՞նչ թութակի շորեր ես հազել»: Ինձ՝ Սոխակենց Գեղձանին թութակ անվանեց:

- Լավ բան չեն արել, - համաձայնեց տիկին Հրուշիկը, - շատ անշնորհք բան են արել:

- Իսկ դու չբացատրեցի՞ր, որ կղզու բնակիչների տարազն է:

- Բա ի՞նչ արեցի: Բայց ասողին լսող է պետք:

- Հետո՞:

- Հետո՞ ի՞նչ: Ասեցին՝ կղզի-մղզի չգիտենք: Էդ տեսքով որ փողոց դուրս գամ՝ իրենց խայտառակ կանեն:

- Հա՛, - հոգոց հանեց տիկին Հրուշիկն ու Կոկոյին մի քիչ էլ թեյ լցրեց, - խեղճ Կոկո...

- Ես ի՞նչ: Ես իրենց մասին եմ մտածում, որ էդքան անհասկացող են: Տեսնեիք՝ կղզու մարդիկ ի՞նչ հարգանքով էին լսում մեր սովորույթների մասին: Ոչ ոքի մտքով չէր անցնում վրաս ծիծաղել: Էնքան էին հավանել մեր երգերն ու պարերը: Նույնիսկ ինձ հետ պարում էին: Շա՛տ, շատ հյուրընկալ մարդիկ են: Բա ինչ երաժշտասե՛ր...

- Գիտե՞ս, շատ մի տխրիր: Ինձ թվում է՝ մի քիչ որ ժամանակ տաս, կմտածեն ու ամեն ինչ կհասկանան:

Տիկին Հրուշիկի ենթադրությունները, իսկապես, սովորաբար ճիշտ էին դուրս գալիս: Կոկոյի՝ նեղացած հեռանալուց հետո երեխաների տրամադրությունը փչացավ: Երևի պետք չէր Կոկոյին ծաղրել. ընկերներ էին, չէ՞: Համ էլ, Կոկոն ամեն անգամ, ճամփորդությունից որ

գալիս էր, այնքան հետաքրքիր էր պատմում իր արկածները: Իսկ իրենք չթողեցին բերանը բացել ու միանգամից հարձակվեցին վրան: Չէ, լավ չստացվեց:

Ու գլուխները կախ, տխուր նստեցին Ճառի տակ:

- Բայց հեչ էլ վատ երաժշտություն չէր էդ կղզու երաժշտությունը, - առաջինը խոսեց Տիգրանը, - ինձ շատ էլ դուր եկավ. իմ սիրած ռեփի պես բան էր:

«Էս Տիգրանին թողնես՝ առավոտից իրիկուն ռեփից կխոսի», - մտածեց Գրիգորը, բայց բան չասեց:

- Հա՛-հա՛, - հաչաց Քուչոն ու պոչը թափ տվեց, - լավն էր: իմ պարելն էլ եկավ:

- Իսկ ինձ ամենաշատը պարը դուր եկավ: Շատ նազանքով պար էր: Երանի Կոկոն ինձ էլ սովորեցնի, - նրանց միացավ Անին:

«Էս Անիի գլխում էլ մենակ երգ ու պար է», - նորից մտածեց Գրիգորը, բայց նորից լռեց:

- Իսկ ես շորերը շատ հավանեցի, - ասաց Լուսինեն, - սիրուն էին, չէ՞, գույնզգույն..., - հետո մի քիչ լռեց ու ավելացրեց: - Իզուր տեղը Կոկոյին նեղացրեցինք:

Բոլորը լուռ, գլուխներն ավելի կախեցին: Արդեն իրենց արածի համար ամաչում էին: Հետո միասին որոշեցին, որ պիտի գնան, Կոկոյից ներողություն խնդրեն ու բացատրեն, որ ուղղակի երգն էլ, պարն էլ, հագուստն էլ, ախր շատ էին անսովոր, դրա համար էլ, առանց մտածելու ծիծաղել էին, բայց հիմա փոշմանել են ու հասկացել, որ սխալ էին:

- Բայց շատ հետաքրքիր է, չէ՞, - ասաց Լուսինեն:

- Ի՞նչը, - չհասկացան ընկերները:

- Դե՛ ուրիշ երկրների մասին իմանալը. երգերը, պարերը, հագուստը, որտեղ ինչ սովորույթ կա:

Ընկերները լուռ գլխով արեցին, հետո Գրիգորն ասաց.

- Իմացա. որ մեծանամ՝ ճանապարհորդ եմ դառնալու: Կզնամ տարբեր երկրներ, հետո դրանց մասին հետաքրքիր գրքեր կգրեմ, որ բոլորն իմանան:

- Այ քեզ բա՛ն, - զարմացավ Տիգրանը, - բա երեկ ասում էիր՝ մաթեմատիկո՛ս եմ դառնալու:

- Հետո՞ ինչ: Մեկը մեկին չի խանգարում: Հա՛ն մաթեմատիկոս

կլիմեմ, հա՛մ էլ կճամփորդեմ:

- Իսկ ես, - ասաց Լուսինեն, - որ մեծանամ՝ հայտնի խոհարար կդառնամ ու աշխարհի բոլոր ժողովուրդների ճաշերից կեփեմ:

- Ըհը՛, - ոգևորված խրախուսեց Գրիգորը, - ես էլ քեզ կպատմեմ, թե որտեղ ինչ են ուտում:

Իսկ Տիգրանը մտածեց, որ վատ չէր լինի Լուսինեի ճաշարանում մեկ-մեկ ճաշելը: Չէ, ինքը հաստատ էր որոշել՝ երաժիշտ կդառնա ու բոլոր ժողովուրդների երգերը կսովորի նվագել:

- Ի՞նչ ենք կանգնել: Գնացի՞նք՝ Կոկոյից ներողություն խնդրենք, - ընկերներին շտապեցրեց նա:

Կոկոն արդեն վերադարձել էր իր բույնը ու տխուր միտք էր անում, բայց ընկերներին տեսավ, թե չէ՝ տրամադրությունը բարձրացավ:

- Բարև՛, բակաբնակներ, - կատակեց նա՝ ընկերներին ողջունելով, - ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Լուսինեն եղբորն առաջ հրեց, ու Տիգրանը հանդիսավոր ասաց.

- Կոկո՛, ջան, մենք մտածեցինք ու հասկացանք, որ հիմար բան ենք արել: Ի՞նչ կլինի՝ մեզ ներես: Որ ճիշտն ասենք՝ երգն էլ, պարն էլ, շորերդ էլ շատ էինք հավանել, բայց որ մի քիչ անսովոր էր՝ չխոստովանեցինք:

- Ես գիտեի, որ կհավանեք: Լավ, ինչ եղել, եղել է, - մեծահոգաբար ընկերներին ներեց Կոկոն:

- Իսկ էդ կղզու երգերն ու պարերը մեզ էլ կսովորեցնե՞ս, - խնդրեցին աղջիկները:

- Էլ ու՞մ ենք սպասում, գնացինք՝ պարենք, - տեղից վեր թռչելով ասաց Կոկոն ու երեխաների հետ գնաց պարելու համար ազատ տարածք գտնելու:

Այդ օրը մինչև երեկո երեխաները երգում էին, պարում ու Կոկոյի զարմանահրաշ պատմությունները լսում հեռավոր կղզու ու նրա մարդկանց սովորույթների մասին, նաև այն մասին, որ միշտ պետք է հարգել օտար ազգերի սովորույթները:



Ինչ լավ է, որ Տարբեր ենք...

Ըստ **Ջուրաբ Կիկոնեի** համանուն սցենարի, Կրասան
Թեմա՝ **Սիզմապոլիտիկայի փոխընթացում**

1.

Գ

արուն էր: Օրը հրաշալի էր՝ արևոտ, Տիգրանի տրամադրությունն էլ էր հրաշալի: Հաջորդ օրվա դասերն արել էր ու հիմա, նստարանին անհոգ նստած, Կոկոյի հետ շաղակրատում էր: Այսինքն՝ Կոկոն էր շաղակրատում, իսկ Տիգրանը լսում էր նրա պատմությունները հեռու երկրների ու այնտեղի մարդկանց մասին: Շատ հետաքրքիր էր, հասկապես՝ թե ինչ սովորույթներ կան այդ հեռավոր երկրներում: Օրինակ՝ Տիգրանը չէր իմացել, որ հովանոցը, դու մի ասա, շատ-շատ վաղուց Չինաստանում էին հայտնաբերել, իսկ հիմա աշխարհի բոլոր մարդիկ դրանից օգտվում են, կամ որ Ճապոնիայում ծաղկեփնջեր կազմելու հատուկ արվեստ կա, որը ուրիշներն էլ են այսօր սովորել: Տիգրանը լսում էր ու մտածում. լավ է, չէ՞, որ աշխարհի մարդիկ այդքան տարբեր են: Երանի՛ ինքն էլ թռչել իմանար ու կարողանար ճամփորդել: Ինչքան նոր բան կսովորե՞ր: Հետո կգար՝ կպատմեր ընկերներին:

- Ինձ մի հետաքրքիր սովորույթն կսովորեցնե՞ս, - հարցրեց Կոկոյին, - որ բախում խաղանք:

- Խնդրե՛մ, - համաձայնվեց Կոկոն, - օրինակ՝ Աֆրիկայում մի երկիր կա, որտեղ մարդիկ իրար հետ երգելով են խոսում:

- Ո՞նց՝ երգելով, - զարմացավ Տիգրանը:

- Հա, հիմա ցույց տամ, - ու Կոկոն սկսեց ծվլլալ, թե ինչ ուրախ է, որ Տիգրանի պես ընկեր ունի, իսկ Տիգրանը ուրախ է, որ իր նման սիրուն ծիտիկի հետ է ընկերություն անում:

Տիգրանը հրճվեց. ինչ հավես է՝ սովորական բաներ են ասում, բայց երգելով:

- Լավ սովորույթ է, - ասաց նա:

- Համարյա բոլոր սովորույթներն էլ լավն են, - գիտակի տեսքով գլխով արեց Կոկոն:

2.

Քուչոն բակի անկյունում ռետինե խողովակ էր գտել ու ատամներով քաշքշում էր: Երևի ուզում էր տեսնել՝ համով է՞: Տիգրանը մոտեցավ ու որոշեց նոր սովորույթը նրա վրա փորձարկել:

- *Ողջուն, բրդուր իմ ընկեր,*
- Ռետինը մի քաշքշի,*
- Ոսկոր հո չի՞, դա մի՛ կեր,*
- Թե չէ՝ փորդ կցավի:*

Տիգրանը հույս ուներ, որ Քուչոն էլ կհրճվի ու կհարցնի, թե որտեղի՞ց է սովորել մտքերն այդքան գեղեցիկ արտահայտել: Բայց Քուչոն, չգիտես ինչու, նեղացավ:

- Ի՞նչ հիմար երգ ես երգում, - ասաց նա:

- Բոլորովին էլ հիմար երգ չի, - պատասխանեց Տիգրանը, - եղ տեսակ սովորույթ է:

Ու Կոկոյից լսածը պատմեց: Մեկ է՝ Քուչոն շարունակում էր նեղացած մնալ. թող իրեն հիմարի տեղ չդնի: Կարող է՞, ինքը ռետինե խողովակը ոսկորից չի տարբերում:

Այդ պահին Լուսինեն էլ բակ եկավ: Մայրիկը մի սիրուն գլխարկ էր նվիրել, ու Լուսինեն դուրս էր եկել, որ ընկերներին ցույց տա: Տիգրանը մոտեցավ նրան ու երգեց.

- *Գլխարկովդ աննման*
- Ծաղկանոցի ես նման...*

Լուսինեն ասշատ՝ եղբորը նայեց. սրա՞ն ինչ ճանճ է կծել: Տիգրանը փորձեց ավելի լավ բան մտածել ու մի անգամ էլ երգեց.

- *Հենց որ Լուսինեն նոր գլխարկ դրեց՝*
- Ամբողջ աշխարհը նրան նախանշեց:*

Լուսինեն որոշեց, որ եղբայրը, երևի, ծաղրում է: Քիչ մնաց՝ լաց լինի, բայց Տիգրանը շտապեց բացատրել, որ չի ծաղրում՝ էդ տեսակ սովորույթ է. մարդիկ իրար հետ երգելով են խոսում: Դեռ խոսքը չէր վերջացրել, որ ջրի հզոր շիթը, քիչ մնաց՝ նրան գետին տապալեր. Քուչոյին վերջապես հաջողվել էր կրծել խողովակը...

3.

- Շատ հետաքրքիր սովորույթ է, - երեխաներին գլխին հավաքած՝ բացատրում էր Կոկոն, - ո՞վ է մեղավոր, որ Տիգրանը լավ չի հասկացել:

- Պատկերացնում եմ՝ ինչեր է երգել, - քնծիծաղ տվեց Գրիգորը:

- Մեկ է՝ ես սովորույթներ չեմ սիրում: Ես սիրում եմ, որ ամեն ինչ սովորականի պես լինի, - ասաց Քուչոն: Նա դեռ մի քիչ նեղացած էր:

- Չէ, ճիշտ եմ ասում, լավ սովորույթ է, - շարունակում էր համոզել Կոկոն, - Տիգրանը կարծում էր, թե պիտի հանգով երգի, դրա համար էլ անկապ բաներ էր ասում: Բայց ոչ մի հանգ էլ պետք չի: Ինչ մտածում ես՝ էդպես էլ երգում ես:

Քուչոն թաթով ականջը քորեց. ինչ ուզում ես՝ ասա, նա համարում էր, որ ամեն ինչ պիտի իմաստ ունենա: Իսկ այս սովորույթը նրան անիմաստ էր թվում: Այդպես էլ ասաց Կոկոյին:

- Ի՞նչ ես խոսում, - գայրացավ Կոկոն, - իհարկե՝ բոլոր սովորույթների մեջ էլ իմաստուն բան կա:

- Օրինակ՝ սրա իմաստուն բանը ո՞րն է, - չէր հանձնվում Քուչոն:

- Ասեմ, - պատրաստակամությամբ պատասխանեց Կոկոն, - օրինակ՝ եթե մեկի հետ երգելով վիճես՝ ուզած-չուզած բարկությունդ գոնե մի քիչ կանցնի:

Չարմանալի է, բայց այս խոսքերը երեխաներին համոզեցին, ու նրանք իրենց վեճը փորձեցին երգելով շարունակել: Իսկապես՝ շատ շուտով բոլորը մոռացան, որ վիճում էին ու, իրենք էլ չնկատեցին, թե ոնց՝ անցան խաղալու:

Երևի, կասեք՝ հետո՞ ինչ, սովորական պատմություն էր: Բայց որ լավ մտածեք՝ կհասկանաք. պատմությունն այն մասին է, որ աշխարհի մարդիկ տարբեր են ու տարբեր սովորույթներ ունեն: Իրար հանդիպելով՝ նրանք սովորում են այդ տարբեր սովորույթներն ու ավելի իմաստուն են դառնում: Մի խոսքով՝ պատմությունն այն մասին է, որ պետք է հարգել ուրիշների սովորույթները: Հատկապես՝ եթե ուզում ես, որ ուրիշներն էլ քոնը հարգեն:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

1. Մեր բալի դասնությունը	3
2. Օգնենք միմյանց	8
3. Ինչդեպ Կոկոն թմի անդամ դարձավ	13
4. Զուշոյի ծննդյան օրը	18
5. ՌՎ է մեղավոր	24
6. Խուզարկուները	30
7. Կոսրված ծաղկամանը	35
8. Պարոզը	41
9. Զնած գեղեցկուհին	45
10. Բակային համերգ	50
11. Արի հաճվենք	55
12. Զաջարի ծովափենի գանձերը	62
13. Կախարդական ծրարը	69
14. Հովանոցը	75
15. Ես էլ եմ ուզում կախարդել	79
16. Օդադարուկը	84
17. Երեխաների իրավունքների դաճադանը	89
18. Գաղսնիքը	93
19. Իրավունք ունեն	96
20. Ուրվական ենք փնտրում	102
21. Տոնը	107
22. Լուսինեի երազը	110
23. Որ լույս լինի	115
24. Մոլորակի օրը	119
25. Գլոբուսը	124
26. Ամենասիրուն բակը	128
27. Նվերը	132
28. Եկե՛ք դայնամավորվենք	136
29. Կար չկար, մի ֆաղափ կար	141
30. Վարակիչ Զուշոն	146
31. Հաճություն բաժակը	153
32. Աստղը	158
33. Ամոլիկը	162
34. Հեռավոր կղզու սովորույթները	167
35. Ինչ լավ է, որ սարքեր ենք...	171

ՄԱՆԿԱԿԱՆ
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Նկարիչ-ձևավորող՝ Գագիկ Բաբայան
Համակարգչային ձևավորող՝ Արամ Ուռուսյան
Խմբագիր՝ Նունե Հարությունյան
Վերստուգող սրբագիչ՝ Երազիկ Գրիգորյան

Մանկական ռասմկաճմների ժողովածու



«Սեյվ դը Զիլդրեն ֆեդերեյսն ինկ.»

Հայաստանյան մասնաճյուղ
Ագաթանգեղոսի 2/ա, 2-րդ հարկ

WWW.savethechildren.org